



ԳՐ. ՔԵՇԻՇՅԱՆ

ԵՄԻ
Ըմբարանի
Հրա










2319

3067



ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԴ

1948

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ

Գրիգոր Քեչիշյանի պատմվածքների այս ժողովածուն իր մեջ ամփոփում է երիտասարդ հայրենադարձ գրողի տարբեր ժամանակներում ու տարբեր երկրներում գրած պատմվածքները:

Ժողովածուի առաջին մի քանի պատմվածքների գրության տեղն ու ժամանակն իրենց կնիքը տեղահայտ դրել են նրա ստեղծագործությունների թե ձևի և թե մանավանդ բովանդակության վրա: Արտասահմանում գրված պատմվածքների հերոսները տառապում են կյանքի տարերայնության մեջ, ճանձրանում օրվա անորոշությունից, ձգտումներ ունեն, բայց դեռևս տարտամ են այդ ձգտումները, որովհետև բացակայում է նպատակի հստակությունը և այդ պատճառով էլ հարուստ չի նրանց հոգեկան աշխարհը: Այդ հերոսների առօրյան տխուր ու ճնշող է, կարոտի զգացումն ու մտերիմի անփոփոդ խոսքն աշտահայտվում են վերացական ձևերով:

Սակայն այն պատմվածքները, որոնք հեղինակը գրել է հայրենիք վերադառնալուց հետո, զգալիորեն տարբերվում են առաջիններից կյանքի ճշմարիտ զգացումով. նրանց հերոսները դիտեն, թե ինչ են անում և հանուն ինչի են անում, նրանք ունեն իրենց ճանապարհը և իրենց որոշակի տեղը հասարակության մեջ, աշխատանքի ու պայքարի սովետական հարուստ առօրյայում:

Ձեռնդեղով և՛ առաջին և՛ երկրորդ պատմվածքները մի գրքույկում, հեղինակն ու հրատարակչությունը նպատակ են ունեցել ցույց տալ օտարության մեջ ապրող և ապա հայրենիք վերադարձած երիտասարդ հայ մտավորականի զարգացումը:

ԼԵՑՈՒՆ ՕՐԵՐ

Սիրելի Սուրեն Արզաւրյանին

Արձակուրդին վերադարձաւ ծխամորձ մը ակռաներուն մէջ սեղմած ու սպանական պեխեր քիթին տակ: Ասիկա կարևոր ու նկատելի փոփոխութիւնն էր: Ժանին կյանքին մէջ կարևոր բան մը պատահած ըլլալու էր: Եւ եթէ ժանը լավ կը ճանչնայի, այդ փոփոխութիւնը կրնար մեկ դրդապատճառ ունենալ:

Դասի ատեն չկրցանք խոսիլ: Ամերիկացի ուսուցիչը սրամիտ ակնարկութիւններ ընելով բաներ մը պատմեց, որոնց վրա ամենն ալելի ինք խնդաց: Ոմանք բաղաճաճարութեան համար ժպտեցան միայն, մինչ առջևի նստարանին վրա նստած աղջիկներեն մեկը, մշուսին կախումներ ըստ երևույթին շատ հետաքրքրական պատահար մը, արձակուրդին պատահած, ու երկուքով իրենց ծիծաղը զսպել կը ջանային:

Դասի պահեն ետք ստեղծեցին, մեր սովորական անկյունը գացինք: Երկու սուրճին հետ ծխամորձ մը և սիկարեթ մը վառեցինք այս անգամ ու կարճ լուսինն մը ետք, ժան ձեռքը սեղանին դարկաւ, ժպիտով մը նայեցաւ աչքերու և՝

— Էհ, ինչպե՞ս գտար փոփոխութիւնը, — հարցուց:

Ժպիտ մը կախվեցաւ շրթներէս: Հարցումը անակնկալ չէր ինծի բնականաբար և պատասխանն ալ՝ իրեն:

— Սպանական պեխերդ լավ են, — ըսի, — քեզի կուտան ալելի հասուն և առնական երևույթ, ծխամորձը կու գա շեշ-

տեղ այդ բոլորը, անոնց վրա ավելցնելով վերջնականորեն մտավորականի քու ամբողջ հմայքը:

Կուրջ ու հանդիսավոր կերպով արտասանված այս խոսքերուն վրա ժան բարձր ծիծաղ մը հանեց, որմե ետք ավելցուցի:

— Բայց թե ինչո՞ւ մեկեն այդ երկուքը միասին եկան վրադ, ասոր պատճառը քեզմե պիտի իմանանք:

Ժան ամթոռը շտկեց: Իր սովորական ժպիտով ծխամորձը տակավին իր անվարժ ափին մեջ սեղմելե ետք պատմելու անհամբեր անձի մը վուժիստութեամբ սկսավ:

— Երբ տուն դացի, տեսա թե նոր ու հետաքրքրական դրացի մը ունեինք: Աղվոր աղջիկ մըն էր, պարզ ու անփորձ: Պզտիկ ժպիտով մը պատասխանեց նայվածքիս (վերջեն հասկացա թե չէր կրնար ժպտելե խուսափիլ), հետո ժամը հարցուց:

«Բնական էր որ հոն չվերջանային մեր հարաբերությունները, այլ ընդհակառակը այդ վայրկյանին սկսեին: Կարճ ժամանակեն բարեկամներ եղանք իրարու: Պատուհանեն ըսավ թե դիս շատ կը սիրեր, ու երկու թևերը իրարմե հեռացնելով ցույց տվավ թե որքան էր ան: Տխրեցավ, երբ ևս նույն ձևը չըրի, ու չըսի թե որքան կը սիրեի դինք...

«Օր մը սենյակս եկավ հանկարծ,— շարունակեց ժան,— ինչպես գիտեն գալ իր նման անկեղծ աղջիկները միայն, ու ևս ընդունեցի անակնկալ բայց հաճելի այդ այցելութունը, ինչպես գիտեն ընդունիլ ինծի պես տղաքը միայն:

«Բարկացավ իրեն ըրած բոլոր գեշութուններուս, իրեն պատճառած տառապանքներուս համար. թե ինչպես մենակ կը թողեի դինք միշտ ու հաճույքիս ետեւն կիյնայի, թե իր մասին չէի խորհեր, թե անշուշտ կը խորհեի այն մյուսին (ո՞ր մեկուն) մասին զոր թողած էի ետեւ, և այլն...

«Բայց երբ բարկացած ըլլալը մոռցավ, պատմեց թաղին մեջ պատահած բոլոր աննշան դեպքերը, որոնց վրա ժպտեցա, երբ ինք կը խնդար ու լրջացա, երբ ձայնը խստութեամբ կը բարձրացներ: Մինչ այդ իր աղվոր մարմինը բազուկնե-

բուս մեջ առած էի արդեն ու իր շատախոս շրթները լռեցնել
կը ջանայի»:

Սուրճը բնական է լրացած էր: Ես սիկարիթ մը ես վա-
ռեցի, իսկ ինք անգլիական ծխախոտով իր ծխամորճը լե-
ցուց: Կոռթյուն մը ծանրացավ մեր վրա: Ծանոթ ուսանող-
ներ ներս մտան, բարե ըսին ու դիմացի սեղանին շուրջ
նստելով շարունակեցին իրենց կիսատ մնացած քաղաքակա-
նությունը:

Պզտիկ սրճարանը աղմուկով լեցվեցավ ու ժան ստիպ-
վեցավ ավելի բարձր ձայնով շարունակել.

— Քաղաքին շրջակա պարտեզներուն մեջ կատարած
մեր պտույտներեն մեկուն ընթացքին ըսավ թե պեխավոր
երիտասարդներուն ավելի կը համակրեր, ու քանի որ զիս
կը սիրեր առանց պեխի, պետք էր որ սպանական պեխեր
ունենայի: Տրամաբանության այս ձևը հոգ չէ թե անտրա-
մաքանական թվի հիմա, կը բավեր, որ ինք հավատարմով ու
ժպիտով ըսեր ինձի ու ես կը համոզվեի:

«Անհոգ ու պտույտներով ապրելու այս ձևը երկար շտե-
վեց սակայն: Նախ անոր համար որ արձակուրդս կը վեր-
ջանար և հեռու... զինք ամուսնության կուգեին: Կար և եր-
րորդ պատճառ մը, ամենեն կարևորը, այն, որ ինք կուգեր
անպայման ամուսնանալ:

— Կավագույնը քեզի հետ ամուսնանալն է, կըսեր,
բայց եթե այդ անկարելի է, ուրիշի հետ ամուսնանալն ալ
լավ է: Միամիտ կերպով, բայց հաստատակամութեամբ ար-
տասանած այս խոսքերը կը բավեին որ վերջանար մեր հա-
րաբերությունը, բայց...

«Իր խոսկապեն օր մը առաջ մեր վերջին ժամադրությու-
նը ունեցանք: Երկարորեն թափառեցանք պարտեզներու մեջ
իրարու ձեռք բռնած, իրար գրկած, կամ իրարմե հեռու,
խուսափելով:

«Արևին մայր մտնելուն հետ պետք էր վերջանար մեր
հարաբերությունը. բայց երբ մութը եկավ, մեր բաժանումը
ալ ավելի դժվար եղավ: Քիչ մը ես ալ հուզված էի կարծես,

բայց չխոսեցանք, քանի որ երկու տարի սպասելու հե-
ռանկարը անորոշ ու դժվար կը թվեր իրեն, իսկ ուսումս
շարունակելը, զանազան խիստ կարևոր պատճառներով
անկարելի ինձի:

«Եվ որովհետև, ի վերջո չէինք կրնար գիշերը հոն անցը-
նել, դանդաղորեն մոտեցանք քաղաքին: Մեկեն ան դեմս կե-
ցավ, ձեռքերով երկու թևերս բռնեց, ու մութին մեջ աչքերս
փնտրելով՝ ըսավ. — Պիտի մոռնա՞ս զիս, իմ շրթներս...

«Հարցումը անտեղի ու անիմաստ էր անշուշտ, քանի որ
իրարմե կը բաժնվեինք բոլորովին տարբեր ճամփաներու
հետևելով: Իրար հիշելու ի՞նչ պետք կար այլևս:

«Բայց պատասխանել անհրաժեշտ էր ու պատասխանե-
ցի: Գիտե՞ս ինչ ըսի. չես կրնար երևակայել. միտքս եկավ
ու ըսի ամենայն լրջությամբ.

«Վաղը առտու իսկ ծխամորճ մը պիտի գնեմ ու ծխեմ
ասկե վերջ: Որքան տառն որ ծխամորճը սեղմեմ ակռանե-
րուս մեջ ու շրթներով զգամ զայն, դիտցիր թե չեմ մոռցած
քեզ»:

Հիմա ավելի արագ կը ծխեր, կարծես փաստել ուզելով
իր ըսածը: Ժանը այդպես հուզված տեսնել զարմանալի էր:
Կը փորձվեի ակամա խորհիլ, թե արդյոք լուրջ զգացո՞ւմ մը
ստեղծվեր էր իր մեջ, երբ մեկեն ինքզինք գտավ ու հին
ժպիտով եզրակացուց.

— Անշուշտ անկե վերջ իրար բարեկեցինք հարգանքով,
երբ հանդիպեցանք: Բայց մեր պատմությունը վերջացած էր
այլևս: Հաճելի արձակուրդի մը հիշատակը՝ միայն այդքան:

Շարունակել այս մասին խոսիլ, և կամ ժանը տարհա-
մոգելու աշխատիլ ավելորդ էր այլևս: Նյութը փոխելու հա-
մար հարցուցի առաջին միտքս եկող հարցումը.

— Տարավերջի պարտականությունդ բնական է վերջա-
ցուցեր ես մինչև հիմա:

— Օհ, վերադարձիս ճամփուն վրա հիշեցի, ու հիմա
դրեթե ուշ եմ այլևս:

Քիչ մը կեցավ ժան, ու աչքին ծայրովը ինծի նայելով
շարունակեց.

— Հիմա մեկը կը փնտրեմ, որ իմ տեղս ընե զայն...
նույնիսկ վճարելու պատրաստ եմ:

Զինք չսեղ ձեռքներով, ըսի.

— Ուրեմն այդպես. սպանական պեխեր, ծխամորճ մը,
հաճելի հիշատակներ ու չսկսված պարտականություն մը.
ահա թե ինչ կը մնա արձակուրդեդ: Ժամանակի կորուստ և
ստպետական սնամեջ պատմություն մը...

Ըսված այս լուրջ խոսքերուն վրա, ժանի աչքերուն մեջ
ու շրթներուն վրա փոփոխություն մը նկատելի եղավ: Ան
սուրճ մը ևս պատվիրեց սպասյակին և դեմքիս նայելով
ըսավ.

— Հայտնի է, որ կյանքի մասին իրարմե տարբեր ձևով
կ'սորհենք:

— Այո', — պատասխանեցի, աչքերուն մեջ շեշտակի նա-
յելով. — կյանքի մեր ըմբռնումները իրարու չեն նմանիր...

Ան նայվածքը խոնարհած էր ցած, սուրճի գավաթին,
պարտվածի տեսքով, ու նոր պատասխան կ'փնտրեր: Բայց
լուռ կմնար:

Հունիս, 1946. Բեյրութ

ԱՂՋԻԿԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Երբ կվերադառնայինք, նորեն մտերմացեր էինք քիչ մը։ Բավական մը՝ քանի որ ավելի հաճախակի մեր ուսերը իրարու կհանդիպեին, մեր ձեռքերը իրարու հպելով կանցնեին ու երբեմն, նույն ատեն, կնայեինք իրարու երկարորեն։

Այս մտերմությունը ալ ավելի շեշտվեցավ, երբ հասնելով տեղ մը, հոն կեցանք երկուքս մեկին։ Լավ ժամեր անցուցեր էինք իրարու հետ, ու հիմա, չէինք ուզեր բաժնվիլ կարծես առանց հստակ իրար հասկացողութեան։ Մանավանդ որ հասեր էինք վերադարձի ճամփուն աշնադիսի մեկ տեղը, ուրկէ այլևս պետք էր որ զատվեինք։

Նայեցանք իրարու երկար՝ հարցնող ու պատասխանի սպասող կրկնակ նայվածքներով։ Հետո կամաց, մեր ձեռքերը իրար սեղմեցին ու կեցան այդպես, կարծես այլևս չբաժնվելու որոշում տված ըլլային անոնք։ Այսինքն մենք, անշուշտ։

Վերջապես ինք խոսեցավ, ձեռքը միշտ ձեռքերուս մեջ, աչքերը միշտ՝ աչքերուս։

— Ինչ որ ըսեմ քեզի հիմա, իմ զգացումներուս, սերիտ անկեղծութեանը մասին, պիտի չհավատաս։ Այս դարուն երիտասարդները բոլոր ասանկ են։ Ոչ մեկ բանի կհավատան։

— Ատանկ է,— ըսի,— խնդիրը դիտնալն է, թե ինչո՞ւ այդպես եղած են։

— Շատ պարզ,— հարեց ան.— իրենք չեն ունենալ զսրտփոր հավատք մը որեւէ բանի մը մասին, զգացումներու անկեղծութեան չեն ունենար և կհետեցնեն թե բոլորն ալ ա-

տանկ ին: Հիմա դուն, ձեռքերես ամուր մը բռնած, ես, աշ-
քերուս մեջ կնայիս իբր թե մեծ սիրով, բայց ես գիտեմ որ
դուն նույն բանը պիտի ընես ուրիշի մը, քիչ հետո, ուրիշ
փողոցի մը մեջ, կամ նույն իսկ հոս:

Ուղեցի բաներ մը ըսել իրեն: Այն ատեն կխորհի որ
իրավունք չուներ այնպես մտածելու դոնե իմ մասին: Բայց
ան շարունակեց արագ:

— Չէ, մի ժխտեր. չէ մի ըսեր, ես լավ կճանչնամ քեզ:
Եվ դուն լավագույնն ես քու սեռիդ. ապացույց որ քովդ եմ
հիմա, ձեռքդ ձեռքերուս, աչքդ աչքերուս:

Մեկը անցավ, տարօրինակ նայվածքով շափելե հետո
մեզ, երկուքս: Ան շարունակեց.

— Սուրեն, կուզեմ որ դուն հավատաս ինծի: Քեզմե ոչ
մեկ բան կը պահանջեմ: Գիտեմ, որ անօգուտ է քեզի խոսիլ
ու հուշներ դնել վրադ: Միայն կուզեմ, որ գիտնաս թե ես
քու մյուս ճանչցածներեդ չեմ, որ ես քեզ կսիրեմ, ամուր ու
զորավոր սիրով մը: Միայն հավատա ինծի:

Երկար ատեն չխոսեցանք, բայց չբաժնվեցանք ալ: Կե-
ցանք այնպես ինչպես էինք:

Մեկեն անիկա բացավ ձեռքի սլայուսակը, մեջեն փոք-
րիկ տետրակ մը հանեց:

— Ասիկա, — ըսավ, — օրագիրս է, զոր ոչ ոք կարդացած է
մինչև հիմա: Կկարծեի, որ ոչ ոք ալ պիտի կարդար, թեև
միշտ կվախնայի որ պիտի տկարանամ քեզի հանդեպ: Եվ
հիմա քեզի կուտամ ասիկա, մինչդեռ, միայն քեզի, ամուսնու
քեզի պետք չէր տայի: Հոգ չէ: Կերևի ասիկա պետք էր որ
ըլլար: Ի՞նչ ընեմ: Վայրկյան մը առաջ բնավ չէի խորհեր
քեզի տալու մասին: Առ, քուկդ թող ըլլա, մի վերադարձներ
դայն ինծի և մի խոսիր անոր մասին: Պիտի աշխատիմ
բուժվիլ այս հիվանդութենես:

Քիչ մը լռութենե հետո, որուն ընթացքին մենք միշտ
իրարու ձեռք սեղմեցինք ուժով և իրարու աչքին նայեցանք
տեսակ մը, անիկա ըսավ մեկեն.

— Եվ հիմա մնաս բարով: Կհուսամ անգամ մըն ալ

չինք տեսնվիր, եթե ես չուզեմ, քանի որ գիտեմ, թե դուք քնա՞վ չես ուզեր: Ես ալ պիտի աշխատիմ չուզել:

Զեռքի դորսովոր սեղմում մը: Զինք չձգելու փորձ մը չեմ գիտեր ինչու, բնական, վայրկենական, և հետո իր հեռանալը դիտեցի հանդարտ:

Երբ ինք անտեսանելի դարձավ, ու ես կապարաստվելի հեռանալ մեկեն հիշեցի որ ձեռքս տետրակ մը կար: Բնազդով մը բացի առաջին էջը: Շատ պարզ նախադասություն մըն էր, միայն մեկ նախադասություն, որ հուզեց զիս իրապես:

«Սիրելի Սուրենին՝ թեև գիտեմ որ չի սիրեր զիս»...:

Զշարունակեցի էջերը թղթատել: Գոցեցի տետրակը ու ափիս մեջ սեղմած քալեցի դանդաղ: Խորհեցա վախժով որ կնոջ հոգի մը պիտի բացվեր հիմա, ամբողջությամբ մերկ, առանց որևէ պաճուճանքի: Ու վախցա այս գաղափարին, հակառակ որ այնքան ուզեր էի, կուզեի տակավին՝ ճանչնալ զայն: Ես հիմա վստահ էի որ ան ամեն բան ըսած էր այդ փոքրիկ տետրակին փոքրիկ էջերուն մեջ, ու վախցա այս գաղափարին:

Քիչ հետո, երբ փողոցներ իրարու հաջորդեցին, միտքս հանդարտեցավ քիչ մը: Ինչո՞ւ սակայն «Սիրելի Սուրենին» երբ, «թեև գիտեմ որ չի սիրեր զիս»... ինչո՞ւ, ինչո՞ւ...

Թերևս այս «ինչու»ներուն պատասխանը տետրակին մեջ էր: Այդ փոքրիկ, ափիս մեջ կորսվող տետրակին մեջ: Ուրեմն պետք էր կարդալ զայն շուտով: Մատներս բռնեցին տետրակին ծայրերը, բանալու դիրքին մեջ, բայց այդպես կեցան: «Պետք չէ աճապարել, աճապարանքը կրնա շատ բան կործանել»: Հիշեցի որ մեկը այսպես գրած էր ինձի: Եվ հակառակ որ խոսքերու շհետեւելու լավ ունակությունը ունիմ, այս խոսքը իմ ընթացքիս վրա ազդեց. ավելի այն մեկը վոր հիշեցի իր խոսքին առիթով, պատճառ եղավ որ խորհիմ իր վրա և այսպիսով ժամանակ անցավ: Հոգ չէ թե որքան քիչ: Ես չբացի տետրակը:

Մինչև տուն չբացի զայն: Գրպանիս մեջ դրի, սիկարեթ մը վառեցի, ու դիտեցի անցնող բոլոր կիները իրենց դի-

մացեն ու հաւեն: Տունը՝ դուռը ետեւս դոցեցի, նստա պաշ-
տոնապետ սեղանիս առջև, արմուկներս սեղանին վրա դրի,
ու բացի տետրակը: Առաջին էջեն ետք, քիչ մը վախով երկ-
րորդը բացի: Ի՞նչ էր այս սակայն: Նախ շնասկացա թի ի՞նչ
էր եղածը: Աչքերս շփեցի լաւ մը: Ոչ, սխալ չէր: Էջերը
դարձուցի արագ: Ամեն տեղ նույնն էր: Առաջին էջեն դատ,
տետրակը ամբողջութեամբ սղագրութեամբ գրված էր: Ամ-
բողջ ծայրե ծայր:



Առտուն երբ արթնցա, առաջին բանը որ միտքս ինկաւ՝
տետրակը եղաւ, ու ըսի, — լաւ որ չկրցա կարդալ: Լաւ որ
չուժեցի այն դադտնիքը որ դժբախտ կընե մարդը, ինչպէս
կըսեն: Օրհնյալ ըլլաւ դուն, որ այդ խաղը խաղացիր ինձի:

Ռեմար, 1942, Բեյրութ

ԱՆՍԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վահան հանձն շառավ մինչև հանրակառքի կայարանը քալել ու սպասեց որ ան մինչև իր դռքը գար: Մեր շրջանի երիտասարդ մը հատկանշող այդ գիծը ունեւ իր մեջ: Կսպասեր որ իր քով գար ամեն ինչ, կսպասեր որ այսինչը այնինչ բանը ըներ իրեն համար, կսպասեր որ, և այսպես...

Այս պարագային հանրակառքը ստիպողաբար եկավ իր առջև ու ինք կախվելով անոր սանդխամատեն վեր ելավ: Բավական ցուրտը ու բարակ անձրևը որ կտեղար տրդելք եղան իրեն, որպեսզի դուրսը կարենար ոտքի կենալ ու սիկարեթին մուխին հետ դիտեր փողոցը: Իր ամենեն շատ սիրած բաներեն մեկը մութ փողոցն էր իր աղմուկով ու իրարու զարնվող մարդերով: Հետաքրքրութուն մը ունեւ, տարօրինակ, անբացատրելի և սակայն ունեւ: Ուրեմն ներս մտավ:

Առաջին բանը որ տեսավ Ռոզան էր, որ իրեն կնայեր այնպես, որ կարծես զինք կսպասեր: Անժանոթներ չէին, ու ասիկա ավելի պատճառ մը եղավ որ ինք շուգեր անոր դիմացի պարապ աթոռը գրավել ու ասիկա ավելի մեծ պատճառ մը եղավ որ ինք միայն այդ աթոռին վրա կարենար նստիլ և ավելին՝ անոր ձեռքը բռներ ու ըսեր քիչ մը ժրպտուն:

— Ի՞նչպես եք, օրիորդ, հանդեսը հավնեցա՞ք:

Աղջիկը անակնկալի եկած էր արդեն: Նախ՝ տղուն հանրակառք ելելը մեկեն, իր դիմացը նստիլը, իր ձեռքը բռնելը և իրեն հետ խոսիլը այդպես, բաներ էին, որոնք անշուշտ անակնկալի պիտի բերեին զինք, քանի որ...

Եւ մասիկա, հակառակ որ լաւ ծանոթներ էին, հինէն բարեկամներ: Նախակրթարանէն նույնիսկ: Իրենց շնանշցած մեկ զգացումն էր որ մեծցած էր հետզհետե ու ինքզինք իրենց սորվեցուցած: Այդ սերը պարտադրած էր ինքզինք, երբ Ռոզան օտար երկիր կերթար: Ու իրիկուն մը, երկարատեւն վարանելէ ետք իրարու ձեռք էին բռնած ու ըսած, կամ թե շրսած ալ հասկցած, ըմբռնած այն բոլորը, զորս ամիսներ, տարիներ նույնիսկ իրարու ըսել ուղեր էին:

Եւ բաժանումը եղած էր անճիգ: Որովհետեւ չէին համարտացած անոր, կրկնած, պնդած թե իրենք միայն մարմինով քաժնված պիտի ըլլային, թե պիտի գրեին միշտ իրարու: Բաժանումի տարիներ տեղը երկար միջոցին, Վահան մեկ անգամ միայն գրած էր, իսկ աղջիկը բնավ:

Ու երբ Ռոզան վերադարձեր էր, Վահանը գտեր էր այնպեա, ինչպեա պետք էր որ գտներ դեպքերու բնական բերումով, այսինքն փոխված, անտարբեր, քաղաքավար, դուսալ:

Ամիսներ անցեր էին, իրարու հանդիպած էին, բարեւած, ժպտած երբեմն և սակայն անցեր էին իրարու քովեն, չէին կեցած, չէին խոսած: Վահան տեսնել կարծեր էր երբեմն, պզտիկ դանդաղեցում մը անոր քայլերուն մէջ, կենալու փորձ մը, բայց ինք քալեր էր, քանի որ ոչ մեկ անհրաժեշտ քան գտեր էր ըսելու:

Նույնը չէր խորհած աղջիկը: Անիկա բաժանումի երկար միջոցին իսկ նույնը չէր խորհած: Եւ օր մըն ալ կեցեր էր այլեւ անոր դիմաց ճամփուն վրա ու ըսած, արագ:

— Վահան, կուզեմ քեզի հետ խոսիլ, այլեւ չեմ կրնար դիմանալ:

Հակառակ որ Վահան գիտեր թե ինչի մասին պիտի խոսէին, հակառակ որ կրնար մեկ խոսքով վերջացնել ու ըսել թե անօգուտ էր խոսիլ, հակառակ որ գիտեր թե անիմաստ տեսակցութիւն մը պիտի ունենային, չէր մերժած: Զէր մերժած փաստելով անգամ մըն ալ սովորական տղու իր նկա-

բազիրը որ պարտալ հաճուլք մը ու անիմաստ գոհացում մը
կատանար աղջիկի մը հետ ժամադրվելի:

— Ու խոսած էին իրարու հետ: Ավելի ճիշտը քալեր էին
երկարորեն իրարու քովն, առանց կարենալ խոսելու: Վա-
հան ըսելիք շուներ արդեն, իսկ աղջիկը անոր լուսթյունը
ամենն աերձախոս փաստը նկատելով անոր զգացումներուն
շորության, անոր պաղության, ավելի լավ համարած էր լռել:
Ու այսպէս, քալած էին երկարորեն, քաղաքն դուրս ելած
ու ետ եկած մինչև այն տեղ, ուրկե ճամփա ելեր էին հան-
րակառքն իջնելի ետք:

Այդպէս բաժանում մը ավելի լավ էր երկուքին համար
ալ, մանավանդ աղջիկին: Եվ սակայն Վահան սովորական
տղա մըն էր, մեկը, որ կուզեր իր ուժին ազդեցութեանը
տեսնել ու անով հպարտանալ: Անիկա հարցուց.

— Ռոզա, կարծեմ ինձի բան մը պիտի ըսեիր:

Աղջիկը ավելի մյուս կողմ նայեցաւ: Վահան տեսաւ
անոր դեմքին կարմրիլը: Քիչ հետո սակայն, երբ ան գտավ
ինքզինք, ըսավ.

— Այո, քեզի բան մը պիտի ըսեի երբ հոս չէինք եկած
տակավին: Հիմա կնախընտրեմ բան չըսել քեզի ու բաժնվիլ
այսպէս:

Եվ սակայն Վահան այդ նրբութեաններուն մասին մտա-
ծելու վիճակին մեջ չէր: Անիկա ըսավ.

— Ես ալ կնախընտրեմ գիտնալ:

Այն ատեն Ռոզա վերջին ճիգ մըն ալ ըրավ, շրթները
սեղմեց ուժգին ու ըսավ. — Լավ, բաժանումն առաջ մենք
այսպէս չէինք խոսել ինչպէս հիմա: Այն ատեն դուն ուրիշ
տղա մըն էիր ու թերևս ես ուրիշ աղջիկ մը: Քեզի հետ խո-
սիլ ուզեցի հուսալով, որ կրնայինք հինին պէս ըլլալ: Ես
բնավ չդադրեցա քու մասիդ խորհելի, քեզ իբր ապավին ու-
նենալի իմ գովարին վայրկյաններու:

— Անոր համար է որ շատատեսիանցիր նամակիս:

Տղուն ձայնին մեջ քիչ մը վիշտ կար կարծեա ու քն-
ըրածի պէս կխոսեր: Աղջիկը փորձեց արդարացնել ինքզինք.

— Անոր համար փոխվեցար:

Լուսթենե մը ետք, տղան՝ շեշտին մեջ քիչ մը մանկա-
վարժություն ու հոգեբանություն, պատասխանեց.

— Անոր համար չէր, և սակայն անիկա ազդեց ան-
շուշտ: Երևակայե, որ իմ տարիքիս ամենեն փոթորկոտ շրջ-
անին, երբ այնքան հարձակումներու ենթակա կրկա-
տասնյոթը տարեկան տղա մը, դուն քովս չէիր, դուն հեռու
էիր ու նամակիս չէիր պատասխաներ: Ու եղավ այն, որ
բնական էր, որուն չէի կրնար արգելք ըլլալ:

— Ըսել կուզես...

— Ըսել կուզեմ թե ուրիշ մը սիրեցի, թե ուրիշ մը կսի-
րեմ հիմա...:

Անակնկալ, զորավոր ու քիչ մըն ալ կոշտ ձեռով ըսված
այս խոսքը կեցուց երկուքն ալ ու անոնք իրարու չնայե-
ցան:

Հետո քաղցին դանդաղ, առանց խոսելու: Բաժանումին,
Վահան անոր ձեռքերը իր ձեռքերուն մեջ առնելով ըսավ.

— Եվ սակայն կրնանք իրարու բարեկամներ մնալ
միշտ:

Աղջիկը շրթներուն ծայրերով հաստատական ժպիտ մը
ըրավ: Բայց ամեն անգամ որ հանդիպեցան իրարու, ճամփա-
փոխեցին երկուքն ալ, խուսափեցան իրարմ:



Հիմա դեմ դիմաց նստեր էին հանրակառքին մեջ: Այն
օրեն ի վեր առաջին անգամ ըլլալով այդքան մոտ իրարու:

Հանրակառքը խճողվեցավ շուտով. անոնք ստիպվեցան
ալ ավելի մոտենալ իրարու: Երբ տղուն ծունկերը դպան աղ-
ջիկին ծունկերուն, անիկա շխուսափեցավ: Այդ հպումեն
ետք անոնք նայեցան իրարու աչքին մեջ, ժպտելով իրարու:

Երբ հասան հոն, ուր տղան պետք էր որ իջներ, աղջիկը
ըսավ.

— Հոս պիտի իջնես այլևս:

Ու տղան պատասխանեց.

— Կրնամ ավելի հեռուն իջնել:

Աղջիկին տունեն երկու կայարան առաջ վար իջան ու քաղեցին մութին մեջ: Մազվող անձրևը լավ կազդեր երկուքին վրան ալ: Նախ անոնց ձեռքերը իրարու հանդիպեցան բախտով, ու շղատվեցան իրարմե սակայն: Հետո ուս ուսի քաղեցին, ու իվերջո տղան իր թևը անցուց աղջիկին մեջքեն: Այդպես քաղեցին մինչև անոնց տունը:

Ասիկա այն վայրկյանն էր, երբ կրնային վերջնականապես միանալ իրարու, ապրիլ հին երազով, ըլլալ հին խենթ տղան ու աղջիկը: Նվ կամ կրնային բաժանվիլ վերջնականապես ու ալ չխոսիլ իրարու հետ, շտեմնել զիրար, իրարու անձանոթներ ըլլալ:

Այդ վայրկյանին երբ վահան դրկած էր աղջիկը, իր կուրծքին սեղմած, համբուրելու շատ մոտ, աղջիկը հեռացուց գլուխը ու ըսավ հստակ, գիշերվան լուսթյան մեջ ալ ավելի հստակացած ձայնով.

— Մյուս աղջիկը չե՞ս սիրեր այլևս...

Վահան կեցավ մեկեն: Իր թևը սահեցավ վար աղջիկին անութին տակեն ու ըսավ խեղդուկ ձայնով մը զոր կրկնելու ստիպվեցավ:

— Հիմա դնա քնացիր հանգիստ, հետո կխոսինք երկար...

Անշուշտ ալ շտեման զիրար ու չխոսեցան բնավ իրարու հետ: Ա՛լ բնավ չխոսեցան իրարու հետ:

3067

ՓՈՂՈՅԵՆ ԿԱՆՅՆԻՆՔ

Ընկերս ու ես փողոցեն կանցնինք: Մենք թե թեի շենք անցած, ցույց տալու համար մեր բարեկամությունը, ինչպես կրնենք ամանք: Մենք կքալենք քով քովի, մեր ձեռքերը մխրձած ուժգնորեն մեր գրպաններուն մեջ: Մեր ուսերը կդպին իրարու հաճախ, և ասիկա գոհունակությունով մը, ուժով մը, ուրախության, հպարտության զգացումով մը կլեցնեն մեզ:

Չմեռ օր մըն է, լուսամար եղած մեծ քաղաքի մը մեծ երթևեկ ունեցող փողոցեն կանցնինք: Եվ անշուշտ մարդերու հզարնովինք ու ներողություն կըսենք զանազան լեզուներով, քանի որ շենք կրնար գիտնալ թե, անժամոթի մը հետ ո՞ր լեզուն գործածելու է հոս՝ արևելքի միջազգայնացած այս քաղաքին մեջ:

Հանկարծակի սկսող անձրևը պատճառ եղավ որ զարմանքով իրարու նայինք ու ընկերս ըսե իր այնքան անգամ կրկնած խոսքը.

— Չես գիտեր ե՞րբ անձրև պիտի դա այս երկրին մեջ: Երթևեկը սաստկացավ մեկեն: Ինչպես միշտ, վտանգին հասնելեն հետք մարդիկ վազել սկսան: Եվ եղավ որ աղջիկի մը զարնվիմ ուժով: Անոր ֆրանսերենով ըսված.

— Օհ, աստված իմ, ինչ վայրի է-ին ես ըսի մերենաբար, ֆրանսերեն.

— Պարզոն, օրիորդ, ձեր տճաղարանքը և մութն էր պատճառը:

Անիկա նայեցավ ինձի արագ նայվածքով մը: Մութին մեջ իր աչքերուն փայլը հազիվ կտեսնեիր, տարօրինակ փայլ մը: Ու ավելցուց, այս անգամ անկեղծ.

— Ոչինչ, հոգ չէ,—և ավելի բարձր,—նորմանտի հյուրանոցը պիտի երթանք չէ՞, սիրելիս,—ըսավ քովի երիտասարդին:

Ես ձեռքս գրպանս դրի նորեն ու մենք քաղցինք դարձյալ ուս ուսի, բարեկամիս հետ:

Անձրևը մեղմացավ շուտով: Եվ ընկերս որ քաղաքական շատ լուրջ խնդիրի մը մասին կխոսեր, նյութը փոխեց.

— Բոլորն ալ ասանկ են,—ավելցուց:—Մեր աղջիկները բոլորն ալ փայլուն սրահներու և պարահանդեսներու սիրահար են: Հարցուր անոր արաք որևէ հեղինակ մը, միջազգային որևէ միտքի հերոս մը ու ան պիտի ժպտի քեզի, անիմաստ, ու շատ իմաստալից ժպիտով մը: Տգիտությամբը հպարտացողի ժպիտով:

Լոռեթենե մը ետք, ըսի ցած ու դանդաղ.

— Բոլորն ալ անոնց պես ըլլալու չեն անշուշտ, լավեր ալ ըլլալու են:

— Այո, ըսավ, ես կճանչնամ մեկը, կճանչնայի մեկը որ չկա հիմա այլևս, և որ սակայն ասանկ չէր, բնավ ասոնց պես չէր:

Լռեց: Մենք շարունակեցինք քալել մեղմորեն տեղացող անձրևին տակ, ապավինած մեր վերարկուներուն: Ընկերս խոսեցավ, ձայնին մեջի հուզումը կլլելե ետք, քիչ մը ավելի պաղարյուն:

— Այո, Պերճ, ես կճանչնայի մեկը զոր կսիրեի ու ան ալ կսիրեր զիս: Անիկա տարբեր էր մյուսներեն: Զինք սիրելու համար չէր որ անիկա տարբեր կթվեր, այլ ես զինք սիրած էի, մյուսներեն տարբեր ըլլալուն համար:

Զվարթ աղջիկ մըն էր, քիչ մը շատախոս, սիրահար գիրքի ու գիրի, հայրենիքի ու ազատութեան: Անտառին մեջ մենք բարձրաձայն գիրք կկարդայինք իրարու: Քաղաքին դուրս տարածվող անտառի ծառերեն շատերը մեզ իրենց շուքին տակ տեսած էին շատ անգամ:

Անտառին արահետներուն մեջ մենք վիճած ենք այն ճանապարհին մասին զոր մեր հայրենիքը պետք էր որ-

դեպքեր: Անոր ապագային, ունենալիք ազատութեան ու բե-
րելիք բոլոր բարիքներուն մասին: Ու կրքոտ կալատասխա-
ներ ինք, երբ համաձայն շրջար ըսածներուն, երբ վտան-
գավոր ու ապարդշուն նկատեր իմ ծրագիրներս: Անոր աշ-
քերը ինչպես կ'փայլէին, ու որքան հավատքով կ'լեցվէր ձայ-
նը երբ իր գաղափարներուն ու իդեալներուն մասին կ'սո-
սեր: Անիկա տարրեր էր բոլոր մշուսներէն ու մենք կսի-
րեինք իրար:

Փողոցները կ'հաջորդէին իրարու դանդաղորեն: Անձրեւ
գալուն պես, մեկնած էր արագ: Արաբ ընկերս ինծի շէր
նայեր բնաւ. աշքերը կ'ստափակ, հիշատակի մը նայելով
կշարունակեր ցած ձայնով.

— Օր մը իդուր սպասեցի: Մեր սովորական օրն էր ու
ան անպայման կուգար: Մինչև ուշ ատեն չկրցա հեռանալ:
Սպասումի այդ կարճ ժամերն իսկ, չափազանց երկար
կ'թվէին ինծի: Հիմա, երկու տարի է չեմ տեսած զինք... ու
տարիներ պիտի անցնին այսպես առանց իրեն:

Արցունքը դուրս չելավ աշքերէն, ու ընկերս կ'լլեց վայն:

— Մյուս օր երկտող մը իրմե, իմաց տվավ որ հիվանդ
էր: Անմիջապես քովը գացի: Ծանր էր. շատ ծանր: Նախորդ
գիշեր հեռավոր թաղ մը գացած էր, գաղտնի ժողովի մը:
Բացատրած էր հարյուրավոր բանվորներու և բանվորուհի-
ներու մեր պայքարին իմաստն ու ուղղութիւնը: Յուշ էր
տված առնվելիք քայլերը, աշխատած հստակ ընել ամեն ինչ
անոնց համար: Հետո ոստիկաններ էին եկած: Եղած էր
խառնիճադանճ: Աշխատած էին բռնել զինք, ուրիշներու
կարգին: Կրցել էին փախչիլ, բայց մնացած էին քաղաքէն
դուրս: Անձրեւը եկած էր հետո: Բեյրութի հորդ անձրեւը:
Ստիպված քաղաքէն դուրս անցուցած էին գիշերը: Ընկեր-
ները աշխատած էին պատսպարել զինք, բայց... սաստիկ
մսած էր:

Իմ բերած բժիշկս ոչինչ կրցավ ընել, Շուտով կանցնի
րսով, դրամը առավ, թուղթին վրա բաներ գրեց ու գնաց:
Հետո, ընկերները դրամ հավաքեցին, բժիշկ բերին, հիվան-

դանոց տարինք... բայց ուշ էր արդեն: Շատ ուշ: Երբ պիտի բաժանվեինք, երբ զգաց թե վերջնական բաժանումի ժամն էր հասեր, ձեռքս սեղմեց իր կուրծքին ու ըսավ:

— Իմ մասիս շատ մի խորհիր, Ֆուլատ, հայրենիքիդ, մեր պայքարին ու բոլոր մարդերուն տուր սերդ: Ատիկա գիտնալով ես հանդարտ պիտի ըլլամ: Երբեմն միայն, շատ քիչ անգամ հիշե դիս: Այսպեսով դուն ալ քիչ կտառապիս...

Ծովուն դիմաց հասեր էինք հիմա: Մեծ, աղմկոտ ու սև ծովուն դիմաց: Հովը մեր մազերը կցրվեր, մեր վիզեն ներս, մեր կոնակն ու կուրծքը կսողոսկեր, ցուրտ ցնցումներ պատճառելով: Եվ մենք կկենայինք ուս ուսի, անխոս, նույն նյութին շուրջ մտածելով, նույն վիշտեն տառապելով: Մենք երկու հոգի էինք որ միացած էինք, հակառակ մարդերու դրած այն մեծ տարբերություններուն, որոնց միջոցով կուզեն զատել մեզ իրարմե, բոլոր մարդերը իրարմե: Մենք մեր միությունով, երկու հոգիի միությունով զորավոր էինք, քանի որ կրնայինք նույն տառապանքը ապրիլ, նույն վիշտը զգալ:

— Դառնանք,— ըսի, ու դարձանք:

Անիկա շարունակեց իր պատմությունը: Չափեն ավելի դանդաղ կքալեինք հիմա: Մեր քովեն մարդիկ տուն կաճապարեին. գործե դարձողներու խումբեր, որոնք վայրկյան մը առաջ կուզեին ազատիլ անձրևեն ու ցուրտեն:

Մեկեն ընկերս.

— Պերճ,— ըսավ,— նայե, հայերեն կխոսին, ի՞նչ կըսեն:

Իր ըսած կողմը դարձա: Երիտասարդ աղջիկ մը ու կին մը կքալեին դանդաղ: Քիչ մը գեր այդ կնոջ ոտքը կցավեր կերևի: Իր աջ ոտքը կքաշեր կարծես: Իր քովի շատ նիհար աղջիկը հյուժած երևույթով մտիկ կընէր կինը որ կխոսեր շարունակ:

— Այսօր տնօրենուհին բարկացավ նորեն: Եթե արագ չես կրնար աշխատիլ, մի ընէր, ըսավ: Ի՞նչ կընամ ընել սակայն, Աննիկ, դուն ըսե, աղջիկս: Ոտքս չափեն ավելի կցավի: Ու ստիպված եմ ամեն օր երկու անգամ ժամ մը քալել, և գործս ոտքի վրա է ամբողջ օրը: Խնդրեցի իրմե, աղաչեցի

որ նստած ընկիր գործ մը տար ինձի. ի՞նչ ըսե կհամնիս.
«Եթե չես կրնար, մի ըներ, ունեցած գործերնիս այս է, զոր
լավ չես ըներ արդեն»:

Խեղճ ձայն մը ուներ անիկա, քիչ մը հարբուխ եղած:
Ընկերս անոնց ոտքին շափը պահեց ու հակառակ որ մեկ
բառ չէր հասկնար, զգաց որ տխուր պատմութիւնն մըն էր:

— Գոնե գործ ըլլար միշտ, հոգ չէինք ըներ, — ըսավ աղ-
ջիկը. — գոնե ամեն օր աշխատեինք:

Այնքան մտահոգութիւնն կար ձայնին մեջ, այնքան վախ
ու անապահովութիւնն:

Ընկերոջս ըսի թե ինչ կըսեին ու քալեցինք անխոս,
նայելով աճապարող, վաղող մարդերուն, ինքնաշարժերուն,
որոնք լուսամար ըրած էին և խոնված, իրարու ելած մար-
դերով հանրակառքերուն:

— Նորմանտի երթանք, — սիրելիս, — ըսավ ընկերս մեկեն,
կծու, զսպված, շոր ձայնով մը ու ավելցուց քիչ ետք.

— Եվ սակայն միշտ գործ պիտի չըլլա այս աղջիկին,
քանի որ շուտով հոգնի պիտի ու չկարենա արագ աշխա-
տիլ: Ամեն օր երկու ժամ քալել ետք, ոտքերը պիտի ցամփն
անշուշտ, քանի որ չցավելու ոչ մեկ պատճառ պիտի ունե-
նան և տնօրենուհին իրավամբ պիտի բարկանա:

Մենք փողոցեն կանցնինք հանդարտ, ու աճապարող
մարդերու կզարնվինք: Լուսամար գիշերով, մաղվող անձրևին
տակ, մեծ քաղաքի մը մեծ երթևեկ ունեցող փողոցեն
կանցնինք, մեր ձեռքերը մեր գրպաններուն մեջ ուժգնորեն
մխրճած, ու ընկերս կկրկնէ, իր շոր ու կծու շեշտով.

— Նորմանտի երթանք, սիրելիս...

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Սեղանին վրա, օրվան թերթը լայնորեն բացված էր։ Աղջիկին նայվածքը սակայն, անոր անկյունին գամված էր միայն։ Եվ կերակուրը կրնար պաղիլ ուղածին շափ, և մայրիկը կրնար ըսել, խրատել որ պետք էր առողջության շատ ուշադրություն ընել, քանի որ միակ բանն էր որ ունեի ինք, և թե անոր կորուստը վերջնական կորուստ մըն էր իրեն համար։ Այդ բոլորը ճիշտ էին։ Եվ սակայն աղջիկին նայվածքը լայնորեն բացված թերթին անկյունին գամված էր։ Մնացած այդպես։



Ընտանեկան պարահանդեսի մը ընթացքին ծանոթացան։ Եվ համակրեցան իրարու։ Սակայն, տղուն պարի առաջարկը աղջիկը մերժեց, սորված ըլլալով որ այդպես կրնեն, իրմով գրադեցնելու համար տղաքը։ Ու տղան, հակառակ որ մասնագետն էր այս խնդիրներուն, չհասկնալ ձևացուց, ու չհեռացավ աղջիկեն։ Ըսավ անոր թե՝ հազվագյուտ գեղեցկություն մը ունեի, և թե ինք խենթ կըլլար իրեն համար։ Ու աղջիկը, հակառակ իր աղքատության, բան մը որ լրջախոհություն և իրատեսություն կուտա մարդուն, հավատաց անոր խոսքերուն, չգիտնալով որ պարահանդեսի ու կիներու վարպետ այդ տղան իբր արժանիք ունի ունեի, բացի մի քանի ձախողած քննություններէ, անիմաստ հպարտութենէ, և մտավորականի հովեն, զոր անպայման կառնել իր թեկն տակի անխուսափելի գիրքին շնորհիւ։

Եվ տակավին աղջիկը չէր գիտեր նաև թե, անիկա
ձսավորվելը մտավորականներու վարսավիրանոցին մեջ, թե
ակումներուն միջև սեղմված ծխամորճը ընդհանրապես պա-
րտալ կըլլար, և թե հանրակառքերու մեջ բարձրաձայն կխո-
սեր շաբաթվան բոլոր ֆիլմերուն մասին, զանոնք չհավնե-
լով:

Ասոնք բոլորը գիտցավ ետքեն, բայց...

...Պարել մերժեց աղջիկը, բայց չմերժեց միասին
պտուշտ մը, որ վերջացավ երկար համբույրով մը, աղջիկին
խորհիլ տալով այն մյուս տղուն մասին որ ժամերով կըրցած
էր հետը մնալ, առանց համարձակելու զինք գրկել նույնիսկ:
Խեղճը խորհեցավ...

Հանդիպումներ կազմակերպելը դժվար բան չէր: Կբա-
վեր որ երկուքն ալ ուղեին միշտ: Եվ սակայն երկուքն ալ
չուղեցին միշտ: Տղան ուրիշ դործեր ալ ունեւ անշուշտ զոր
պետք էր ըմբռնել աղջիկը: Ի վերջո աշխարհը արևուն շուրջ
կդառնար և ոչ թե...

Եվ տղան դարձավ ուրիշներու շուրջ:

Մինչ աղջիկը ամուսնություն կերազեր:

...Տղուն ուշացումները երկարեցան, ու օր մըն ալ տոմ-
սակով փոխարինվեցավ ան:

«Այսօր պիտի չկարենամ դալ»:

Աղջիկը նայեցավ թուղթի կտորին ու չգիտցավ ինչ ընել:
Հետո քալեց դանդաղորեն, ամենեն անըմբռնելի պատճառ-
ներ հնարելով այդ բացակայության, մինչև որ կըրցավ հան-
դարտիլ:

Երկրորդը այնքան դյուրին չեղավ սակայն: Եվ երբ վեր-
ջին բառը եկավ, «կյանքը կստիպե մեզ, որ չհանդիպինք
իրարու այլևս» աղջիկը շուղեց այս անգամ ալ հավատալ:
Եվ սակայն հավատաց, քանի որ արցունքի կաթիլներ եկան
կենալ բիրերուն միջև, ու վար շտահեցան: Քանի որ թուղթը
ճզմվեցավ ամին մեջ ու ամիը մնաց դոց, ու քանի որ ուրիշ
անգամ չսպասեց զայն, այն սիրելի անկյունին մեջ որ կյանք
մը, պատմություն մը ամբողջ կպարունակեր:



Եվ թերթը, ամուսնություններ շնորհավորելու իր էջին
հատուկ անկյունը գրած էր.

Պարոն Հակոբ Թորոսյան

Ընդ օր. Աննիկ Մարկոսյանի

Մեր շնորհավորությունները մեծահարուստ Մարկոս
Մարկոսյանին»:

Աղջիկը թուղթի այդ աննշան անկյունին նայեցա՜վ ժա-
մերով և այդ անկյունը եղավ համակ նշանակություն,
իմաստ: Անիկա եղավ կյանքի փիլիսոփայություն և ուղղու-
թյուն: Այս անգամ սակայն արցունքի կաթիլը շեկավ կենալ
բիբերուն մեջ: Այս անգամ իր բռունցքը թուղթ մը ճգմեց,
բայց այդ բռունցքը սեղմվեցավ ուժով, շատ ուժով. թուղ-
թեն շատ ավելի զորավոր բաներ ճգմելու ուժով:

Ոչ, անիկա պրն. Հակոբ Թորոսյանին դեմ չէ որ
կսեղմվեր: Ոչ ալ օր. Աննիկ Մարկոսյանին դեմ: Ոչ: Աղջի-
կին աչքերը մեծահարուստ Մարկոսյանին ուղղված էին, օր
կարծես բազմած էր էջին անկյունը և ամենեն լայն տեղը
գրաված հոն: Ամենեն պատվավոր տեղը:

Սակայն անոր աչքերեն արցունք չեկավ այս անգամ:
Բնավ...:

Ապրիլ 1943, Փեյրուք

ՄԻՐԱՀԱՐ ԲԱՐԵԿԱՄՍ

Ըսին թե բարեկամս սիրահարված էր: Եվ որովհետեւ բնական բան մը կնկատեմ սիրահարությունը ամեն տարիքի տղոց համար, անբնական ոչինչ դատ բարեկամիս կացության մեջ. սակայն ինչ որ պատմեցին ինծի իր մասին, տարօրինակ էր: Ասոր համար ալ մեծ փափագ ունի իրեն հանդիպելու:

Մեր հանդիպումը սակայն պատահամբ եղավ:

Ես կատարելապէս փաթթված էի վերարկուիս մեջ, երբ զինք տեսա առանց վերարկուի, օծիքը բաց, մաղվող անձրևին տակ՝ դանդաղ քայլերով:

Ետեւն հասա ու ամիս ուսին դնելով.

— Բարե, Պերճ, — ըսի:

Անիկա բնավ անակնկալի չեկավ: Հանդարտորեն դարձավ ինծի և ըսավ.

— Բարե, ի՞նչպես ես:

Հակառակ անձրևին, ստիպվեցա դանդաղացնել քայլերու: Ան մեկեն ինծի դարձավ ու սկսավ.

— Գիտեմ թե ինչ կը խորհիս, գիտեմ թե ինչեր կը պատմեն իմ մասին. և գիտեմ նաև որ դուն չես հաժատար անոնցմէ շատերուն, ու կը փորձես նույնիսկ պաշտպանել զիս երբեմն: Բայց ես քեզի կըսեմ, հավատա...

Խոսակցության մուտքի այս ձևը որքան տարօրինակ ու հանդուգն, նույնքան զարմանալի ու ինքնատիպ էր:

— Այո, — շարունակեց ան նույն շեշտով, — սիրահարված եմ ջատ գեղեցիկ աղջիկի մը ու տակավին չեմ ըսած իրեն: Զեմ կըցած նույնիսկ որեւէ ձևով հասկցնել իրեն սերս: Կը

վախնամ որ մերժե մեկեն, ու ես չկարենամ երեսը նայիլ:
Այն ատեն պիտի ստիպվիմ տունիս տեղը փոխել ու փողո-
ցեն շեղիլ երբ ան նույն փողոցեն դա:

Քիչ մը լուռ քալելէ ետք շարունակեց.

— Բոլոր ասոնք են որ տարօրինակ կընեն զիս: Ճամ-
փան իր մասին կը խորհիմ ու չեմ տեսներ բարեկամիս՝ որ
դիմացեն կուգա, ինքնաշարժ մը՝ որուն տակը կրնամ մնալ
և երբեմն նույնիսկ զինք, հակառակ որ ժամերով իր ճամ-
փուն վրա կը դեգերիմ զինք տեսնելու համար միայն:

— Անցյալ օր խորհեցա նամակ մը գրել իրեն, — հարեց, —
մտածեցի թե նամակով ավելի դյուրին պիտի ըլլար, բայց
հավատա որ շատ դժվար եղավ, քանի որ առաջին նամակս
էր: Օրեր ամբողջ չկրցա որոշել թե ինչպես պետք էր սկսիլ.
ազնի՞վ օրիորդ, սիրելի՞ թե ազնվափայլ: Որոշեցի իրեն
պատմել ամեն ինչ, պարզ, հասկնալի ու համոզիչ լեզվով:

Վայրկյանի տատամսունե մը ետք.

— Կուգե՞ս որ կարդամ նամակը քեզի, — ըսավ, — տա-
կավին չեմ ղրկած իրեն:

Աչքերուն մեջ ամշկոտություն մը կար ու կը խուսափեր
ինծի նայելէ, և ձայնին մեջ քիչ մը խնդրանք: Ինծի համար
հաճույք մը պիտի ըլլար անշուշտ բարեկամիս սիրտին
պատմությունը դիտնալ:

— Ուրախությամբ, — ըսի, ու ան կարդաց:

Բովանդակությունը պարզ էր ու համեստ, ինչպես բա-
րեկամս: Չորս մեծ էջերու վրա տարածվող, մանր գիրերով
այս թուղթը նախ կը պատմեր վայրն ու ժամը երբ սիրա-
հարված էր, փոթորիկը, որ պայթած էր սիրտին մեջ ու
սրունքները որ կթտած էին և կամ կը կթտեին տակավին,
ամեն անգամ որ հանդիպեր իրեն:

Նրկրորդ մասին մեջ, ոճը նկարագրականէ կամ հուզա-
կանէ կանցներ պաղատականի: Կըսեր թե որքան անկարելի
էր առանց իրեն ապրիլ, թե որքան մեծ անապատի մը պիտի
վերածվեր իր սիրտը առանց իր սիրուն, որ կրնար ծաղկեց-
նել ու գեղեցիկ պարտեզներու վերածել զանոնք, և թե ինչեր

պիտի պատահին կամ պիտի չպատահին եթե ինք ասանկ
ընել կամ անանկ չընել:

Վերջավորութեան շվարեր կեցել էր դարձյալ:

Չէր կրնար վերջնականորեն որոշել թե աղջիկին խոնարհ
ծառան պետք էր ըլլար, թե հուսացող կամ անհույս սիրա-
հարը և կամ ոչ մեկը այս բոլորեն, այլ ուրիշ բան մը զոր
հակառակ իր ճիգին չկրցավ բացատրել:

Պետք ալ շկար արդեն: Ես մոտավորապես հասկցել էի
թե աղջիկին ինչը եղած էր, ու այդքանը կը բավեր արդեն:

Նամակին ծանր տպավորութեան տակ, դանդաղորեն քա-
լեցինք, հակառակ իջնող թեթև անձրևին: Բարեկամս ինծի
չէր նայել: Անոր աչքերուն արտահայտութեան մեջ խորուն-
կութուն ու հեռավորութուն կար: Հավանաբար կզգար որ
իրեն կը նայելի, ու այս գաղափարը ավելի անելի կը մատ-
նել զինք:

Կզգայի թե պետք էր շարժում մը ընել, բան մը ըսել ի
նպաստ իրեն: Կզգայի որ ան կսպասեր, որ օգնեմ իրեն,
մխիթարեմ զինք կամ գաղափար մը թելադրեմ: Մինչդեռ ես
բոլորովին հեռու էի այդտեղերեն: Ես ավելի իր մասին կը
մտածելի ոչ թե ի՞նչ պետք էր ընել իրեն, այլ թե ինչ եղած էր
ինք:

Դպրոցին մեջ աշխատասեր տղա մըն էր ան, դասարա-
նին առաջինը շատ անգամ: Ուսուցիչը զինք իբր օրինակելի
աշակերտ կը ներկայացնել ուրիշներուն, ու տնօրենութունը
շատ հույսեր դրած էր իր վրան: Թերևս ալ կը հուսար տա-
կավին, քանի որ որևէ թեթև ու վտանգավոր խնդրանքով
չէր դրադմած ան. ոչ դպրոցին սահմաններեն անդին անցած
էր առանց արտոնութեան, ոչ գեշ կերակուրներուն համար
դասադուլի մասնակցած, ոչ ալ լավ շտրվող դասերուն կամ
անկարող ուսուցիչներուն դեմ բողոքած: Ասոնք մեծ բաներ
էին անշուշտ, ու իրավամբ օրինակելի եղած էր ան, թեև ոչ
որ օրինակ առած էր իրմե:

Ահա նույն տղան որ մտադրաղ կը քալեր, որ հակա-
ռակ աղգային պատմութեան բարձրագույն նիշը ունենալուն,

ազգային որևէ գործով չէր հետաքրքրվել, որ հակառակ իր հաջող շարադրություններուն, չէր կրնար սիրո պարզ նամակ մը գրել, պարզ ու միամիտ աղջիկի մը:

Սիրահարված էր ան գեղեցիկ ու աղքատ աղջիկի մը ու ամեն ինչ կեցած էր հոն: Իրեն համար թերևս աշխարհն ալ կեցած էր հոն, այդ կետին վրա: Անիկա սիրահարված էր, ու այդ սերը նպատակ ըրած իրեն և ոչ թե միջոց՝ ուրիշ բարձունքներ հասնելու: Այնքան կլանված ու զբաղված էր իր սիրով, որ մոռցած էր կարևորությունը՝ նույնքան և ավելի կարևոր ուրիշ գործերու, որոնց հասնիլը դժվար թեև, բայց անհրաժեշտ էր:

Երբ կը քալեինք քով քովի, իրեն նայելով ես կրնայի դուշակել թե բոլորովին մոռցած էր դիս այլևս, ու կը մտածեր այնքան խորունկ ու ինքզինք մոռցած, որ դիմացեն հկող բարեկամ մը պիտի չճանչնար կամ չբարևեր նույնիսկ աղջիկը:

Հասանք անկյուն մը ուրկե պետք էր որ բաժնվեինք: Հանրակառք մը անցավ, բայց ես կեցա: Բռնեցի թևն ու ան դարմացած ինծի նայեցավ. հիշեց հետո ու ձեռքս թոթվելով ըսավ.

— Վերջնականապես որոշեցի իրեն տալ նամակը, լավ էր չէ՞: Անշուշտ ինքն ալ պիտի հավնի: Հետո պիտի սիրե դիս, միասին պտույտներ պիտի ունենանք, նշանվինք ու օր մըն ալ ամուսնանալով շատ երջանիկ ըլլանք:

Ձեռքս կը սեղմեր տակավին և այս անգամ աչքերուս մեջ կը նայեր քիչ մը ավելի համարձակ ու պատասխանի կսպասեր:

— Անշուշտ, — ըսի ճիգ մը ընելով, — երջանիկ կրնաք ըլլալ, բայց անկե առաջ պետք է որ հավնի նամակդ ու սիրե քեզ, պտույտի դա ու ամուսնանա հետդ, իսկ անկե ետք, ինչ որ երկրորդական է թեև, բայց չափազանց անհրաժեշտ, պետք է ապահով ու տևական դործ մը ունենա ու տևական դործ մը ունենալու համար այնպես մը դործեր պետք է ընես, այնպես մը կազմակերպվի ամեն ինչ, որ ալ շատիպիս խորհիկ

թե ինչ պիտի ընես վաղը կամ մյուս օր, և զավակդ չափա-
յի ամեն ինչ նորեն կազմակերպելու մասին խորհիլ երբ քե-
դի պես սիրահարվի աղջիկի մը:

Կարճ լռութենե մը հոք ավելցուցի.

— Շատ դժվար բաներ չեն ըսածներս, բայց պետք է
որ մեկը աշխատի անոնց համար, որպեսզի իրականանան:

Նս պատրաստվեցա բաժնվիլ այլևս, բայց ան կեցուց
դիմ ու կը պատրաստվեր վերջնական պատասխան մը տալ
իմ խրատականին, երբ հանրակառքը եկավ ու ես առանց
կենալուն սպասելու վեր բարձրացա:

Իջնելու և ելլելու մարդոց հանած իրարանցումին մեջ
ես կորսվեցա իր տեսողութենեն: Քիչ հոք երբ հեռվեն կրցա
դիմք տեսնել, զարմացած երևույթ մը ուներ: Չեռքերը գլր-
պաններուն մեջն էին միշտ ու նայվածքը՝ անորոշին:

Թեթև անձրեր տակավին կը մաղվեր քաղաքին վրա:

Փետրվար 1945. Բեյրութ

ԱՎԱՐՏԱԹ ՆԿԱՐ...

Պերճ բարձր տրամադրութեամբ լերցուց հեռախօսի գործիքը ու ականջին աղջկա հաճելի ձայն առնելով, նույն տրամադրութեամբ, արաբերենով պատասխանեց.

— Այո, սիրունս, պրն. Պերճ հս եմ. իսկ ձեր անունը ինչպէս է՞ր:

Քովի սեղաններէն աշխատող դուխներ բարձրացան. աչքերը փոքրացան ժպիտի մեջ ու անզգալաբար, աննշմարելիորեն առաջ մղվեցան դուխներ, կարենալ լսելու համար դիմացէն խոսողին պատասխանը:

Սակայն Պերճին դեմքը արտահայտութեան փոխեց մեկէն: Ժպտող շրթները կծկվեցան, պրկվեցան. աչքերը կորսնցուցին իրենց անհոգ փայլն ու լրջացան: Զինք դիտող երկու ընկերները անզգալաբար փոխեցին իրենց արտահայտութեանը: Լարված աչքերով նայեցան Պերճին ու անհամբեր սպասեցին որ ան ավարտէ խոսակցութեանը:

Բայց Պերճ կեցավ այնպէս ինչպէս որ էր: Կարծես անվերջանալի պատմութեան մը կպատմէին, հմայիչ, հուզիչ, հետաքրքրական, որ Պերճ, ընկալուչը ականջին, աչքերը մեկ կետի վրա, խոսողին շէր պատասխանէր նույնիսկ:

Գուցե դեռ երկար մնար այդպէս. դուցե լավ էր որ մնար այդպէս, բայց հեռախօսը հնչեց ուժգին, ու Պերճ քունն արթնացածի պէս գլուխը ցնցելով պոռաց.

— Այո, մի խանդարեք, կխոսինք կոր:

Սակայն երեւի դիմացէն դադրած էր ամեն խոսակցութեան, քանի որ Պերճ դանդաղ տեղը դրավ գործիքը ու ընկերներուն դարձավ անհամարձակ շարժումով: Աչքերը ահ-

սելի արտահայտութիւնն առած էին ու շրթները կդողային հակառակ ի դորժ դրած բռնն ճիգին:

Երկու աթոռներ հեռացան սեղաններէն, ու բազուկներ զինք ուսերէն բռնելով, հեռավոր անորոշ ձայնով հարցուցին.

— Ի՞նչ եղար, Պերճ, ի՞նչ կա...

Պերճ փորձեց ըսել: Ակռաներով սեղմեց շրթները, որպէսզի անոնք հնազանդին իրեն, որպէսզի իր ըսելիք բառերը հնազանդին իր միտքին, բայց անոնք գացին տարբեր ուղղութիւնով:

— Սահակը... հազիվ կմկմաց ան,— Սահակը...

Արցունքը խորտակելով ամեն պատվար, իջավ հորդ, այտերն ի վար, ու Պերճ նստավ այդպէս թույլ, անպէս անկամ ու անօգնական, գլուխը կուրծքին վրա կախած, թույլ տալով որ հոսին անոնք, հոսին անընդհատ:



Հիվանդանոցին սանդուղներէն բարձրացավ դանդաղ: Դուռին առջև քույր մը դիմավորեց զինք ու իրեն դիմելով՝

— Պրն. Պերճ—հարցուց:

— Այո,— թեթեւ առաջ անցավ Պերճ:

Քույրը բռնեց իր ձեռքէն, սեղմեց իր փոքրիկ ափին մեջ ու մեղմ, «եկեք» փափսաց:

Պերճ հետևեցավ անձայն:

Սենյակին մեջ մահճակալ մը կար ու անշարժ մարմին մը անոր վրա: Ուրիշ ոչինչ, ոչ իսկ աթոռ մը:

Քառուղուկէ կոշիկները թեթեւ ձայն հանեցին երբ իրարու հաւե ներս մտան անոնք: Կեցան անձայն, ու Պերճ զգաց թե քույրը կդողար ներքին տառապանքով մը: Զեռքի դանդաղ շատ դանդաղ շարժումով մը Պերճ կիսով բացավ Սահակին դեմքը ու ձեռքը մնաց ծածկոցին եզերքէն բռնած:

Ոչինչ, կարծես ոչինչ փոխված էր այնտեղ: Ոչինչ որ թվեր հիմնական: Ծիշտ այնպէս էր կամ գրեթե, ինչպէս տե-

սեր էր վերջին անգամ: Ե՛րբ էր այդ սակայն: Ո՞րքան ժամանակ էր անցած, որ նույն տառապած դեմքը, պրկված նույն կզակը: Ժամանակեն շատ առաջ հյուժած մարմինը ու կիսափակ աչքերը, հեռացած էին իրմե անհունորեն: Կարծես բաժնված ըլլային տարիներով, տասնյակ տարիներով, ամբողջ կյանքով:

Աչքերը արտահայտություն շունեին այլևս ու հանդարտած էր կուրծքը: Փոթորիկը շիջած: Մարած էր դինք հրդեհող, աչրող կրակը: Եվ սակայն այդ կրավեր: Այդ նույնիսկ շատ էր, որ Պերճին ձեռքը մնար ծածկոցին ծայրեն բռնած, գլուխը կախած ու քրոջ թույլ, փափուկ ափը մնար իր ափին մեջ խնդճուկ, դողացող, անօգնական:

Սահակին դեմքին վրա նոր արտահայտություն մը կար սակայն: Կարծես վերջին ճիգ մը ըրած էր, վերջին խոցանք մը՝ դեպի անծանոթը, ծանոթը, ու այդ խոցանքին մեջ, ճամփուն վրա մնացած՝ անավարտ բառը շրթներուն վրա, անսովոր պատկերը աչքերուն մեջ:

Իրենց շնչառության ձայնը կտարածվեր սենյակին մեջ: Թեթև աղմուկներ կը լսվեին դուրսեն: Անցնող հանրակառքի մը ժխորը և կամ, հակառակ արդելքին, ինքնաշարժի մը ջղայնացնող ձայնը: Մարդկային ձայն մը նույնիսկ անցավ պատերեն ու հասավ իրենց: Կարծես մեկը կծիծաղեր դուրսը: Կարծես ծիծաղներ կհասեին ներս պատուհաններուն արանքներեն, պատերուն անտեսանելի փոքր ծակերեն:

Ներսը երկու հակած գլուխներ կային ու բաց՝ անթարթ աչքեր:



Մեղմությամբ քույրը քաշեց Պերճին թևեն: Քալեցին մաքուր նրբանցքներե, հանդիպեցան ուրիշ քույրերու, հիվանդներու աչցելության եկած, շորս կողմ հեռաքրքիր նայվածքներ նետող, լեցուն կողովներով կիններու, հիվանդներեն ուրախ ու տխուր բաժնվող բարեկամներու, սակայն ոչ մեկը նկատեցին:

Բռնած Պերճին թեկն, միասին մտան փոքրիկ գրասեն-
յակ մը ու նստան հանդիպած առաջին աթոռներուն՝ հոգ-
նած: Կարծես այդպես քալած էին օրերով, կարծես խոշոր
քեռ մը կրած էին, անվերջանալի, երկար թվացող ճամփու մը
ամբողջ ընթացքին:

Պերճ դարձավ քրոջ ու շատ մեղմ, կոտրվող ձայնով մը
հարցուց.

— Ե՞րբ պատահեցավ:

Մեկը դուռը բացավ անակնկալորեն ու ներս նայելե
ետք, դժգոհ գոցեց զայն:

— Կես գիշերեն հետո, — պատասխանեց քույրը:

Խոսակցությունը ինկավ դարձյալ, ու զայն վերսկսիլը
դժվար եղավ երկուքին համար ալ: Բայց լռությունն ալ ան-
տանելի էր, ավելի ճնշող, տառապեցնող:

— Իսկ վերջին վայրկյաններուն ո՞վ կար քովը. ինչեր
ըսավ... հարցուց Պերճ կտրատվող ձայնով դարձյալ:

— Ամբողջ գիշերը ես քովն էի: Չուզեցի բաժնվիլ,
որովհետեւ կզգայի թե վերջն էր. չէի կրնար ալ բաժնվիլ,
որովհետեւ... չեմ գիտեր ինչպես բացատրել... հետո, ինքն ալ
ուզեց որ կենամ իր մոտ:

Քույրը կեցավ ու կարծես մտաբերել աշխատելով.

— Գծագրության թուղթ ուզեց նախ, — շարունակեց ան
առանց Պերճին նայելու, — ու ժամերով գրադեցավ: Գծեց և
ուզեց փոխել իր գծածը, և որովհետեւ սրբելը մեծ ճիգ կը
պահանջեր, թուղթը փոխեց շարունակ: Հետո ցավերը սկսան
մասնավոր սաստկությամբ ու ձեռքս բռնելով՝ «Լեյլա,
ըսավ, քովս նստե, չհեռանաս: Բարեկամներս չեկան, Պերճը
չկա, դուն ամեն ինչ ես ինձի համար, դուն մի հեռանար
քովես»: Ես հեռանալու միտք չունեի արդեն. նստած էի քո-
վը, ձեռքը ամերուս մեջ առած: Կզգայի թե սաստիկ կտանջ-
վեր, բայց ոչնչով կրնայի օգնել իրեն: Անզորության գիտակ-
ցությունը կստիպեր զիս որ լալի, բայց գիտնալով որ ինք
քաջալերության պետք ուներ, կզսպեի ես զիս: Լացս կրնար
ճակատագրական ըլլալ իրեն:

— Իսկ բժիշկը, մասնագետ բժիշկը ինչո՞ւ չկանչեցիք, — պոռաց Պերճ հանկարծ, ընդհատելով զայն, — չէ որ կըսես թե սաստիկ կտանջվեր, ու այդ պարագային միայն ան կրնար բան մը ընել, միայն ան. ի՞նչ օգուտ ձեր իր մոտ կենալին, եթե ոչինչով պիտի օգնեիք իրեն...

Լեյլա ընդհատեց զինք: Ան չվիրավորվեցավ Պերճին ըսածներեն, անոր ձայնին բարձրացումեն. զգաց թե անգործության տառապանքն էր այդ, խորունկ ապրումով զգացվող վիշտը ու հանդարտ՝

— Զանգահարեցի, — ըսավ. — գիշերվա կեսը անցած էր արդեն, բայց ես զանգահարեցի իր տունը: Հազիվ կրցա կապվիլ, ու քունեն արթնացած ըլլալուն համար շատ ջղային դարձեր էր:

Լեյլա դարձավ Պերճին, շուգելով շարունակել, կարծես խնայելով անոր. բայց Պերճ իրեն կը նայեր շարունակութունը սպասող աչքերով.

— Առանց մանրամասնորեն հարցնելու, — ստիպված շարունակեց Լեյլա, — առանց լսել ուզելու թե որո՞ւն մասին էր խնդիրը, երբ իմացավ թե իր հիվանդանոց գալը անհրաժեշտ էր, մեկ խոսքով երկու հարյուր լիբանանյան ոսկի պահանջեց: Ապշեցա, այնքան անիմաստ էր այդպիսի պահանջ մը, այդպիսի ատեն, այնքան շապասված: Խնդրեցի որ գա, իսկ դրամը, ըսի թե կրնա վստահ ըլլալ Սահակի բարեկամներուն վրա: Չուզեց լսել ու պոռաց միայն. «Ինքնաշարժ մը ու դրամը ղրկեցեք, կուգամ»: Հետո, իզուր զանգահարեցի ոչ մեկ պատասխան...

Լեյլա լռեց ու ավին մեջ պինդ բռնած թաշկինակը սեղմեց աչքերուն: Պերճ գլուխը առավ երկու փերուն մեջ ու մնաց այդպես երկար: Ան նույն դիրքը պահեց երբ հետո, Լեյլան շարունակեց մեղմ, առանց մասնավոր տեղ մը նայելու: Կարծես կխոսեր անծանոթի մը, անտեսանելիի մը, զոր ինք միայն կտեսներ. կարծես կխոսեր անոր որ մեկնած էր ժամեր առաջ, կարծես ոչ ոք կար սենյակին մեջ:

— Զեռքս սեղմեց իր ամբողջ ուժովը, ու «Լեյլա,

ըսավ, դանգահարե Պերճին, ընկերներուս ըսե թե զիրենք
հիշեցի վերջին րոպեին... Թող շատ ընկերներով թաղեն զիս,
թող վերջին անգամ երգեն վրաս, թող ըսեն թե ինչերու ու-
ղեցի հասնիլ ես, ու շահասած կեցա...»:

— Չայնը երթալով մարեցավ: Հարկ եղավ որ ան մեծ
ճիգով մաքրե կոկորդը: Հարկ եղավ որ կաթիլ մը ջուր խմել
տամ իրեն: Օգուտ չըրավ: Արդեն դեմքը բոլորովին տարօրի-
նակ եղած էր, աչքերը կոպերեն դուրս պիտի իյնային կար-
ծես, ու շունչը կհատներ, չէր բավեր իրեն: Հետո..., հետո,
անակնկալ ցնցում մը, քիթով ու բերնով վերջին ճիգ մը
շունչ առնելու ու վերջին բռնեք. «Թուղթերս... Պերճին...
Թող իր հետ տանի... հայրենիք...»:

Պերճ իր գլուխը չբարձրացուց նայելու համար կեյլային,
որ կաշխատեր անձայն արտասվել, թաց թաշկինակը սեղ-
մելով քիթին, աչքերուն:



Գերեզմանատունեն մինչև քաղաքին կենտրոնը երկարող
համալիս Պերճ անցավ առանց անդրադառնալու: Զհանչցավ
ու չբարեկեց հանդիպած ծանոթները: Ոչինչ շտեպավ իր
շուրջ. ոչինչ:

Ժողովի մը ընթացքին ծանոթացած էին Սահակին հետ:
Պարզապես համակրած էին իրարու առաջին հանդիպումեն
իսկ, ու այդ համակրանքը վերածված էր հաստատուն, խո-
րունկ բարեկամության, ամրացված նույն դադափարին
տված ուժովը, նպատակներու զուգորդվելովը:

Դժվարին կյանքը, մարդերու երջանկությունը կերտելու
իրենց հաստատ հավատքը, զիրենք երկուքով առաջնորդած
էր նույն ուղիով: Ու անոնք գացած էին այդ լայն, վտանգա-
վոր, փառավոր, պայքարի ճանապարհով:

Պերճ հիշեց անձրևոտ այն օրը: Սաստիկ, հորդառատ
անձրև, երբ Սահակ եկած էր իրենց տունը թրջված, նիհար,
դողացող մարմնով: Մայրիկին տված տաք թեյին վրա նետ-

ված էր ընտանի մարդու համարձակությամբ: Ինչքան լավ համարձակ էր ան: Հետո, թուղթ մը երկարած էր իրեն: Այս օրվան պես Պերճ հիշեց գրված այդ պարզ բառերուն կրակն նշանակությունը: Անձրեւը կը շարունակվեր տեղալ դուրսը: Սահակին մարմինը չէր շորցած տակավին: Եվ սակայն դուրս ելած էին ու քալած ժամերով, խուսափելով հանրակառքերէն, ինքնաշարժներէն, ընտրելով մութ, ցեխոտ փողոցներ:

Առտուն, ուշ ատեն, տուն վերադարձին միասին կեցեր ու նայեր էին անկյուններու մեջ հավաքված մարդերու խումբերուն, որոնք պատերու վրա փակցված, ժողովուրդին ուղղված կոչը կը կարդային: Այո, երկուքով ու գոհունակ ծիծաղեր էին իրենց շրթներուն ծայրով:

Այդպես տարիներով աշխատեր էին երկուքով: Մատնվեր ու հալածվեր երկուքով, փախեր անձրեւին տակ, հովուն դեմ, սմառվան այրող արեւին տակ ու փոշիներու մեջէն:

Ընկեր բժիշկի մը առաջին ազդարարությունը Սահակին վրա չէր ազդեր: Ուսերը անհոգ վեր էր բարձրացուցեր ու շարունակեր նույն անխոնջ, համառ, սպառող պայքարը:

Եվ սակայն վերջերս մեքենան դադրած էր հնազանդելի իր տիրոջ: Թեթեւ նկատված պաղարություն մը, որուն մասին չէր խոսած իր ընկերներուն, ստիպած էր Պերճը որ լուրջ քայլերու են մասին մտածեն:

Իսկապես գլուխը շարժեց Պերճ, կարելի էր երկարորեն մտածել լուրջ քայլեր առնելու մասին, կարելի էր մտածելով նույնիսկ փրկել ամենասիրելի ընկեր մը. բայց բան մը ընելու համար, մտածումն տարբեր բաներ էին անհրաժեշտ: Իսկ այդ անհրաժեշտը չկար, չկար:

Դրամ ի հարկէ հավաքած էին: Բայց կրցեր էին ստանալ բացառապէս դրամ շունեցողներէ միայն, ու արդյունքը անշուշտ եղած՝ խղճալի, ոչինչի չօգնող:

Բնական է, ոչ ոք չէր ստիպած դիմք որ մսեր, ոչ ոք չէր ստիպած որ շմտածեր իր ապագային մասին: Ինչո՞ւ էր նկարիչ դարձած, ու ժամանակ վատնած բոլոր մարդերու երջանկության համար, երբ չէր կրցած նույնիսկ ինքզինք, իր ա-

պագան, իր կյանքը ապահովել պատահականությանց դիմաց:

— Ես իմ ձեռքես եկածը ըրի, — մտածեց Պերճ ինքն իրեն, իսկ ի՞նչ կուգար իր ձեռքեն, ի՞նչ եկած էր, այդ մասին շուտեց շարունակել իր մտածումը:

Բերեր էին հիվանդանոց վերջին հուլիսով. համարյա անհույս: Եկեր էին միասին, երկուքով, ու Պերճ դուրս էր ելած մինակ:

Ու հիմա մինակ կվերադառնար գերեզմանատունին: Բաժնված էր ընկերներեն, ու տարբեր ճանապարհե գալով, ոչ ոք չէր տեսներ իր շուրջը: Չէր գիտեր նույնիսկ թե որ ճանապարհով ոտքերը դինք կառաջնորդեին քաղաք: Բաժնված ընկերներեն, Պերճ կը քալեր մտածելով Սահակին մասին: Ոչ թե անոր մասին, որ մեկնած էր, հեռացած, մեռած, այլ անոր մասին որ մնացած էր իր ընկերոջմեն, փռիսանցված իրեն, նույնացած իր հետ: Ուրեմն ինչո՞ւ մինակ պիտի ըլլար ինք, երբ Սահակին լավագույն մասը կար իր մեջ, երբ Սահակին գաղափարները, միտքը, նպատակները եր մեջ էին: Երբ նույն կյանքն ու երազը որ ունեցեր էին միասին, կը շարունակվեր տևել իր մեջ, Պերճին մեջ:

Պերճ իր շուրջ նայեցավ ու տեսավ այս անգամ: Արդեն հրապարակն էր հասեր ու մարդերը բոլոր կողմերե կը քալեին, կաճապարեին, կխոսեին, կխնդային, զուցե և կուշային: Կեցավ Պերճ ու նայեցավ բոլոր այդ մարդերուն, անոնց դեմքի, մարմնի արտահայտություններուն առանձին, մանրամասն ուշադրությամբ: Տեսավ բոլորին շտապելը ու բուրրին թշվառությունը: Այնքան բացահայտ էին գծված բուրրը, ու զարմանալի, մինչև այն աստի՛կ ինք համարյա ոչինչ չէր նկատած հատակորեն, անոնց յուրաքանչյուրին աչքին արտահայտության, քալելու ձևին, ամենքեն աննշան մեկ երևույթին մը սերը դեպի կյանքը, բաղձանքը հանգստի, երջանկության:

Երջանկություն... երջանկություն...

— Սահակը չգնաց, — պոռաց ան ինքն իրեն: — Բոլոր այս

մարդիկը վկա, այս ապրող, երազող, լավագույն կյանքի համար մաքառող մարդիկը վկա, որ ան շմեռավ, բանի ասոնցմե յուրաքանչյուրը ունի ցավ մը որմե Սահակը, ես, կը տառապեինք, յուրաքանչյուրը այս մարդերեն կձգտի բանի մը որուն մենք կը ձգտեինք հասնիլ: Քանի կյանքը կա, մարդիկ կապրին, և ունին երազը երջանիկ, մարդավայել ապրելու:

Կեցած այդպես՝ մեծ հրապարակին մեկ անկյունը, մարդերու հսկա երուզեռին մեջ, Պերճին դեմքը կարտահայտեր բոլոր այս մտածումները, այս ապրումները:



Իրենց տունին դռան առջև կեյլա դիմավորեց զինք, ու Պերճ անոր սենյակը անցավ: Պարզ, համեստ, սովորական սենյակ մըն էր: Պերճ նստավ սեղանին առջև ու հարցական նայեցավ:

— Այդքան անհամբեր ե՞ք, — հարցուց կեյլա, ու իրարու վրա շարված զանազան մեծությամբ նկարներ դրավ Պերճին դիմաց:

Սահակին նկարներն էին: Մեծ մասամբ ծանոթ: Շինվող տունի տա նկարը, մարմին ու շունչ առած թուղթին վրա, ցուցադրված է ժողովրդական թաղամասի մը խեղճուկ մեկ տան մեջ: Բազմաթիվ մարդիկ, բանվորներ մանավանդ հիացած էին այս երկրորդին վրա, որ բանվորի մը շաբաթ երեկոյան տուն դառնալը կներկայացներ: Դուռեն հագլիվ ներս էր մտած բանվորը, երեխաները, չորս հատ, իրեն դեմ վազելու դիրքին մեջ էին, իրենց նայվածքը հայրիկին ձեռքերուն, ու կեցած էին անոր շհասած: Ան ոչինչ կը բերեր տուն: Կինը գլուխը միայն դարձուցած էր դեպի ամուսինը, բայց կը նայեր երեխաներուն հուսահատ, արդեն երկարատենե համակերպած աչքերով, իսկ ընտանիքին հայրը կարծես այլևս չէր ուզեր ներս մտնել, կարծես հիմա պիտի դուրս վերադառնար:

Պերճ փոխեց նկարները: Վայրկյան մը կեցավ ցույցի մը

«Դիմաց: Նայեցա՛վ որոշ արտահայտութիւնն եղած դիմագիծերուն, նայեցա՛վ լողունքներուն, որոնց բառերուն մեջն՝ հազիւ կարելի էր կարդալ «հաց» կամ «աշխատանք» բառին կեսը: Այդ դեմքերուն մեջ տեսա՛վ կարծես նույն բանվորը որ «վերադարձած» էր, եղած ավելի վճռական:

Այո, հիշեց Պերճ, բազմաթիւ մարդիկ հիացած, ատելութեամբ լեցւած, քաջալերւած էին այս նկարով. իսկ ուրիշներ ծաղրած էին զանոնք, կոշած անարվեստ, չափազանց շատ ուսմիկ, ոչ վեհ:

Ահա և վերջին նկարները: Պերճ երկարորեն շկրցա՛վ բաժնավիլ անոնցմե: Ան նայեցա՛վ խորը շմշակւած այդ գիծերուն, շա՛վարտած այդ նկարներուն ու փորձեց հասկնալ անոնց լեզուն: Հասկնալ այն, ինչ որ Սահակ ժամանակ չէր ունեցած ավարտելու, հասկնալ այն, ինչ որ ուզած էր ըսել ան:

Երեւի նույն նյութը կշռափեին բոլորը, քանի հերոսները նույնն էին: Հեռավոր ճամփորդներ էին ըստ երևույթին, դժվարին ճանապարհներն անցած, կոնականին ծանր բեռ: Փոքր բլրակներ կային անոնց ետեւ, կարծես սե ու փոս աչքերով գանկերն կազմւած: Բայց ոչ մեկ ծառ, ոչ մեկ մշակութուն, ոչ մեկ աղբյուր շուրջը:

Պերճ մեկ կողմ դրա՛վ նկարը: Թերեւս իրեն այդպես կ'ըմբռնէր: Առայժմ պետք է թողնել և հետո միայն մտածել թե ինչեր էին անոնք:

Նույն մարդիկը տեղավորվելը կաշխատեին. երկրորդին մեջ տնկւած փոքր ծառեր կային ու հերկւած արտ մը՝ տունին շուրջը: Համեմատաբար զվարթ, հաճելի տեսարան էր: Բայց այդ բոլորը ցանկապատած էին, ու նույնիսկ քարե պատ քաշելու սկսած, հողի այդ փոքր շերտին շուրջ իսկ:

Երրորդ նկարը նույն ընտանիքը ճաշի սեղանին շուրջ ցույց կուտար. բայց չէին ճաշեր: Չմեռ ըլլալու էր, քանի փոքր վառարան մը կը վառեր անկյունը ու պատուհանները գոց էին: Դուրսի մութին մեջ, ներսեն արձակվող աղոտ լույսին տակ, դեմքեր ու հրացանի փողեր կտեսնվեին, ու

երկու երեսաները փոխված դեմքով, դեպի հայրիկը հակած, զանոնք հայրիկին ցույց կուտային: Հայրիկը սակայն, մեկ թևով պատսպարելով զանոնք, կնայեր պատին ու բոլորին ուշադրությունը կկեդրոնացներ հոն կախված խոշոր մեկ նկարին, որ երկար, շատ երկար, դեպի լեռնային հեռավոր երկիր մը բարձրացող ճանապարհ մըն էր: Կարծես ուժ մը կուգար այդ երկրեն, կողողեր ամբողջ էությունը անոր, և որ զայն կուգեր փոխանցել իր զավակներուն:

Պերճ երբ բացավ շորրորդ նկարը, զարմացած կեցավ: Անկանոն ձևով քաշված գիծեր տեսավ հոն: Արդյոք ինչ պիտի ըլլար այս, մտածեց ան ու մնաց դուխը ամբողջ մեջ առած, նայվածքը անշարժ գիծերուն:

Լեյլա զարմացած անոր երկար անշարժ վիճակին վրա ու մոտենալով կամաց, ուսին վրայեն նայեցավ:

— Վերջին գիշեր գծիկ փորձած նկարն է,— փափսաց ան:

Պերճ գլուխը դարձուց: Ան շարունակեց նայիլ անշարժ, փորձելով հասկնալ գիծերու անխոս լեզուն: Մեկեն զգաց թե գիծերը հստականալ, մարմին ու կյանք առնել սկսան: Ինչպես առաջին վայրկյանին չէր նշմարած: Գիծերու այն խառնուրդին մեջ հստակորեն նշմարելի էր, անխոս ամբողջություն հայտնի էր, նույն անունը ունեցող հարազատ լեռան երկու գեղեցիկ գագաթները: Իսկ մնացած գիծերը: Ահա անոնք ալ սկսան պարզվիլ, շնչել, ալրիլ: Լեռներուն դիմաց տարածվող մեծ քաղաքի մը, շինվող բազմաթիվ գործարաններու հատակագիծն էր ան:

Հասկնալու այս միտքին վրա Պերճ աշխուժացավ մեկեն. աչքերը կենդանացան: Կարծես հեռավոր գեղեցիկ եղանակ մը մոտեցավ, զորացավ, լեցույց սենյակը, մթնոլորտը: Կարծես բազմաթիվ լույսեր վառվեցան հանկարծ ու լուսավորեցին իրերն ու մարդիկը:

Պերճ դարձավ Լեյլային ու անոր նայվածքը իր վրա տեսնելով, վերջին նկարները ցույց տվավ անոր ու պոռաց ինքզինք կորսնցուցած.

— Ասիկա մեր վերջին շրջանի պատմությունն է: Այս

վերջին նկարը մեր հայրենիքին, մեր մայրաքաղաքին նկարն է: Այս լեռը (մատով ցույց տվավ լեռ հատկանշող գիծերը), մեր լեռն է, միայն մերը: Հոս հասնելու համար է որ քալած ենք մենք հարյուրավոր տարիներ:

Երբ մենք կրսեր, Պերճ ցույց կուտար իր շարժումներուն ընթացքին սեղանին վրա տարածված բոլոր նկարներուն մարդիկը:

Լեյլային աչքերը մեղմություն, բարություն, հասկնալու պատրաստակամություն կարտահայտեին, բայց Պերճին թվեցավ թե ան չէր հավատար իր ըսածներուն, թե նույնիսկ կկասկածեր իր միտքի հանդարտության մասին:

—Այո, — շարունակեց պոռալ. — քեզի համար կրնան միայն դիժեր ըլլալ, որովհետեւ Սահակը ժամանակ չունեցավ ավարտելու դանոնք, որովհետեւ բժիշկը չուզեց ժամանակին դալ: Որովհետեւ... բայց վստահ եղիր, վստահ եղիր, Սահակին միտքին մեջ ավարտած էր ան, այնպես, ինչպես որ է մեր երկիրը հիմա, այնպես, ինչպես կատարյալ պիտի ընենք մենք դայն: Դուն հավատա ինձի...

Պերճ շիրցավ շարունակել: Չայնը խեղդվեցավ կոկորդին մեջ. խուլ սողմուկ մը ելավ միայն ու բառեր չկազմվեցան:

Լեյլա անոր աչքերուն մեջ արտասուք տեսավ ու թաշկինակով իր թրջած աչքերը սրբեց:

Ապրիլ 1947, Երևան

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ր

Քիչ մը զսպված աճապարանք կար Սահակին քայլերուն մէջ, երբ հասավ ժամադրութեան վայրը, ու արագ իջավ սանդուղներէն, որոնք թեյարան կառաջնորդէին: Ժամանակէն կանուխ եկած էր, ինչպէս միշտ, և հույս չունէր, որ Սոնան եկած ըլլար: Սակայն, մեծ եղավ իր զարմանքը երբ սյունին ետեւ սեղանին առջև տեսավ զայն, որ պաղփղ կաթով-սուրճին քով, սեղանին վրա լայնորեն բացած էր թերթ մը ու խորասուզված անոր մէջ:

Քառշուկէ կոշիկը բարեբախտաբար ձայն չէր հաներ, անանկ որ Սահակ կրցավ մոտենալ անոր և ուսին վրայէն նայիլ:

Զարմանքի նոր ալիք մը անցավ Սահակին դեմքին վրայէն: Արագ շարժումով մը ափին մէջ ուժգնորեն սեղմած հայերէն երկու թերթերը բացավ ու տարածեց սեղանին վրա: Սոնան իրեն դարձավ, անակրնկալ ճիշով մը, հետո իրարու նայեցան կարծես նույն մտածումով, նույն զգացումով: Սահակ դանդաղորեն նստավ դիմացի աթոռին վրա ու Սոնայի աչքերուն մէջ նայելով փորձեց սկսիլ.

— Քանի որ գիտես ամեն բան, կրնանք նշույթին շուրջ խոսիլ:

Փորձեց սկսիլ, բայց չկրցավ շարունակել, քանի որ Սոնան իրեն կնայեր անխոս աչքերով: Լռեց ու անոր աչքերուն մէջէն հասկնալ աշխատեցավ, թե ուղեղին ինչ մտածումներ կանցնէին: Բայց, երբ վստահ եզրակացութեան մը չկրցավ հասնիլ, երբ իրարու նայիլը երկարեցավ այդպէս,

Սահակ փորձեց վերսկսիլ կիսատ մնացած, շսկսած հոսանք-
ցությունը.

— Լավ, Սոնա, վերջնպես ըսե, թե ի՞նչ կխորհիս հե-
ռագրին մասին: Աչքերուս ատանկ, պարապ նայվածքով մի
նայիր, բան մը ըսե...



Եվ սակայն դուրին ալ չէր խոսիլը, մանավանդ որ եր-
կուքն ալ չէին գիտեր թե որտեղեն պետք էր սկսիլ:

Պիտի խոսեին նյութի մը մասին, որմե ամիսներ ամ-
բողջ խուսափել էին: Նյութի մը շուրջ՝ որ կրնար դժբախ-
տության առաջնորդել զիրենք, երկուքն ալ: Բայց այլևս ան-
կարելի էր խուսափել, թեև այդ օրվան իրենց ժամադրու-
թյունը նպատակ ուներ լավ օր մը ևս, երջանիկ օր մը ևս
ավելացնել իրենց հիշողության վրա:

Ծրագրած էին ամբողջ կեսօրե ետքը միասին անցընել:
Հանդիպիլ հոս, թեյարան. հետո, ինքնաշարժով երթալ մին-
չև Զվիցերական Շալե-ն, ինչպես սովոր էին: Հոն գարեջուր
պիտի խմեին, որուն պիտի հաջորդեր ճաշը ու երկար, ան-
վերջանալի խոսակցությունը, սովորական, պարզ, պզտիկ
նյութերու շուրջ, ծիծաղով, խնդուքով բարեխառնված: Շար-
ժանկարի ժամը իննի ցուցադրության պիտի հասնեին սա-
կայն, ու անկե ետքն ալ պիտի նստեին դեմ դիմաց ու վեր-
ջին սուրճը խմեին: Սահակ պիտի ծխեր միշտ սուրճին հետ
ու երբեմն, շատ բացառաբար, շրջապատեն քաջալերված
Սոնա ընկերակցեր իրեն:

Սովորական նյութերու շուրջ դանդաղորեն առաջ տար-
վող այս խոսակցությունն անվերջանալի պիտի ըլլար, հա-
կառակ իրենց մինակ մնացած ըլլալուն, հակառակ սպասյա-
կին աթոռներուն տեղը մի քանի անգամ աղմուկով փոխած
ըլլալուն, եթե Սահակին մեկ ականարկությունը հաճախ ա-
կամա, պատճառ չըլլար որ Սոնան ոտքի ելլեր ու ժպիտով
մը, զոր միայն ինք կրնար ընել, ըսեր՝

— Բաժնավիճակ, առանց կռիւի, Սահակ, դիտես որ վտանգավոր են այդ նշութերը:

Բնական է պիտի չբաժանվեն, այլ երկուքով, ժպտելով, իրարու թե մտած, իրարու սեղմված, պիտի քաշեն մինչև Սոնայենց տունը. ու երբ կանուխ ըլլար, բան մը որ քիչ կապտահեր, ու լույս ըլլար անոնց պատուհանին մեջ, պիտի բարձրանային մինչև երրորդ հարկ: Սահակ պիտի նստեր խոսակցելու համար քիչ մը հայրիկին ու մայրիկին հետ, անշուշտ առանց վտանգավոր նշութերու մեջ մտնելու: Երբեմն ալ, երբ վարդանը տունն ըլլար, հակառակ Սահակին փափաքին ու Սոնային պնդումներուն, խոսակցութեան նշութը պիտի վերածվեր միջաբանութեան, նույնիսկ բռնեւ երեւոյթ մը պիտի ստանար:

Զարմանալիորեն տարբեր դադափարներ ունեն հայրենիքին ու հայրենասիրութեան մասին այդ երկու երիտասարդները, որոնց երկուքն ալ ուսումնասիրած ըլլալ կթվէին հայոց պատմութեանը, որոնց երկուքն ալ, ապրած ու կարդացած էին մեր պատմութեան վերջին շրջանին բոլոր արհամիրներն ու անորոշութեանները, մեր բոլոր վերիվայրումները: Մեր վերջին անկումին պատասխանատուները տարբեր անկյուններէ կփորձէին գտնել անոնք ու ապագային իրենց երազները տարբեր հիմերու վրա կկերտէին:


Այս ամբողջ ծրագրերէն ոչ մէկը ըրին սակայն, քանի որ անկյունագարծի վրա կեցած էին հիմա, ու որոշում առնելը անհրաժեշտ էր այլևս: Բան մը, որ անիրականանալի, բայց զեղեցիկ երազ մը կթվեր ըլլալ շատերուն, կամ լավագույն պարագային հեռավոր, շատ հեռավոր ապագայի հույս մը միայն, հիմա դարձած էր այժմեական իրականութեան: Հաշերու հայրենիք դարձր՝ օրերու խնդիր էր այլևս, որուն նույնիսկ վարդան կհավատար, թեև չէր խոստովաներ: Ան այլևս Սահակը համոզելու իսկ չէր աշխատեր, այլ կջանար դայն իր քրոջը՝ Սոնայի համակրանքն դուրս հանել:

Հարաբերութեաններու այս հանգույցը տարօրինակ հոգեմիջակ մը ստեղծած էր: Երկու երիտասարդներ, կյանքին

դարձանալի մեկ զուգադիպությունով, հանդիպած էին իրարու, սիրած զիրար, և աշխատած իրարու զգացումները շփրավորել, յուրաքանչյուրը հուսալով որ փոփոխությունը մյուսին մեջ ըլլաւ:

Աղջիկին ծնողքը առաջին օրեն շէր սիրած տղան, անոր դեպքերը ըմբռնելու տարբեր ձևին ու նյութական անորոշ վիճակին համար, բայց ուզած՝ որ իրենց միակ աղջիկը երջանիկ ըլլաւ ամեն դինով:

Արտասովոր այս միության մեջ կային տակաւին Սահակին ծնողքը: Համեստ, աղքատ բայց հաստատուն հավատալիքներով ու գաղափարներով: Անոնք վստահություն ունեին իրենց զավակին ճիշտ ըլլալուն ու դեպքերը ճշմարիտ հասկնալու կարողության վրա, և անկողմնակալ դիտողի դեր առած էին, հավատալով որ Սահակ պիտի կրնար լավագույն լուծումը տալ խնդրին: Մյուս կողմե, Սոնային հանդեպ համակրանք իսկ ունեին, ու սիրով պիտի ուզէին դաշն ընտանիքին մեջ առնել, միայն թէ ան իր վրայեն նետեր իր անցյալի կյանքին շատ մը երեսները ու աշխատեր Սահակը լիովին հասկանալու:



Սահակ շարժում մը ըրավ վերսկսելու համար խոսակցությունը, բայց Սոնա ավելի աճապարեց:

— Սահակ, — ըսավ, — այլեւ չենք կրնար շխոսիլ, չենք կրնար լռել...

Սահակ սպասեց ուրեմն, որ շարունակե. բայց երբ լռությունը նորեն երկարեցավ, հանդարտ, մեղմ, բայց վրստահ ձայնով մը ըսավ.

— Կուրք կարդացեր ես. ինչպէս բոլոր հայերը, այնպէս ալ մենք, տալն ու վրա եղած ենք: Ամեն մարդ իր ձեւով, իր հասկեցած, իրեն նպաստավոր եղող ձևով կընդունի դաշն: Որքան որ կհասկնամ, մեր երկուքին համար տարբեր ձևով կներկայանա խնդիրը... դժբախտություն է այս մեզի...

Սոնա իր ձեռքը բռնեց մեկեն, կարծես շուգեց որ խոսի այդպես, շարունակե այդ ուղղությամբ... բայց չբնդփռեց։ Սահակ սպասեց քիչ մը, հետո ավելի մեղմ, ավելի ցած ձայնով.

—Սոնա՛,—ըսավ,—ի՛նչպես կրնանք ընել, ինչպես կըրնանք շարժիլ մենք, որ մեր սերը անխախտ մնա, շփշրվի շխորտակվի...:

Դարձյալ լռություն։ Սոնա անթարթ կնայեր սուրճին, որ պաղեր էր արդեն, զգալով նույն ատեն Սահակին նայվածքը իր վրա։ Հետո, իրարու նայեցան երկարորեն, կարծես իրար բնավ տեսած չէին, կամ թե վերջին անգամ կտեսնեին։


Սպասյակը փորձեց մոտենալ։ Ան դարձավ սեղանին շուրջ ու զարմացավ այնքան լուրջ տեսնելով զույգ մը, որ զվարճախոս տեսած էր միշտ, որուն հետ մտերմացիր, բարեկամացեր էր գրեթե։ Բայց երբ այդ ձևին տակ անոնց լռությունը երկարեցավ, երբ շատ երկար թվեցավ իրեն, ինքզինք անհանդիստ զգաց և ուզեց որևէ ձևով սթափեցնել գիրենք։ Անոնց շուրջի աթոռներուն տեղերը փոխեց մի քանի անգամ, և ի վերջո եկավ ու սեղանին վրայի սուրճի լեցուն դավաթները վերցուց ավելորդ դանդաղությամբ մը։ Սահակ անդրադարձավ և արարերենով.

— Հոգ չէ, սիրելիս,—ըսավ,—հոգ չէ, այս ալ կանցնի։

Սպասյակը քիչ մը շվարեցավ, բայց ուրախ զգաց անոնց խոսակցության վերսկսելու համար։ Խոհանոցին պղզտիկ պատուհանեն դիտեց, թե ինչպես անոնք խոսեցան իրարու հետ, երբեմն տխուր ժպիտներով, ձեռքի փոքր շարժումներով ու զսպված դիմադժերով։ Քիչ հտք տեսավ նաև, թե ինչպես, առաջին անգամ ըլլալով, երբ Սոնա սեղանին վրայեն վերցուց ձեռքի պայուսակը և ուսը անցընելով քսից սեղաններու մեջեն, Սահակ տեղեն իսկ չշարժեցավ, անոր ետևեն նայելու համար նույնիսկ գլուխը չվերցուց։

Ան ուշադրություն իսկ ըրավ թե անոնց նախաախրած անկյունը, սյունին քովի սեղանը շաբաթների ամբողջ, շարունակաբար շունեցավ իր սովորական մտերիմ զույգը։ Ան

երբեմն խորհեցաւ անոնց մասին, և իրեն համար անծանօթ
այն պատճառին մասին, որ զանոնք հոն չէր բերեր այլևս:



Փետրվարի կիրակի մը սակայն, արևոտ օր մը, անոնք
նորեն իջան թեյարանի սանդուղներեն ու բնազդաբար
իրենց անկյունը գացին: Սահակ սիկարեթ մը վառեց և եր-
կու սուրճ ապսպրեց: Իրարու հետ հեռվեն ծանոթներու պե-
տին ու քաղաքավարութեան բոլոր պահանջները կլրացնէին:
Սահակին մեջ խոսելու վարանում չկար, երբ նստելէ վերջ
շուտով սկսաւ:

— Ամիսէ մը ավելի է որ իրար չենք տեսած, Սոնա, և
այս մեկ ամսվան ընթացքին երկար մտածեցի քու մասիդ,
մեր մասին: Երեք օրէ ի վեր ներգաղթի արձանագրութեան-
ները սկսան, բայց ես սպասեցի որ քեզ հետ տեսնվելէ հաջ-
միայն տունեմ այդ քայլը: Ըսելիք նոր բան մը չունիմ, բացի
անկէ, որ կը մնամ հոն ուր որ էի վերջին անգամ, այս սե-
ղանին առջև: Հայրենիք վերադառնալու ճամփուս վրա ոչ մեկ
արգելքի առջև կանգ կառնեմ: Կուզեմ որ այս բանը գոնե
հստակ ըլլա քեզի համար:

Շունչ առաւ վայրկյան մը, սիկարեթը քաշեց ներս ու ժ-
գին, և անշարժ ու զուսպ, քիչ մը գոց ըսելու պես, շարու-
նակեց:

«Գիտեմ թէ ծնողքդ շատ սիրելուն համար կուզէ հոս
պահել քեզ: Գիտեմ թէ անոնք կրնան նշութապես հանգստա-
վետ կյանք մը ապահովել մեր երկուքին համար, գիտեմ:
Բայց անոնք իրենք զիրենք քեզմէ ավելի կսիրեն ու ատոր
համար կուզեն պահել. իսկ մյուս կողմէ անոնք բնավ պիտի
չկարենան գաղափարական կյանք մը ապահովել ինձի հա-
մար: Ամեն օր ալ ավելի դժգոհ եղող անձ մը պիտի ունե-
նաս քովդ. հավիտենական դժգոհ մը»:

Նորեն կեցաւ քիչ մը, կարծես ըսելիք բառերը փորձեց:
«Չեմ ուզեր ավելորդ խոսքեր ըսել: Կը սարսափիմ հու-

զիշ տեսարաններ ստեղծելէ, բայց կուզեմ ըսել ու վերջնա-
կապէս ըսել, բացատրել կացութիւնը քեզի: Գիտեմ թե
դժվար է քեզի համար զատվիլ ծնողքէ, բայց չէ՞ որ ես հետդ
պիտի ըլլամ միշտ, չէ՞ որ մեր հավիտենական մօր գրկին
մեջ պիտի ըլլանք, կրնա՞ս երկու սեր զոհել, ծնողական սի-
րո համար, որ այս պարագային եսասեր է նույնիսկ»:

Պատասխանի սպասեց, բայց Սոնա չպատասխանեց.
Անիկա մատներու ջղային խաղի մը ետեւէն էր ու զլուխը
չէր քարձրացներ: Սահակ նոր սիկարեթ մը վառեց, բան մը
ըրած ըլլալու համար. ասդին, անդին նայեցաւ, ու երբ ընե-
լիք շմնաց, երբ Սոնա շարունակեց իր մատներուն հետ խա-
ղալ, ըսաւ այն խոսքը, զոր մտադրած էր ամենէն վերջը
ըսել.

— Վաղը մենք արձանագրութեան գրասենյակը պիտի
ներկայանանք: Սոնա՛, մինչև ժամը տասը պիտի սպասեմ
քեզի: Անիկա ոչ թե սպառնալու համար կըսեմ, այլ որով-
հետև կզգամ թե պետք է ըսեմ: Կուզեմ տեղյակ պահել քեզ
մինչև վերջ:

Հիմա ըսելիք չէր մնացած այլևս: Պարպւած էր կար-
ծես: Կարծես ուղեղն ալ ծանր բեռն մը ազատված էր ու
շնչառութիւնը թեթև, ազատ կըլլար:

Այս անգամ սակայն Սոնան անելի մատնւած էր: Ամիս
մը ամբողջ ան պզտիկ լուրի մը սպասած էր, երթալ նետ-
վելու համար Սահակին թեերուն մեջ, թույլ տալու համար,
որ ան գինք տաներ ուր որ ուզեր: Բայց հիմա, երբ ան իր
դիմացն էր, հիմա երբ պզտիկ շարժում մը իր կողմէն զի-
րենք անբաժանելիորեն պիտի կապեր իրարու, աչքին առջև
մայրը կուգար, անկյունին մեջ նստած որ կուլար բաժա-
նումին համար. հայրը՝ որ թիկնաթոռին մեջ օրորվելով, չեր-
թալու խրատներ կուտար, ու եղբայրը՝ որ կպոռար, իր
ձայնին ամբողջ ուժովը կսպառնար:

Սոնա իրապէս անելի մեջ էր: Երկու ձայներ, երկու սե-
րեր գինք կկանչէին, երկու տարբեր, իրարու հակառակ ուղ-

զլութեաններեւ ինչպէս կրնար ինք հաշտեցնել այդ երկու-
քը: Արդո՞ք կրնայի՞ն հաշտվիլ անոնք:

Սոնա լուծում չէր գտներ: Ան Սահակին դեմքին իսկ չէր
կրնար նայիլ: Գլուխը ծռած էր, մատերը ջղային շարժում-
ներ կրնեին, իսկ ուղեղը չէր կրնար լուծել անլուծելի այս
հարցը:

Սահակ պատասխանի երկար սպասեց, բայց պատաս-
խանք ուշացավ: Կարծես բնավ պատասխան պիտի չգար: Ան
առանց աղմուկի ելավ իր տեղեն ու մատներու վրա հեռա-
ցավ առանց ետե նայելու:



Մարդական ակումբի մը դռան առջև, որ արժամյա
կերպով տրամադրված էր ներգաղթի արձանագրություննե-
րուն, Սահակ երկարորեն սպասեց, բայց Սոնա ուշացավ:
Սահակ կռթնեցավ պատին, նայեցավ խռովող բաղմության
ու սպասեց:

Ակումբեն ներս խառնիճաղանձ մը ստեղծված էր: Մար-
դիկ իբար կհրեին, իրարմե առաջ անցնիլ կփորձեին, ավելի
կանուխ թիվ առնելու, ավելի շուտ արձանագրվելու համար:
Կարծես շուտ գրվիլը շուտ երթալու պիտի նպաստեր: Ամեն
տեսակի ու սեռի մարդեր հավաքված էին հոն: Իրարու հետ
կխոսեին բոլորն ալ, իրենց շրթներուն վրա, իրենց աչքերուն
խորը ժպիտ ունեին: Մերուկ մայր մը քովի մարդերը հրե-
չով կանցնի ահա սեղանին առջև. իր թոռները քաշելով իր
ետեն, խորհելով որ անոնց ներկայությունը անհրաժեշտ է
հոն, բացատրելու համար բացակայությունը իր աղջկան որ
գործարանի մը մեջ կաշխատի, ու մեկ օրականի կորուստը
անդարմանալի է այս բաղմանդամ ընտանիքին համար: Իսկ
փեւա՞ն: Վարանումով մը, որ կարծես հանցավոր զգար ինք-
զինք, մեծ մայրիկը կբացատրե թե ինչպէս տարի մը առաջ
հիվանդացած էր ան, պարզ պաղարություն մը, որուն կա-
քերություն չէին տված, չէին կրցած տալ, որ ի վերջո՞
ծանրանալով, տարած էր զայն անվերադարձ:

Արձանագրող երիտասարդը չի կրնար լռեցնել կինը՝ հակառակ որ շատեր կապասեն։ Ան չի կրնար մտիկ շքնել դժբախտութեան պատմութեանը մեկու մը՝ որ ընդհանուր է, և որոնցմէ երեք օրվան ընթացքին արդեն շատ լսած է։

Պատին կռթնած, ընտանիքին ինքնութեան թուղթերը ամփին մեջ, Սահակ մտիկ կընէ, մեկ կողմէ նայելով դուռին, ուրկէ Սոնա պետք է որ դա, անպայման պիտի գա։

Սեղանին առջև եղողը՝ երիտասարդ մըն է հիմա, ամփին մեջ կապոց մը թուղթ։ Քարտուղարը հետաքրքրված ըլլալ կթվի երբ կհարցնէ.

— Հաղիվ երեսուն տարեկան կաս ու հինգ զավակ ո՞ւնիս արդեն։

— Այո, — կպատասխանէ ղորավոր կազմվածքով ու ծանր աշխատավորի տեսքով արձանագրողը։ — Զարմանալի՝ է։ Երբ որքանոցեն ելա, աշխարհի մեջ մինակ էի, միս մինակ, ու դիտեմ թե որքան դժվար է միս մինակ ըլլալ։ Եվ պիտի շուգի որ զավակներս մինակ ըլլան, զրկված ծնողքէ ու բարեկամներէ։ Փառք աստուծո, յսթը հոգի ենք տունին մեջ հիմա, ու հայրենիքին մեջ ավելի պիտի ըլլանք։

Արձանագրողը այդքան բացատրութեան պետք չունէր արդեն։ Իրը պարզ հետաքրքրութեան մըն էր, ուրախութեան հետաքրքրութեան մը։

Սեղաններուն շուրջ մարդիկ կվիստան։ Անոնք կալեկանան միշտ։ Զայները կբարձրանան երբեմն, աշխատանքը անտանալի դարձնելու աստիճան։ Ոմանք կպոռան. «Լռեցեք քիչ մը, ընկերներ», ու դործը կշարունակվի։ Սահակ կորսված է կարծես մարդերու այս ալիքին մեջ։ Ան ալ կվախնա կարծես ուշանալէ։ Պետք է աճապարել, կխորհի, ու շարքին մեջ տեղ կգրավէ։ Սեղանին մոտ է այլեւ։ Տարիքի շարքով կշարե ինքնութեան թուղթերը։ Վրան հայրիկինն է, ընտանիքին ղեկավարը, վերջը մայրիկինը՝ ընտանիքին սիրտը, հետո իրը, իսկ իրմէ ետք...

Մեկը իր թեկն կքաշէ դինքը։ Սոնան է։ Շատ արագ քալելէն թե հուզումեն ան կհեւ։ Սահակ շարքեն դուրս կել-

լի ու սրահին մեկ անկյունը կերթան: Պայուսակեն Սոնա կհանէ իր ինքնութեան թուղթը ու առանց բառ մը արտասանելու կդնէ մյուսներուն քովը, Սահակին ինքնութեան թուղթին ճիշտ տակը: Ընտանքին հարսը:

Երբ կարգը կհասնի Սոնային ու քարտուղարը իրեն կնայի հարցական, Սոնա առանց վարանելու կպատասխանէ.

— Նշանված ենք. մինչև մեր երթալը պիտի ամուսնանանք:

Արձանադրողը կհամոզվի այդ վստահ շեշտէն:

Անխոս դուրս կելլեն: Ճամփան Սոնա կբացատրէ.

— Շատ դժվար եղաւ ինքնութեան թուղթս առնելը: Զհամոզվեցան, բայց վախենալով խենթութիւնէն մը՝ տվին:

Սահակ անոր թեր կսեղմն ու իրարու կժպտին:



Շաբաթներ անցան առանց մասնավոր նորութեան: Ժողովուրդի մեջ զանազան լուրեր շրջան ըրին և անորոշութիւն տիրեց շատերուն համար:

Եվ սակայն, առտու մը թերթերը պոռացին, ի զարմանս կարդ մը մարդոց և բոլորին, թե ներգաղթի լիազոր պատվիրակը եկած էր Բեյրութ: Ամեն մարդ ուղեց տեսնել զինք, ամեն մարդ լսել ուղեց զինք:

Անձրևոտ գիշեր մը, քաղաքին ամենէն ընդարձակ սրահներէն մեկուն մեջ պիտի խոսեր: Սահակ Սոնան տարավ հոն ու հազարավոր մարդերու մեջէն շորս կողմերէն հրվելով հազիվ կրցան ներս մտնել: Զարմանալի չէր իրենց դժվարութիւնը, քանի որ ետքէն լսեցին թե նույնինքն պատվիրակը չէր կրցած մեծ դուռէն ներս մտնել, ու ստիպված, ետէի փոքր դուռէ մը ներս առեր էին զինք: Սրահին երեք հարկերուն վրա կոխելիք տեղ չէր մնացեր ու շէնքին տերը կուլար վախէն ու հուսահատութենէն, թե մի գուցէ կփլի:

Պարզ մարդ մը ելաւ բեմին վրա: Բարի նայվածք մը ունէր, ու ցած, մեղմ ձայն մը: Մարդիկ քարացան ու լռե-

ցին: Անոնք երկար լռեցին ու մտիկ ըրին, երբեմն միայն, կարծես էլեկտրականութենէ մզված, ծափահարեցին խելահեղորեն: Բեմին վրայի մարդը խոսեցավ բազմահազար մարդերուն իրենց հայրենիքին մասին, անոր վերելքին, ուռճացումին, հաղթանակներուն մասին ու մարդիկ իրենց բնավ չտեսած հայրենիքին մասին լսելով հուզվեցան: Բայց հուզումը ցնցող երևույթ առավ երբ պատմիրակը բոլորին սպասած նյութին՝ ներգաղթի մասին խոսեցավ: Ան պաշտոնապէս հայտարարեց թէ այս տարի իսկ, հռենիսին պիտի սկսէր ան անպատճառ:

Այս լուրով գինովցած, այդ գիշեր չէրցան քնանալ մտիկ ընողները: Օրեր ու շաբաթներ անոր մասին խորհեցան ու պատրաստվեցան վերջնական մեկնումին համար:

Սոնան ու Սահակն ալ պատրաստություններ տեսան: Անոնք աշխատեցան համոզել Սոնային ծնողքն ալ: Անոնք անդրդվելի մնացին: Չէին կրնար մեկնիլ տեղ մը, ուր իրենց սեփական վաճառատունը ու իրենց հաշվուն աշխատողներ չէին կրնար ունենալ: Տեղ մը՝ ուր չէին կրնար արգիլել Սոնային ամուսնությունը Սահակին հետ: Մինչդեռ հոս կըրնային:

Նախ արգիլեցին անոնց հաճախակի հանդիպումները, իսկ ետքը, երբ ներգաղթի թվականը մոտեցավ, անոնք վերջնականորեն ըսին, թէ Սահակն ու Սոնան չէին կրնար ամուսնանալ. բնավ:



Եվ պատահեցավ, որ հարյուր հազարավոր սպասողներու մեջեն, Սահակին թիվն ալ ելավ իբրեւ առաջին կարավանին հետ ներգաղթող: Նախ ուրախացավ ան, տունին մեջ երջանկություն եկավ հանկարծ, սակայն շուտով վարանումը պատեց դինք: Ի՞նչ պիտի ըլլար Սոնան: Չէ՞ որ չէր կրնար տեսնել դայն, չէ՞ որ իր ընտանեկան թուղթին վրա արձանագրված էր ան ալ:

Որքան մոտեցավ նավուն դալը, Սահակին մտահոգությունը այնքան մեծցավ: Ամեն ինչ պատրաստ էր հիմա:

Առաջին կարավանին հրավերը ստացած էր: Պետք էր պատ-
րաստ ըլլալ: Հայրը սնտուկները կգամեր արդեն:

Առտու մը նախու սույլ մը արթնցուց զինք: Քաղին
բնակիչներուն հետ տանիք բարձրացավ և տեսավ, թե ինչ-
պես ճերմակ, շքեղ նավ մը եկավ ու կեցավ «քարանթինա-
յին» դիմաց, ուրկե բեռները պիտի բեռցնեին:

Մտածելու ժամանակ չկար այլևս: Հանրակառքը զինք
Սոնայինց տունը տարավ: Դուռը զարնելով ներս մտավ ա-
րագ: Սոնան ձեռքի գիրքը մեկ կողմ դրավ Սահակը տեսնե-
լով այդպես հեռապառ, ու վազելով անոր քով՝ փաթաթե-
ցավ անոր թևերուն: Մինչև այդ ատեն անխոս նստող մայրը
ոտքի ելավ դանդաղ ու մոտեցավ զույգին:

Սահակ ժամանակ կորսնցնել չուզեց: Ան գրկեց Սոնան
ու մորը դառնալով՝

— Մայրիկ, — ըսավ, — ես վաղը պիտի մեկնիմ: Վաղը ա-
ռավոտ նավահանգիստ պետք է ըլլանք, իր մեկնումին հա-
մար ամեն ինչ պատրաստ է: Ան պետք է հետս դա:

Բարկություն և հուզում կային իր ձայնին մեջ ու մա-
նավանդ աճապարանք: Ան շէր ուզեր Սոնային հոր կամ եղ-
րորը հանդիպիլ: Կզգար թե շատ դժվար պիտի ըլլար անոնց
հետ խոսիլ հիմա:

Մայրը վարանեցավ պատասխանելու: Երեքն ալ լուռ
կեցան, առանց իրարու նայելու: Ետքը, դետին նայելով Սո-
նան մոտեցավ իր մորը, գրկեց զայն ու աղաչեց: Բացատրեց
անոր թե կյանքը անտանելի էր իրեն այլևս: Արցունքով
խառն բառերով ան ցած ձայնով խոսեցավ երկար, երկար:
Սահակ նստավ անկյունը ու դիտեց այդ երկուքը որոնք լա-
լով, շշուկով կխոսեին իրարու հետ: Հետո Սահակ մայրիկին
բերնին ծայրը ժպիտ մը տեսավ: Ան մեղմորեն Սոնային
զուխը վերցուց իր կուրծքին վրայեն ու անոր աչքերը սրբ-
րեց քնքշությամբ: Իմաստալից ժպիտով մը ժպտեցավ անոր
ու Սահակին դառնալով:

— Ինչ նստել կեցեր ես, գործ չունի՞ս ընելիք, — ըսավ:
Սոնան վաղը առտու իսկ քովդ կըլլա, մի վախճար...

Սահակ հասկացավ թե ինչու ձայնին շեշտը խիստ էր
այդքան, բայց ուշադրություն ընելու ժամանակ չուներ...



Իրարանցում ու աղմուկ։ Առտուն կանուխ Սոնա եկավ,
սովորական, պարզ կերպով մը—կարծես միշտ հոն եղած
ըլլար։ Սահակին հայրիկն ու մայրիկը դրկեցին ղինք, ճա-
կատեն համբուրեցին ու մեկնելու պատրաստվեցան։ Բեռ-
նատար ինքնաշարժ մը, ուրիշ ընտանիքներու կարգին ղի-
րենք ալ նավահանգիստ տարավ։ Պզտիկ ծրարներ դրկած,
իրարու ետեւն վեր բարձրացան։

Նավուն վրա են հիմա. հարյուրավոր ընտանիքներ
իրենց հետ են։ Ամեն մարդ խըցին մը, անկյուն մը կճարե-
նելու ծերունիները հոգնած ըլլալով երկընցան։ Երիտա-
սարդները կամրջակ բարձրացան։ Քարափին վրա հազարա-
վոր մարդիկ կային։ Մեկնողներուն սիրելիները եկած էին
զիրենք ճամփու դնելու։ Սոնա երկարորեն իր ծնողքը փըն-
տեց, թեև գիտեր, որ անոնք պիտի չգային։ Չէ՞ որ ինք ա-
ռանց իր հորը լուր տալու եկած էր, ինչպիսի կրնար սպա-
սել որ ան դար ողջերթ մաղթելու իրեն։

Իրարու կոթնած, անխոս, երկար ատենե կեցան հոն,
արեւին տակ ու դիտեցին քարափին ժողովուրդը որ կաճեր,
կխլրտեր։ Անոնք դիտեցին քաղաքն ու անոր ծանոթ վայրե-
րը, ուր հանդիպած էին իրարու, սիրած զիրար, երջանիկ
եղած իրարու հետ։

Մեկեն սույլ մը բարձրացավ նավեն։ Մեկնումի աղղա-
րարին հետ ծափեր բարձրացան նավեն ու քարափեն։ Երկու
եղերքներեն երգ մը բարձրացավ։ Զիրենք այնքան երկար
ատեն հյուրընկալող երկրին քայլերդն էր ան, շնորհակալու-
թյան վերջին խոսքը, վերջին արտահայտութիւնը։

«Բոլորս հայրենիքին համար...»։

Երգին վերջին հնչյունը շէր լրացած տակավին, երբ
ուրիշ անկյունե մը, նոր երգ մը բարձրացավ, դալիք նոր ու
երջանիկ կյանքն ավետող, անկե ծնած նոր երգը.

«Մովեստական ազատ աշխարհ Հայաստան...»

Քառերուն հետ հուզումի ալիքը անցավ բոլորին մե-
ջին: Մարդիկ իրենց շրթները սեղմեցին, ու իրենց ամբողջ
կյանքը դրին այդ նոր երգին մեջ, որ հավատքն էր իրենց,
հույսը, երջանկության ավետիսը:

Երգը քարափեն ու նավեն նույն ուժգնությամբ
կրարձրանար: Ներգաղթողներուն համար անիկա նոր կյան-
քին սկզբնավորությունն էր: Մնացողներուն համար դալիք
մյուս նավերն էին, մեկնելիք նոր կարավաններն էին:

Երկրորդ սույլին հետ, բոլորը կամրջակ վաղեցին: Քա-
րափեն ժողովուրդը եղերք խուժեց, իրարու ձեռք երկարե-
ցին. սկսան վարեն վեր ու վերեն վար, բառեր, նախադա-
սություններ պոռալ:

Ահա նավը շարժեցավ: Զայները կեցան մեկեն: Քարա-
փեն հեռացավ դանդաղ: Ամեն մարդ սպասեց շունչը կրտ-
րած: Երկու եղերքների թաշկինակներու հեղեղ մը սկսավ
շարժիլ:

Սոնա փնտրեց տակավին: Մեկեն ցնցվեցավ: Քարափին
այդ անկյունը կեցողը, թաշկինակը աչքերուն դիմաց, իր
մայրն էր, իսկ քովինը... Բայց անիկա իր հայրն էր... ձեռ-
քին թաշկինակ մը ուներ... կը շարժեր: Զինք կտեսնեի՞ն
արդյոք: Ան աշխատեցավ դսպել արտասուքը, որ կոկորդեն
կրարձրանար, աշխատեցավ գոնե վերջին անգամ տեսնվիլ
անոնց, գոնե վերջին անգամ ժպտիլ անոնց: Սակայն ուսերը
ցնցվեցան ու հեծկլտուքը եկավ հեղեղի մը պես:

Սահակ բռնեց ղինքը. գրկեց իր կուրծքնին վրա, թեթե-
վորեն շոյեց անոր մազերը, այտը և իր ներկայությամբ փոր-
ձեց մոռացնել տալ բացակայությունը անոնց՝ որ կմնային:

Նավը նավահանդիստեն դուրս է հիմա: Ան կշտկե իր
ուղղությունը դեպի բացերը: Քաղաքը բարակ մշուշի մը
տակ կմնա հետզհետե, սակայն կամրջակին վրա, հաղարա-
վոր մարդերու հետ կեցած են երկուքն ալ, իրար պինդ գրը-
կած, ու կդիտեն:

ԲՈՒՈՐ ՔԱՌՈՒՂԻՆԵՐԵՆ...

Անոնք հանդիպեցան իրարու Աբովյանի վրա: Երևան: Հանդիպեցան, բայց իրար չճանչցան մեկին: Բաղձության իրարանցումին, երթեկին մեջ անոնք անցան իրարու քովեն, ու մեկեն, կենալով, նույն վայրկյանին դարձան ու նայեցան իրարու, տարօրինակ, մտերիմ, ծանոթ նայվածքով:

— Արեգ... օրիորդ Արեգնազ, — կմկմաց տղան ցած, անհաստատ, հազիվ լսելի ձայնով ու հարցական նայեցավ:

— Մայր Գարայան... Գուրգեն... ըսավ աղջիկը տապ, բնազդական մղումով:

Իրարու մոտեցան ու իրարու ձեռքերեն ամուր քոնած, ուժգնորեն սեղմելով, նայեցան իրարու աչքերուն մեջ, խորը:

Աղջիկը հիշեց տղուն այդ նայվածքը. հիշեց նույնպես թե ինչու Գուրգեն կը նայեր այդպես: Ան հասկցավ հարցումը այդ խիստ, վտանգավոր բայց դեղեցիկ նայվածքին: Ու իր սև մեծ աչքերը փոքրացնելով ժպտաց տղուն իր հին, հետաքրքիր, գրավիչ ժպիտով: Իր ժպիտը, տղուն լուռ կերպով տված հարցին, եղավ ժխտական պատասխան: Այն ատեն, տղուն հոնքերուն միացման կետին վրա կազմված կնճիռը քակվեցավ, տարածվեցավ, կորսվեցավ: Ան նույնիսկ ժպտեցավ թեթև, շրթներուն անկյունովը ու հարցուց.

— Ուրեմն... արդեն Երևանումն եք:

Հարցումն ի հարկե պարզ էր, նույնիսկ մանկական: Թերևս այդ բոլորին պետք էր ավելի լավ բառեր ընտրել, ավելի լուրջ հարցումներ ընել: Բայց աղջիկը այդ պարզ բառերուն ճշգրիտ իմաստը հասկցավ: Ան ուշադրություն

չըրաւ բառերուն առանձին նշանակութիւններուն վրայ: Ան
հասկցաւ մտերիմ, հոգածու խմաստը այդ պարզ նախադա-
սութեան ու այդքանը կրաւեր իրեն: Իր փնտրածն իսկ էր:

— Այո, — պատասխանեց, — Երևան եմ, տեսնում ես...
ո՞ւր կրնայի ըլլալ: Չէ՞ որ այդպէս պայմանավորվել էինք...

— Այո, — ըսաւ տղան, — այդպէս պայմանավորվել էինք,
ճիշտ է, բայց այդ առաջ էր, երկու տարի առաջ, իսկ...

— Իսկ երկու տարին շա՞տ մեծ ժամանակ է...

— Իհարկե երկար ժամանակ է: Երկու տարում ինչեք
ասես շփոխվեցին, չիրագործվեցին:

Լոեցին ու նայեցան իրենց շուրջը: Մարդկային խում-
բեր դեպի վեր կամ դեպի վար կհոսեին անդադար: Կարելի
էր կորսվիլ այդ հոսանքին մեջ:

— Միասին քալե՞նք, — հարցուց տղան:

— Ինչպէս կուզես:

Միասին քալեցին անխոս: Ուրիշներու շղարնվելու հա-
մար անոնք ստիպվեցան իրարու ավելի մոտիկ քալել: Փո-
ղոց մը անցնելու ատեն տղան բռնեց աղջկան թևին ու ալ
չթողուց:

— Ինչեր ասես շփոխվեցին երկու տարվա մեջ, — շա-
րունակեց աղջիկը հին խոսակցութիւնը: — Երկու տարվա
մեջ դուք գրավեցիք Պերլինը, շահեցաք պատերազմը: Ճիշտ
է, երկու տարվա մեջ մենք Ռումինիային Հայաստան
եկանք... շատ բաներ փոխվեցին:

Աղջիկը կխոսեր դանդաղ, ցած ձայնով, յուրաքանչյուր
բառի վրա մտածելով կարծես:

— Շատ բան փոխվեց, — հաստատեց տղան, — բայց ար-
դյո՞ք ամեն բան: Ու կնճիռը եկաւ կեցաւ իր հոնքերուն
մեջտեղ, իսկ Արեգը փոխվե՞ց:

— Արե՞գը, — կրկնեց աղջիկը մեքենայաբար ու լռեց,
չկրցաւ մեկեն շարունակել: Ոչ, ան աշխատեցաւ շփոխվիլ,
մտածումով պատասխանեց աղջիկը: Ան խոստացաւ Երևան
գալ ու եկաւ:

Արեգն ուղեց բարձրաձայն ըսել՝ թե փոխված չէր, թե

մնացած էր ճիշտ նույն աղջիկը, ինչ որ իրենց բաժանումին, կրկու տարի առաջ՝ Բուքրեշում: Բայց չկարողացավ: Տարիներով ինչո՞ւ չէր պատասխանած իր նամակներուն, ինչո՞ւ տողով մը չէր իմացուցած իր ողջ ըլլալը: Ինչո՞ւ թողած էր զինք հուսահատության, տխրության մեջ: Չէ, ոչինչ պիտի չսեր, եթե Գուրգենը հանդամանորեն չբացատրեր ամեն ինչ, ինքզինքը լիովին չարդարացներ: Այս անգամ ավելի զորավոր պիտի ըլլար:

Մարդեր անցան, խոսեցան բարձր ձայնով: Հանրակառք մը ժխորով լեցուց շրջապատը ու հեռացավ:

— Նստինք,— ըսավ Գուրգեն, մի այդիի մոտ:

— Իջնենք, ուշ է,— պատասխանեց աղջիկը:

Նվ իջան: Հակառակ ճամփուն երկարության, խոսակցություն շտեղծվեցավ իրենց միջև: Թեթև բաներ ըսին իրարու, իսկ լուրջ մտածումները, լուրջ հարցումները պահեցին իրենք իրենց:

Գուրգենը մտածեց անակնկալ հանդիպումին ուրախությանը մասին, իրեն բերելիք երջանկության կարելիություններուն, բայց և անոր հասնելու դժվարություններու մասին: Ինչպես պիտի կրնար արդարացնել ինքզինք: Պետք է ամեն ինչ բացատրել այնպես, ինչպես որ է, ևզրակացուց ան պարզացնել: Իսկ պարզը հասկանալ դյուրի՞ն էր արդյոք: Պետք էր Արեգն իր վրա հավատք ունենար, իսկ այդ հավատքը կա՞ր արդյոք անոր մեջ: Միտքերը խառնվեցին իրարու: Ուրեմն նախ պետք էր պարզել իր մեջ: Այո, նախ հստականալ ինքն իր մեջ:

Արեգին համար ավելի էր պարզ ամեն ինչ: Ինչո՞ւ չէր գրած: Ինչո՞ւ Հայաստանի մեջ չէր փնտրած զինք: Արդյոք չէ՞ր տեսած մինչև հիմա ու խուսափած իրմե:

Արդեն հասան այնտեղ, ուր հաստատված էր Արեգին ընտանիքը: Գուրգեն շուղեց ներս մտնել: Ուղեց հետաձգել իր հանդիպումը անոր ծնողներուն հետ: Բայց նույն ատեն ուղեց, որ իրարու հանդիպեն շուտով, ամեն ինչ պարզեն շուտով, երջանկանան հնին պես, հնին չափ:

Երբ պիտի բաժնւնին, տղան նորեն նայեցաւ Արեգին աչքերուն մէջ.

— Իսկ Արեգը փոխւե՞ց, — կրկնեց իր հարցումը:

Արեգին աչքերը փոքրացան դարձաւ ժպիտի մը մէջ:

— Իսկ Գուրգենը... նա ինչո՞ւ որեւէ նամակ չգրեց:



Արեգը պառկած էր փակ աչքերով: Բացահայտ էր սակայն, որ ան չէր քնանար: Մայրիկը խոհանոցի դռնին մի քանի անգամ նայեցաւ ներս, բայց չհամարձակելով կամ խոտակցելու լավագոյնն ձեր շփոնելով, հեռացաւ:

Վերջին անգամ վճռական ներս մտաւ սակայն, բայց անոր անփոփոխ դիրքը տեսնելով փոխեց իր միտքը ու պատահանին առջև նստած իր փոքր աղջկան ուղղելով խոսքը, կամաց փսփսաց:

— Անժել, Անժել, խոհանոց եկուր:

Երբ Անժելը մտաւ խոհանոց, մայրը նույն ցած ձայնով շարունակեց.

— Անժել, Արեգն ի՞նչ ունի, այս երկու օրերս փոխւած է:

— Արեգը՞, — շփոթեցաւ Անժել, — ոչինչ բան չունի:

Մայրը մնաց այնպես, ինչպես որ էր, կիսով մաքրւած դետնախնձորը ձեռքին: Անժել դիտեցաւ թե իր պատասխանը գոհացուցիչ չէր մայրիկին համար: Տեսաւ, թե ինչպես ան մտահոգւած էր իր աղջկան վիճակով ու խղճաց:

— Արեգը մտահոգւելիք բան չունի, մայրիկ, — սկսաւ ան, — երեկ Աբովյանի վրա մայոր Գարայանին հանդիպած է...

— Որո՞ւն, — չհամբերեց մայրը:

— Գուրգեն Գարայանին, չե՞ս հիշեր:

— Չե՞մ հիշեր, ինչպես թե չեմ հիշեր... մայրը լռեց ու շարունակեց մաքրել դետնախնձորները անխոս:

Երբ իր անունը կարտասանեին, Արեգը ուշադրութեամբ, բնազդաբար հետեցավ անոնց խոսակցութեան, բայց երբ անոնք արտասանեցին Գարայանին անունը, որ արդեն անընդհատ կզբաղեցնէր իր միտքը, ան վերադարձով իր մտածումներուն, հանձնվեցավ անոնց ու իր հիշողութեամբ վերադարձով անցյալին:

Իրարանցում ու աղմուկ տարածվեցավ փողոցին մեջ: Մարգիկ վազել սկսան զանազան ուղղութիւններով ու պոռալ զանազան լեզուներով. «ոռւսերը եկան, Կարմիր Բանակը քաղաք մտավ, եկան, եկան»...

Արեգ նախ պատուհանէն կախվեցավ դուրս, բայց երբ գոհացուցիչ ոչինչ չգտավ, սանդուղներէն իջավ ցած ու նետվեցավ փողոց, նետվեցավ մարդերուն մեջ:

Ժողովուրդը դեպի ծայրամասերը կհոսեր իրարու զարնվելով, իրարու վրա պոռալով: Արեգը վազեց այդ ուղղութեամբ: Չանդրադարձով, թէ ինչպէս, ուրիշներու պես, տուներու եզերքներէն փրցուցած ծաղիկները ծաղկեփունջ կազմեցին ձեռքին մեջ:

Արդեն հառաջընթացը դանդաղեցավ ու տեղ մը հասավ, երբ անկարելի ըլլալով, կեցավ: «Կեցցե՛, ապրի Կարմիր Բանակը, մեր ազատարարը» սկսան պոռալ զանազան տեղերէ, ու մարդիկ իրար ճգմելով փողոցին վրա տեղ բացին ժխորով գլտորվող սովետական առաջին հրասայլին: Գլուխներու և ուսերու արանքէն Արեգ կրցավ տեսնել խարտյաշ կերպարանքը առաջին կարմիր բանակայինին, որ կիսով չափ դուրս ելած մեքենայէն, թեթեւ, ինքնավստահ կժպտեր: Առաջին հրասայլին, ու անոր ետեւէն եկող հրասայլերուն բարեկամ հազարավոր ձեռքեր երկարեցան, ու ծաղկեփունջերու տարափ եղավ անոնց վրա: Արեգը չկրցավ մինչեւ կարմիր բանակայինին մոտենալ ու հեռվէն իր փունջը նետեց անցնող զինվորին: Օդին մեջ ան բռնեց փունջը ու

ժպտեցաւ իրեն բարի, շնորհակալություն հասկացող, գնահատող ժպիտով:

Փողոցեն անցնող հրասայլերուն յուրաքանչյուրին հետ թիշ մը քալելէ ետք, ետե մնալով, և ետեեն եկողին հետ ջարտանակելով ճամփան, Արեգը մինչև իրենց տունը հասաւ: Պատուհանեն ան երկարորեն, ժամերով դիտեց անպարտելի աչդ ուժի հոսանքը, որ կուգար, կը հոսեր Արեւելքէն Արեւմուտք: Ուժ մը, որ դեռ երեկի խոժոռ գեմքերուն արտահայտությունը փոխեց, որ ժպիտ ու ծիծաղ, երգ ու սրար տալով մանուկներուն, աղջիկներուն:

Արեգ հանկարծ նկատեց, որ հրամանատարի հադուստով մեկը, ուրախ ժպտելով իր ընկերոջ ցույց տալով իրենց տունը: Ան դարձաւ ու մտրն ու քրոջը նայեցաւ, որոնք նուշնայեալ վարմացած էին, անորոշ զգացումե, մտածմունքներէ տարւած:

Նուշն օրը երեկոյան, ցուցատախտակներու վրայի անունները կարդալով իրենց տունին մոտեցան սովետական երկու սպաներ: Անոնցմէ մեկը նայեցաւ Արեգին հետաքրքիր, համարձակ աչքերով, ու հայերենով հարցուց.

— Սա՞ է բժիշկ Մարգարյանի բնակարանը:

Արեգ անականկալի եկաւ, ան իր սե աչքերը վարմանքէ և ուրախութենէ փոքրացնելով՝

— Դուք հա՞յ եք, — հարցուց. և պատասխանի առանց սպասելու, — երթանք հրամմեցեք մեզ մօտ, բժիշկ Մարգարյանն իմ հայրս է, — ավելցուց:

Արեգ սրտի կսկիծով, կարոտով հիշեց աչդ պիշերվան անականկալ կերպով պատրաստված սեղանը:

«Բարեկամներ, — սկսաւ հայրը, նայելով երկու երիտասարդ զինվորականներուն, որոնք նստեր էին սեղանին գլուխը, — եղաւ աշն, ինչ որ ես ու իմ ընտանիքս, համարյա ամբողջ հայությունը, սպասած ենք անհամբեր ծս

երջանիկ եմ, որ այսօր, այս քաղաքին ազատագրութեան
առաջին օրը, իմ սեղանիս վրա, իմ ընտանիքիս մեջ ունիմ
երկու հաղթական կարմիր բանակայիններ: Իմ ուրախու-
թյունն անչափ է, մանավանդ, քանի որ, այդ երկուքը եկած
են իմ հեռավոր, բայց հարազատ հայրենիքեն, այն երկրեն,
ուր մենք, իմ ընտանիքը, ամբողջ հայութիւնը կբաղձանք
վերջնականորեն հաւաքվել շուտով. եկած են ավերակներու
վրայեն ու արշուներու մեջեն, որպէսզի ազատագրեն ժո-
ղովուրդները: Բարեկամներ, ես կուզեմ առաջին գովաթը
խմել ձեր թանկագին կենացը, սովետ անհաղթ բանակին
կենացը, մեծ հաղթանակին կենացը»:

Արեգը մոտավորապէս հիշեց հոր բառերը, աչքին առջև
պատկերացավ ամենայն մանրամասնութեամբ այն գիշերը
ու հաջորդող օրերը, երբ դանդաղորեն, բայց հաստատ,
մտերմութեամբ հաստատվեցավ, խորացավ իր և Գուրգենի
միջև:

Երկուքով գացին կինո, երկուքով գացին բոլոր հե-
տաքրքրական մասերը քաղաքին ու շուտով զգացին ու ան-
խոս խոստովանեցան իրարու, որ մեկուն ներկայութեանը
անհրաժեշտ էր մյուսին համար:

Բաժանումի վերջին վայրկյանին, անոնք բռնեցին իրա-
րու թևերեն ու իրարու աչքերուն մեջ նայելով ուղիղ, հա-
մարյա միկնույն ատեն:

— Ե՛րբ պիտի հանդիպինք մյուս անգամ — հարցուցին:

«Մյուս անգամ» կրկնեց Գուրգեն ու լռեց, շարունակե-
լով նայիլ անոր աչքերուն: Բայց մինչև մյուս անգամ հան-
դիպելը, մտածեց ան, պիտի երթար Արևմուտք, Գերմանիա,
մեծ կռիւներու մասնակցելու, հաղթանակներ տանելու,
զոհողութիւններ կատարելու:

— Գուրգեն, — կտրեց աղջիկը անոր մտածումները, գու-
շակելով անոնց ուղղութիւնը, — մյուս անգամ, հաղթանա-
կեն հետո, մենք կհանդիպինք Երևան: Այս պատերազմեն
հետո, բոլոր քառուղիներեն մենք վերադառնալու ենք մեր
երկիրը. Երևան կհանդիպինք, կգտնենք իրար:

Այսօրվա պես Արեգ հիշեց շողեկառքի սուշը իր ականջին մեջ, իր սիրտին մեջ... Գուրգենը քալեց, բարձրացավ գնացք: Իրար ձեռքն բռնած մնացին սակայն կարճ ժամանակ մը, մինչև վերջին աղդանշանը:

— Գրե ինձի,— աղերսեց Արեգ, վերջին անգամ, թաշկինակը սեղմելով աչքերուն,— միշտ գրե ինձի:

Տղուն պատասխանը կորավ գնացքին աղմուկին, մարդոց աղաղակներուն մեջ:



Եվ անոնք հանդիպեցան իրարու:

Այս երկրորդ անգամն էր, որ կը հանդիպեին, դուցե վերջինն ըլլար այս հանդիպումը: Խիստ հուզված դեմք ունէր Արեգը, կարծես առջևը ըլլար կարևոր որոշումի. Գուրգենը կանգ առավ նստարանի մը դիմաց ու հանդարտ, ցած ձայնով.

— Նստենք,— ըսավ:

— Նստան: Շուրջի լռութեան պատճառով ամէլի ղդալի դարձավ իրենց լռութիւնը: Փոքրիկ թռչուններ անակնկալ ձայներ հանեցին իրենց շուրջ: Ծառերէն շորացած տերևներ ինկան իրենց վրա:

— Արեգ,— սկսավ Գուրգեն,— չգիտեմ ինչպէս բացատրեմ քեզ, որ դու հավատաս ինձ, որ դու վերացնես քո վրայից բոլոր կասկածները, ու վերաբերվես ինձ այնպէս, ինչպէս առաջ էր, արտասահմանում, Բուքրեշում:

Աղջիկը շարունակեց ուշադրութիւն ընել իր մատներուն. ան ջղային շարժումներ ըրավ, բայց չնայեցավ Գուրգենին, չպատասխանեց անոր:

— Արեգ,— վերսկսավ տղան,— դու իրավունք չունես այդքան խիստ լինելու ինձի հանդեպ, մանավանդ հիմա, երբ տեսնում ես, թէ ոչինչ փոխված է իմ մեջ, թէ ես մնացել եմ նույնը:

— Իսկ ինչո՞ւ չպատասխանեցիր նամակներուն, ինչո՞ւ երկու տարի զիս թողուցիր անհուսութեան մեջ:

Արեգը նայեցավ Գուրգենին. հետո դարձավ մյուս
Պոդմ:

— Արեգ, — համբերութեամբ, հանդարտ սկսավ տղան
դարձյալ, — բայց չէ՞ որ մենք կովում էինք, հանգստի մեջ
չէինք այնտեղ, ճակատում: Գու չէ՞ս հասկանում, որ ես
կարող էի ամեն բոլոր մեռնել այնտեղ, իսկ ինչու գրել այդ-
պիսի դեպքերում: Ես ստանում էի քո նամակները, անոնցմե
յուրաքանչյուրը կյանք էր ինձ համար, անցյալի քաղցր
հուշ, ապագայի հաստատ երազ: Բայց ամեն անգամ, երբ
ուզում էի պատասխանել քեզ, չէի կարողանում: Չէի ուզում
քեզ կապել ինձ, քանի որ ես կարող էի չլինել, իսկ չեղած
մարդուն կապվելը ես լավ չէի համարում...

Վերջավորութեան Գուրգենի ձայնը շունի սկզբնական
հանդարտությունը: Հուզված էր ան ու թեթև դող կար ձայ-
նին մեջ երբ շարունակեց.

— Արեգ, հիշում ես Աշոտը, իմ լավագույն ընկերը:
Միասին ձեր տունն էինք գալիս, միասին մասնակցել ենք
ձեր ճաշերին, դու եկար մեզ ճանապարհ դնելու... և սա-
կայն նա չկա հիմա... նա դռնվեց իմ կողքին... Չէ՞ որ նա
կարող էր վերագրանալ ու ես մնայի այնտեղ, օտար հողի
վրա...

Բնական, համարձակ շարժումով անոնք բռնեցին իրա-
նու ձեռքը ու սեղմեցին ուժով, շատ ուժով:

Արեգն իր արցունքոտ աչքերը դարձուց Գուրգենին ու
այդ նայվածքով, այդ արցունքներով, որոնք անշուշտ իրենց
երկուքին բարեկամ Աշոտին հիշատակին համար էին, անոնք
միացան իրարու, վերջնական երջանիկ կյանքին համար:

Երեկոյան թե թեի, անոնք բարձրացան Աբովյանով.
Իրարու հետ չխոսեցան գրեթե, այլ դիտեցին մարդիկը,
որոնք ուրախ, երջանիկ կհոսեին դեպի վեր կամ դեպի վար:

Չայնասփյուռը վերջացուց Հայկական ժողովրդական
ուրախ եղանակը ու մի քանի վայրկյանի լռութենե հետք,
վերջին լուրերի ծրագրով հայտարարեց.

«Նրեկ, Բեյրութից հայրենադարձ հայերու մի մեծ կա-
ռավան, սովետական «Պրեքա» շոգենավով, ճանապարհ է
ընկել դեպի Սովետական Հայաստան»:

Գուրգենը դարձավ Արեգին, որ սեղմված էր իրեն ու
ժպտալով երջանիկ, փափսաց.

— Բոլոր քառուղիներից գալիս են, չէ՞...:

Օգոստոս 1947. Նրեան

ՀԱԿԱՌԱԿ ԱՅՌ ԲՈՒՑՐԻՆ...

Իր ընտանիքին անդամներին դատ ոչ ոք գիտցավ թե ինչո՞ւ Տիգրան կայարանեն վերադարձավ շատ տխուր։ Կայարանեն մինչև Նոր-Արաբկիր երկարող երկար ճամփան անդանդադորեն քալեց, մոռցած ինքզինք ու իր շրջապատը, կլանված մտածումով մը, հին կյանքի վերապրումով մը որ այսպես երբեմն կտիրեր իր վրան ու ժամերով կվերացներ զինք իր առօրյա հոգերեն ու պարտավորություններեն։

Արտասահման գանվող հայերուն ներդադթի առաջին լուրեն իսկ ցնցված էր Տիգրանին ամբողջ էությունը։ Տարտամ, անորոշ հույս մը որ համառած էր տարիներով իր մեջ, երբեմն միայն հայտնած ինքզինք, հիմա տիրած էր իրեն, մեծցած անհամեմատորեն, վերածված հաստատ հավատքի։ Այդ հավատքն էր որ զինք այդ առտու շատ կանուխեն կայարան էր առաջնորդեր, ու հակառակ տաքին, որ կթափվեր կարծես իր գլխուն, Տիգրան սպասած էր երկարատեն։

Ու հիմա, վերադարձի իր ճամփուն վրա, Տիգրան վերհիշեց անցնող այդ օրը, որը այնքան լեցուն եղած էր հույսով ու հուսախաբությունով, ուրախությունով ու տխրությունով։

Ահա առաջին կարավանին գնացքը, որ եկավ մեծ խանդավառությամբ ու իրարանցումի մեջ։ Շոքեկառթին հեռուն երենալուսն պես, անոր սուլին լավելուն հետ, կայարանին մեջ ու շուրջը հավաքված հազարներով հայերեն բարձրացավ անօրինակ, հուզված աղաղակ։ Մթնոլորտը լեցվեցավ այնպիսի նոր հուզումով մը, որ կրնար ստեղծվիլ միայն,

տարիներով իրարմե բաժնւած, իրարմե բռնորեն, արշունելով անջատւած, բայց իրարու հարադատ մարդերու միացումով:

Շոքեկաւքը եկավ: Դրոշներով, ծաղիկներով ու շնորհակալութեան լողունդներով պատւած էր ան: Անոր պատուհաններէն դուրս ելած էին ալլալլւած դեմքեր, արտահայտութեան եղած դիմադծեր, որոնք ալլեւ մոռցած ամեն տեսակի պատշաճութեան զգացում, լացող աչքերով կդիտէին զիրենք դիմաւորելու եկած դեմքերը ու իրենց մնացած ամբողջ ձայնին ուժովը կշարունակէին երգել այն երգը որ տարիներով պահած էր զիրենք հայ ու իրենց հաստատ ապագային արձագանգողը եղած...

Տիգրան դադրած էր զգալի: Հուզումը կարծեւ խլած էր իրմե խոսելն, երգելու, բարի գալուստի խոսքեր քսելու բոլոր կարողութեաններէն: Ան միայն աչք կտրած էր, ամբողջովին դիտող աչք:

Ինքզինք հագիւլ քաշկրտելով խոնւած, իրար անցան ժողովուրդին մեջէն, առանձին առանձին բոլոր վայրաշարժերը կքններ, անոնց մեջէն երեցող յուրաքանչյուր դեմքին կնայեր ուշադրութեամբ, լափող նայւածքով:

Եւ սակայն իր փնտրատուքը արդշունք չտւաւ: Այսինքն չտւաւ այն արդշունքը որուն կսպասեր: Ան համառորեն փնտրեց մեկը, զոր միայն ինք դիտեր, որուն դիմադծին մանրամասնութեանները փորւած էին իր միտքին մեջ: Բայց երբ կրկին անդամ ըլլալով դարձաւ գնացքին շուրջ ու շրդտաւ, երբ ինքնաշարժերու մեջ լեցվելով դացին բոլոր ներգաղթողները իրենց նոր տունները, միայն այն ատեն հռուահատեցաւ Տիգրան ու դանդաղորեն, առանց որեւէ մեկուն հետ խոսելու, բաբիրոսները իրարու ետեւ ծխելով, Նոր-Արաբկիրի ճամփան ձեռք առաւ:

Կինն ու զաւակները, որոնք առավոտուն այնքան խանդավաղութեամբ ճամփու դրած էին զինք ու իրենց տուն դալիք նոր հշուրներուն համար պատրաստութեաններ տեսած, հասկցան անոր լուսնի պատճառը: Անոնք փորձեցին որեւէ

ձեռով խոսիլ հետը, բայց ան չպատասխանեց։ Ան նույնիսկ իրենց հետ կերակուրի չնստավ։ Անկյունի աթոռին վրա նստած, պատուհանեն դուրս տարածվող մութը դիտեց երկարորեն, հանդարտությամբ ծխելով։ Կինը փռեց իր անկողինը բաց օդին, դուրսը։ Ան կոնակի վրա երկարեցավ ու մինչև ուշ գիշեր, շատ ուշ, երկինքի աստղերը դիտեց անձայն։

Երբ հուսախաբության առաջին տապնալը անցավ ու տրամաբանությունը սկսավ աշխատիլ, Տիգրան խորհեցավ թե իրականին մեջ այդքան ալ անհույս չէր իր վիճակը։ Ո՞վ ըսած էր թե իր եղբայրը առաջին կարավանով պիտի գար, հարցուց ան ինքնիրեն, ով ըսավ, որ ան Սուրիայեն պիտի գար։ Հետո, այնքան քիչ էին եկող հայերը համեմատելով բոլոր անոնց, որ կուզեին գալ և պիտի գային հետզհետե։ Եվ որքան անոր առաջին կարավանով գալու կարելիությունը պղտիկցավ, այնքան հույսը նորեն մեծցավ Տիգրանին սիրտին մեջ։ Ան կրնար երկրորդով գալ, կրնար ուրիշ երկիրե գալ, կրնար շատ բան պատահիլ, միայն թե ան գար, ու ինք ճանչնար զայն անգամ մը։

Վերջին մտածումը ընդվզում հառաջացուց իր մեջ։ Անշուշտ պիտի ճանչնար զայն, առնվազն իր արյունը պիտի ըսեր իրեն իր փոքր եղբոր, իր սիրելի Սուրենին ինքնությունը եթե ան դեմքով փոխված իսկ ըլլար։ Մտածումի այս կետին վրա հանդարտեցավ Տիգրան, ու քունը ծանրանալով աչքերուն վրա ստիպեց զանոնք գոցվելու։ Անոր հանգիստ շնչառության ձայնեն քաջալերված կինը եկավ ու իր վրան ծածկեց մեղմիվ։



Երկրորդ կարավանին գալուն Տիգրան նորեն գնաց կայարան, նորեն դարձավ եկողներուն շուրջ, նայեցավ յուրաքանչյուրին դեմքին, ու երբ բոլորը մեկնեցան, կայարանին մեջ մնաց մինակ, մնաց շվարած, անհույս։

Բայց այլևս իրեն համար սովորութիւնն եղավ կայարան
երթալ, ամեն անգամ նոր կարավանի մը հասնիլը լսելուն:

Ու պատահեցավ այն, ինչ որ սպասած էր տարիներով:
Սուրխայեն նոր կարավան մը պիտի դար, ու ինք դիմավո-
րելու գնաց: Երբ շողեկառքը եկավ ու դանդաղորեն անցավ
իր դիմացեն, պատուհաններեն երեցող դեմքերուն նայած
միջոցին, Տիգրանին արշուներ սառեցավ մեկեն:

Դեմք մը գրավեց ղինք, ու դեպի անոր վազեց, քաշվե-
ցավ անկէ: Առանց ուշադրութիւն ընելու թե զով կը հրեր,
որուն կզարնւիր, ան վազեց դեպի այդ դեմքը, ու հասնելով
անոր պատուհանեն դուրս երկարած ձեռքը բռնեց, ու.

— Սուրեն, Սուրեն, — պոռաց. — եղբայրս, եկա՞ր վերջա-
պէս:

Նույն միջոցին, զարմացումի ալիք մը անցավ Սուրե-
նին դեմքեն: Հոնքերը ամփոփվեցան ու նայեցավ իր ձեռ-
քերուն ամուր կպած, իր աչքերուն մէջ նայող մարդուն ու
վայրկյան մը կեցավ: Այդ կարճ, շատ կարճ բոպեն որ ան-
հունորեն երկար թվեցավ Տիգրանին, լուծեց ամեն ինչ: Ոչ
ոք գիտցավ թե ինչ անցավ Սուրենին ուղեղեն: Ոչ ոք կրնար
շափել մտածումի այն արագութիւնը որ ան ունեցավ: Չեւ
գիտեր մինչև ո՞ւր, դեպի ետ նետվեցավ իր հիշողութիւնը
ու այդտեղեն բռնեց ծանոթ դեմքը որ իր դիմաց կեցած էր:
Կարելի չէ գիտնալ, թե ինչ անցավ Սուրենին միտքեն այդ
բոպեն, բայց ան ճիշդ եզրակացութեան հասավ, քանի որ
պոռաց մեկեն, հուզիչ, խեղդուկ ձայնով.

— Տիգրան, եղբայրս, Տիգրան, Տիգրան...

Թե ինչպէս, մեկը դեպի ներս վազեց, իսկ մյուսը դեպի
դուրս, ու ճամփան հանդիպելով փաթթվեցան իրարու, ատի-
կա կարելի է տեսնել ու զգալ միայն: Բայց եթե նույնիսկ
ուրիշ բառեր չըլլային բառարաններու մէջ, այդ մեկ բա-
ռը, «եղբայրը», արտասանված այդպէս խորունկ ապրու-
մով, բավական էր արտահայտելու ամեն ինչ:

Իրարու ուժգնորեն փաթթված, անոնք նույն բառը
կկրկնէին շարունակ, առանց ուշադրութիւն ընելու մարդե-

քու խումբին, որ համաքված էր իրենց շուրջ ու կդիտեր պատմական այդ միացումը:

Շատ ետք միայն, երբ սրբեցին իրենց աչքերը, ու շտկվեցան, սկսան իրենց շուրջը տեսնել, Սուրեն նշմարեց իր կինն ու զավակները, որոնք անդին կեցած, մոռցված կարծես, զիրենք կդիտեին:

— Ասոնք իմ զավակներն են, — պոռաց Սուրեն, զանոնք Տիգրանին հրելով. — այս ալ Վարդուհին է, կինս:

Տիգրան առանձին առանձին դրկեց ու համբուրեց պըղտիկները ու Վարդուհին, այդ վայրկյանին ան կփափաքեր գրկել բոլոր մարդերը:

— Ես ալ կին ու զավակներ ունիմ, — ըսավ ան, — երկու մանչ և մեկ աղջիկ, — ու հիշելով որ անոնք կսպասեին անհամբեր իր վերադարձին, — երթանք, — ավելցուց, — անոնց քով երթանք, մեր տունը երթանք:



Հյուրերը գացին: Եթե կերուխումի սեղանն արդեն թափուր էր մնացեր: Սուրեն անկյունի բաղձոցին վրա նստավ: Տիգրան բաբիրոս մը տվավ անոր: Կիները սեղանը համաքել սկսան, իսկ փոքրերը, անկյունը փրված փախաթին վրա, իրենց համար նոր աշխարհ մը ստեղծեցին: Չես դիտեր ինչի մասին խոսեցան անոնք, ինչեր պատմեցին իրարու. բայց երբ Տիգրանի մեծ տղան Վլատիմիրը իր պիոներական փողկապը ցույց տվավ Անդրանիկին հպարտությամբ, վերջինը իր «Բաղրամյան» պիոներ ըլլալը փաստեց իր գոտին ցույց տալով: Քիչ ետք, իրարու փաթթված, հինգ պղտիկները քնացած էին այդ անկյունին մեջ:

Տիգրանին կինը՝ Սիրուշը մանրամասն պատասխանեց Վարդուհին ըրած հարցումներուն, ու երկարորեն, ցած ձայնով խոսեցան:

Սուրեն ընկողմանած էր մեկ արմուկին վրա, իսկ Տիգրան դեպի իրեն էր հակած: Երկուքն ալ կծխեին շարունակ ու կխոսեին հանդարտ:

Անոնք խոսեցան անցյալեն, իրենց փոքրիկ, ձյուներու
տակ ու անտառներու մեջ կորսված գյուղեն: Հիշեցին հայ-
րիկն ու մայրիկը, կիսափուլ տունը: Անոնց շարքաշ աշխա-
տանքը հացի մը, երբեմն շոր հացի համար: Հետո հիշեցին
այն օրերը, երբ իրենք զիրենք մինակ գտան մեծ ճանա-
պարհներու վրա, հարչուր հազարավոր ուրիշներու հետ:
Չէին հասկցած թե ինչպես հայրիկը բացակայած էր իրենց
քովեն ու հետո մայրիկը թողած էր զիրենք: Երկուքն ալ
չկրցան բացատրել թե ե՞րբ, ո՞ւր, ինչպե՞ս թողած էին,
կորսնցուցած էին զիրար, ու տարբեր ճամփաներու հետևած:

Անոնցմե յուրաքանչյուրը ըսավ այն բոլորը, զոր սպա-
սած էր ըսելու, իսկ մյուսը գլուխը շարժեց ակնթարթում:
Անոնցմե յուրաքանչյուրը պատմեց այն կյանքը, որ ապրած
էր, իսկ մյուսը ծխեց անընդհատ:

Եվ այսպես, չիմանալով թե գիշերը ինչպես անցավ,
անդրադարձան միասին, թե լույսը ծագած էր դուրսը, վարը
տարածվող քաղաքին վրա, Երևանին վրա, ու արևին ճառա-
գայթեները կտարածվեին ամբողջ Հայաստանի, հարազատ
լեռներուն ու դաշտերուն վրա, արթնցող յուրաքանչյուր
քաղաքացիին դեմքին:

Հոկտեմբեր 1946. Երևան

ԱՅՌ ՏՈՒՆԸ ՄԵՐԸ ՁԵՐ ԱՐԴԵՆ...

Պերճ Սահակյանը այդ օր այնպես շանցավ Լենինի հրապարակեն, ինչպես սովոր էր իրեն:

Չորս ամիսն Երևանի մեջ՝ արդեն իրեն հատուկ անցնելու ձև ունի փողոցներեն, որ նման չէր Բեյրութի իր անցնելու ձևին: Միակ նմանությունը որ մնացած էր, ջութակն էր թերև, որ ինչպես միշտ անբաժան էր իրմե, և եղանակները որոնք իրարու կհաջորդեին իր միտքին մեջ մտածումներուն հետ խառնվելով, նույնանալով հաճախ:

Տուն հասնելով ջութակ չնվագեց ան: Դուռը ետևեն դուցեց ու երբ ինքնիրեն հետ մինակ մնաց, նստավ մահճակալին վրա ու նամակը բացավ նորեն:

Նամակը քրոջմեն էր: Կարոտով, խանդաղտանքով, սիրով ու նույն ատեն դադտնի կշտամբանքով լեցուն սկիզբ մը՝ որ բացատրություն կապահանջեր Պերճեն այդքան երկար լռելուն, իր ծնողքին մասին, մանավանդ իր քրոջ մասին այդքան անհետաքրքիր ըլլալուն համար:

Պերճ աչքերը սահեցուց առաջին պարբերություններու վրայեն, որոնք գիտեր արդեն ու կեցավ տեղ մը ուր երկար ատեն մնացած էր իր նախորդ ընթերցումներուն:

«Թանկագին եղբայր» կգրեր քույրը, «մեր վիճակը վատթարացավ մեկեն. Մարգար հորեղբոր գործը վատացավ ու հայրիկը գործեն հանեց, ըսելով թե ճոնը կրնար վաճառատունը մինակը դարձնել. ըսենք թե իրավ կրնա մինակը աշխատիլ, բայց այդպես կվալեն՝ ր մը իրեն ընել. չէ՞ որ հայրիկը իր եղբայրն է ու միասին բացեր են խանութը: Գործն հանեց, ու ոչինչ վճարեց մեզի: Այլ կրնաս երևակայել մեր վիճակը, մանավանդ հայրիկը, որ անկյունը նստած տնդեն»

չի շարժիր ու հազար աղաչանքներով պատառ մը բան բերանը կղնե: Ամբողջ խելքը միտքը քու վրադ է, քեզ կերազե ու կսպասե այն օրը, երբ քեզ նորեն պիտի տեսնե»:

Պերճ կեցավ ու կարծես երեակայության մեջ տեսավ այդ բոլորը այնպես, ինչպես քույրը կնկարագրեր ու շարունակեց:

«Քեզմե մեկ բան կխնդրենք մայրիկն ու ես, որ մեզի շատ նամակ գրես, մանավանդ հայրիկին քեզի ըրածները մոռնաս. եթե դիտնաս, հիմա այնքան փոխված է ան, այնքան հեղ ու խղճալի դարձած»:

Պերճ դարձյալ մտածեց: Աչքերը սահեցան պարբերությունների վրայեն, էջը դարձուց ու վերջին պարբերության վրա կեցավ.

«Պերճ, աշխատե մեզ շուտով ազատել մեր այս վիճակեն. դիտես թե որքան անտանելի է ան. աշխատե, քանի ուշ չէ, ու դժբախտություն չէ պատահած մեր ընտանիքին: Հայրիկը լավ չէ, Պերճ»:

Թուղթը ափին մեջ սեղմած կեցավ Պերճ. հետո անդառնալից կոնակի վրա երկարեցավ մահճակալին վրա ու մնաց անշարժ երկարատե: Միայն աչքը կենդանության նշանցույց կուտար ու կուրծքը՝ որ կիջներ կելլեր անհամաչափ շարժումներով:



Պերճ հիշեց...

Ուշ գիշեր էր երբ ինք հասավ իրենց տունին դիմաց ու չկրցավ որոշել թե պե՞տք էր ներս մտնել թե ոչ. շարունակել աննպատակ թափառումը, մինչև որ լույսը մարեր իրենց տունին բոլոր պատուհաններուն մեջ: Զուժակը թեին տակ սեղմած, ոտքին մեկը սանդուղին վրա, երկարորեն տատամսեցավ: Որո՞նք կային իրենց տունը այդքան ուշ ատեն: Հորեղբայրը և իր ընտանիքը, մտածեց ան ու զինք կսպասե անշուշտ: Վերջերս այնքան իրմով կզբաղեին, երբ շրջան մը իր մասին լսել իսկ չէին ուզեր:

Պատճառը անծանոթ չէր Պերճին, բայց ինք պետք էր հաղթահարեր անոնց, քանի որ իր ապագային շուրջ կդառնար խնդիրը և ոչ թե Մարգար հորեղբոր:

— Երթամ նայինք, — ըսավ Պերճ ինքնիրեն, ամեն բանի պատրաստ եղողի շեշտով, ու դանդաղ բարձրացավ: Իրենց դուռին առջև կեցավ պահ մը, լայն շունչ մը առավ ու հանդարտ դուռը զարնելով, առանց պատասխանի սպասելու ներս մտավ:

Ներսի ետուն խոսակցությունը կեցավ մեկեն: Բոլորը դարձան ու անոր նայեցան զարմացած: Պերճ իր ակնարկը դարձուց բոլորին վրա ու հանդարտ բարեկց: Մեծեն մինչև փոքրը հոն էին: Հոն էր Մարգար հորեղբայրը, մեծ մարդը, որուն կարծիքը վերջնական ու ընդունելի էր բոլորին, բոլոր հարցերուն մեջ: Անոր քովը՝ իր կինն էր, վերին աստիճանի թուլամորթ, որ նախապես ընդունած էր իր ամուսինին բոլոր ըսելիքներուն ճշգրտությունը և միայն կվավերացներ զանոնք ամեն առթիվ: Իր հորեղբոր մեծ տղան՝ որ երեք տարիեն բժիշկ պիտի ըլլար և զոր սակայն տարիներ առաջ տոբժյոր կկոչեին և փոքր տղան՝ որ խելոք նստած էր անկյունը ու աչքին ծայրով կնայեր Պերճին, որ սուրբ էր ընտանիքին մեջ և որուն անունը համբավ էր ստացած բոլոր վատահամբավ վայրերու մեջ:

Պերճ ուշադրությամբ չնայեցավ իր ծնողքին, որոնք կորսված էին իրենց անկյուններուն մեջ, ճնշված ներկայությամբը Մարգար հորեղբոր և վախով իրենց անառակ զավակին կնայեին: Ան իր ջութակը տվավ իր քով եկած քրոջը և նստավ:

Սպասեց որ սկսին խոսիլ իրեն. ըսեն ինչ որ ունեին ըսելիք, տային բոլոր փաստարկությունները իրեն դեմ, ու վերջնականապես լուծվեր այս հարցը: Ան դանդաղ նայեցավ բոլորին ու բոլորը լռեցին:

Հորեղբայրը սակայն հարմար չնկատեց պահել այդ երկար լռությունը: Ան նախ հաղաց, ձևով մը որ իրեն հատուկ

Յր միայն. մեծ թաշկինակով մը սրբեց իր բերանը լայն շարժումով մը ու Պերճին դառնալով.

— Պերճ, — ըսավ, ձայնին մեջ աշխատելով մեղմութուն դնել. — ամեն օր նոր բան կլսեմ քու մասիդ. և բոլորն ալ գեշ բաներ են, մեր ընտանիքին անունին, համբավին պատիւ չբերող: Դուն գիտես թե ինչ հարգանք վայելող ընտանիք մը եղանք այս քաղաքին մեջ, շնորհիւ իմ և հայրիկիդ ջանքերուն: Դուն գիտես թե ինչպես հանգիստ կապրինք, շնորհիւ մեր վաճառատան: Մեր աշխատանքը ինչի՞ համար է, տղաս. մեր զավակներուն համար. որպեսզի դուք հանգիստ ապրիք ու ձեր ապագան ապահով զգալով, սկսած գործը շարունակեք, մեծցնեք:

Քիչ մը շունչ առավ ու ինքնագոհ նայեցավ իր եղբոր ու կնոջ, որոնք գլուխով հաստատեցին իր ըսածները, նայեցավ իր զավակներուն, որոնք քաջալերեցին զինք որ շարունակե, հետո դարձավ Պերճին, որ կսպասեր անխոս, սպասելով որ վերջացնե ան, թեև վստահ գիտեր թե շուտով վերջանալիք սկիզբ մը չէր:

— Մտիկ ըլլե զիս, տղաս, — շարունակեց ան. — դուն խելացի տղա ես. ասոր համար կխոսիմ քեզի: Կուզիմ որ հասկնաս ու համաձայնիս ըսածներուս: Կտեսնե՞ս, իմ զավակներս ինծի պատիւ բերող մարդիկ դարձան: Պետրոսը բժիշկ պիտի ըլլա, իսկ Ճոնը արդեն մենակը կրնա խանութը դարձնել: Իսկ դուն ի՞նչ եղար: Սկիզբեն մինչև հիմա, անկանոն: Նախ ըսինք քեզի որ համալսարանին մեջ հիմնական բան մը սորվիս, բան մը որ կյանքիդ մեջ օգտակար ըլլա, ընտանիքիդ նյութական ապահովե: Բայց դուն համառեցար. ջութակը առիր ու դացիր, չեմ գիտեր ինչ հաճույք դնելով անոր մեջ: Մեր մեծ ընտանիքին մեջ միայն դուն բացառութիւն եղար. մենք բոլորս ալ լավ շահողներ եղած ենք, իսկ դուն այս տարիքդ հասար, տակաւին ոչ մեկուն ոչ մեկ օգուտ ունիս. գիտես միայն սենյակդ քաշվիլ ու նվազել ժամերով: Կրնա՞ս ինծի ըսել թե ո՞վ ինչ հաճույք կառնե անկե: Չես կրնար. իսկ թե այս կամ այն հաճույքը ըսես,

սուտ պիտի ըլլա, քանի որ ես անձնապէս փորձած եմ, դա-
ցած եմ չես դիտեր որ երաժիշտին որ նվագահանդեսին, ու
ձանձրացած քունս է տարած:

Պերճ պատասխանել փորձեց, բայց Մարգար հորեղբայ-
րը արդեն աճապարեց.

— Պատասխան չեմ ուզեր. կուզեմ որ մտիկ ընես դի-
մինչև վերջը ու համոզվիս: Ես հակառակ չեմ որ նվագես,
քանի որ այդպէս կուզես, մինչև որ սերդ անցնի անկէ: Վա-
ճառատունը միշտ պատրաստ է իբրեւ գործ: Խնդիրին մեծը
բոլոնացի աղջիկին սիրահարվիլդ ալ չէ: Ես աղջիկը տեսա-
աղվոր է: Կրնաս անոր հետ որոշ ատեն մը զբաղիլ, բուն
մեծ խնդիրը ուրիշ է:

Այսքան երկար հառաջաբանե ետք, Մարգար կեցավ:
Երկար շունչ առավ որ հարկ էր իրեն ու.

— Ինծի թաս մը ջուր տվեք,— ըսավ, առանց որեւէ մե-
կուն մասնավորելու ու նորեն Պերճին դարձավ:

— Անցյալ օր հայրդ ըսավ թե տունին մեջ մեծ խնդիր
ըրած ես. Հայաստան պետք է երթանք, ըսած ես, իսկ թե
դուք չերթաք, ես մինակս կերթամ, ըսած ես: Ես չուզեցի
հավատալ—քանի որ քեզ իբր խելացի տղա կձանձնայի, իմ
տղուս տեղ դրած էի. հիմա ըսե ինծի թե ճիշդ չէ, այս բոլո-
րին առջև ըսե թե կատակ ըրեր ես, ուրիշներուն ըրածին
վրա խնդալ ուզեր ես:

— Ճիշտ է,— լսվեցավ Պերճին ձայնը լոռեթյան մեջ.—
ինչ որ հայրս ըսած է, ճիշտ է:

Բոլորը դարմացան այսքան հանդգնութեան վրա. Մար-
գար չկրցավ ըսելիք մը գտնել, ու նորեն «Ինծի գավաթ մը
ջուր տվեք» պոռաց: Ոչ ոք խոսեցավ. Մարգար հորեղբայրը
խմեց: Լոռեթյունը երկարեցավ ու ոչ ոք համարձակեցավ
խղել զայն: Անկյունին մեջ Պերճին հայրն ու մայրը իրենց
տեղերը սեղմվեցան, կծկվեցան ավելի, ու ամբողջ իրենց
տղուն ամոթը զգացին իրենց վրա: Իրենք զիրենք հանցա-
վոր զգացին, որ չէին կրցեր դատարարակել զայն: Ու երբ

Մարգար հորեղբայրը դարձավ իրենց երկար նայվածքով մը, ամբողջ կշտամբանք զգացին այդ ականարկին մեջ:

Վարդան փորձեց խոսիլ իր տղուն. բան մը ըսել որով ան օգնութեան դար իրենց, զիրենք ազատել անտանելի այդ կացութենէն: Բայց ըսելիք չկրցավ գտնել. չկրցավ այնպիսի զորավոր բան մը հիշել որով հաղթահարել, հալեցնել տղուն քարացած սիրտը: Բառերը շրթներուն վրա դողացին, բայց դուրս չեկան: Մայրը գտավ սակայն.

— Պերճ, տղաս, — ըսավ, — չե՞ս տեսներ մեր վիճակը. չե՞ս ուզեր ծնողքդ ազատել. չե՞ս ուզեր որ մենք ձերմակ երեսով դուրս գանք մարդերուն առջև:

Պերճ դարձավ մորը.

— Ճիշդ այդպէս, մայրիկ, — ըսավ. — Կուզեմ որ ձերմակ երեսով դուրս գաք մարդերու առջև. բոլոր մարդերու առջև և ոչ թէ մասնավորներու. Կուզեմ ազատել ձեզ կացութենէ մը որ ծանր է մեր ընտանիքին: Դուք շատ չեք զգար թերեւ, բայց ինձի համար անտանելի է այլևս:

Բոլորին արագ ականարկով մը նայեցավ ու շարունակեց.

— Ես որոշում տված եմ արդեն: Կուզեմ որ դուք ալ միանաք ինձի:

Անհանգիստ լռութիւն իջավ սենյակին մեջ: Մարգար հորեղբայրը հրամայական նայեցավ իր եղբորը ու պարտադրեց որ խոսի այլևս:

Ու վարդան խոսեցավ. և որքան իր եղբոր նայվածքը տեսավ իր վրա, այնքան շփտեցավ թէ ինչ կըսէր, ինչ բառեր կգործածէր իր զավակին դէմ:

— Ուրեմն, դուն այս տունին մեջ գործ չունիս այլևս, — շարունակեց սլոռալ. — ասիկա խելացի մարդոց, խաղաղ մարդոց տունն է. հոս ապստամբներու տեղը չէ: Քանի որ դուն անոնց խոսքին ավելի կհավատաս, անոնք թող հաց կերցնեն քեզի:

Բոլորը իրար անցան: Մայրիկը սկսավ անձայն արցունք թափել. քույրը անզգալաբար մոտեցավ իր եղբոր ու

անոր ուժգնորեն դողացող ձեռքերուն, թեւերուն փարեցաւ։
Հորեղբայր Մարգարին շրթներուն վրա դոհունակ ժպիտ մը
դժվեցաւ, իսկ իր կինը տեղավորվեցաւ իր բաղկաթոռին
մեջ։ Պետրոսն ու Ճոնը կեցան այնպես, կարծես ոչինչ կալա-
տահեր իրենց շուրջ։

Պերճ հաղիվ կրցավ ոտքի ելլել ու կոթնիլ աթոռին,
այնքան կդողար ան ու հուզված էր. բայց իշխեց ինքնիրեն.

— Հայրիկ, — ըսավ, — ես կխորհեի թե այս խնդիրներուն
մասին ավելի հանդարտ կրնայինք խոսիլ, բայց...

Չկրցավ շարունակել, հայրը իր քով հասած էր արդեն
ու դուրս կհրեր զինք։ Մայրիկն ու քույրը դրկած էին զինք
ու կուլացին։ Պետրոսն ու Ճոնը կաշխատեին վարդանք իր
տեղը տանիլ, որ կպոռար ինքզինք բոլորովին կորսնցուցած.

— Դուրս կորսվե տունեն, շուտ, դուրս կորսվի, ու ու-
րիշ անգամ ոտք մի դնել հոս։



Պերճ հիշեց...

Այդ գիշեր Բեյրութի փողոցներեն անցավ մեկը, որ ոչ
դինով էր, ոչ անտուն, այլ տունեն վտարված մը։ Ան ան-
ցավ մութ փողոցներեն, ձեռքերը դրականներուն մեջ ուժգնո-
րեն մխրձած։ Քնանալու տեղ չփնտրեց, քանի որ քնանալու
տրամադրութիւն չուներ։ Առտուն ալ մոտ էր արդեն։ Քալեց
հանդարտ, առանց ջղայնանալու եղածին վրա, քանի որ
պետք չկար բարկանալու դեպքի մը համար որ եղած էր ար-
դեն, ու պատճառները բացահայտ էին։

— Բայց այդ տունը մերը չէր արդեն, ուրկե վտարվե-
ցա, — մտածեց ան ինքնիրեն, երբեմն բարձրաձայն խոսելով.
— անիկա ուրիշի մը տունն էր, որուն վարձքն իսկ մենք
չէինք վճարեր...

Անցավ քաղաքին փողոցներեն, շնայելով ցանցառ այն
անցորդներուն, որոնք ճամփուն երբեմն լայնքին երբեմն եր-
կայնքին կքալէին, շնայելով դիշերապահներուն, որոնց

կրունկին ձայնը կլեցներ լռությունը, շնայելով ոչինչի, բացի իր միտքեն, իր ներսիդին:

— Արդեն այսպեսով կրնար վերջանալ, նորեն մտածեց ան, թեև ավելի լավ վերջ մը անհրաժեշտ էր մեր քնտանիքին: Մեղք մորս ու քույրիկին:

Պերճ անցավ ծայրամասային թաղերեն ու հասավ մինչև ծով ու կեցած այգակս, երկարորեն դիտեց ծովը: Հետո քարի մը վրա նստավ, իսկ ժամանակ մը ետք, երկարեցավ:

Առավոտը երբ եկավ, դինք գտավ նույն՝ ծովը դիտելու դիրքով: Բայց աչքերը դոց էին, գլուխը ուսերուն հակած, հանդիսատեսի մեջ:



Պերճ գլուխը դարձուց, ու կարծես անմիջապես չգիտցավ թե ուր էր:

Նամակը ափին մեջ սեղմած, ան նայեցավ անոր, կարդաց վերջին պարբերությունը անդամ մը ևս, ու ժպտեցավ տխրորեն.

— Ուրեմն այդպես,— ըսավ ան բարձրաձայն, ու անկողինեն ելլելով սեղանին առջև նստավ ու մաքուր հերմակ, թուղթի մը վրա սկսավ իր պատասխան նամակը.

«Ամենասիրելի հայրիկ...»:

ՄԵԺ ԺԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ

Սիրելի Ն. Մաքսիմով

Անահիտ դժվարութեամբ մինչև երկրորդ հարկ հանկցիր ճամփորդութեան պայուսակը, ու լայն շունչ մը առնելովերջ, դուռը հրեց:

Մայր ու աղջիկ իրար դիրկ ինկան, իրար գգվեցին, ըսին իրարու վայրկյանին պահանջած բոլոր սովորական պարզ բաները, բայց հուզվեցան անոնց ազդեցութեան տակ:

Հետո, երբ հանդարտեցան ու Անահիտ տեսավ սենյակին խճողված վիճակը, դարձավ ու.

— Մայրիկ, — հարցուց, — արդեն իսկ եկե՛լ է մեր հարեւանը: Վերջին նամակիդ մեջ ոչինչ չէիր գրել:

Մայրիկը հաստատական շարժեց իր գլուխը: Անահիտ անոր կնայեր հետաքրքրվող աչքերով:

— Իսկ ո՞վքեր են նրանք, ո՞րտեղից են եկել, ի՞նչ տեսակ մարդիկ են, — շարունակեց հարցնել ան:

Մայրը ժպտաց: Իրեն համար նոր հարցեր չէին անոնք: Աղջիկը իր բոլոր նամակներու մեջ էջեր կտրամադրեր նոր եկող հայերուն, կուղեր շատ բան իմանալ անոնց մասին: Արդեն ան չէ՛ր որ թելադրած էր իրեն սենյակներեն մեկը ազատել անոնց համար: Բայց ժամանակ անցած էր արդեն, ու հայրենիք վերադարձած հայերը դադրած էին պարզապես հետաքրքիր ըլլալի: Անոնք դարձեր էին երկրին հարազատ բնակիչները, դարձեր էին քաղաքացիներ ու սկսեր էին ապրիլ երկրին կյանքով, աշխատիլ երկրին համար:

Այո, մայրիկին սովորական դրացիներն էին անոնք, բայց Անահիտին համար նոր էր ամեն ինչ: Ան միայն հեռ-

ձեռք լսած էր եկած հայերուն մասին, մոռածած, երևակայած զանոնք: Անոնցմե մեկուն հետ խոսիլը փափաքելի բան էր արդեն, ո՛ւր մնաց երբ սենյակդ տրամադրած ես անոր, կի՞սած անոր հետ տունդ, ինչպես կիսած ես կյանքդ:

— Մեզ մոտ ընտանիք չի եկել,— դարձավ մայրը աղջկան,— մի երիտասարդ են տեղավորել քո սենյակում:

— Մի երիտասա՞րդ,— դարձացավ Անահիտ, կարծես հիասթափված, կարծես մտածելով, որ շատ մեծ, բազմամեդամ ընտանիք մը պետք էր բերել իր փոքրիկ սենյակին մեջ, հետո շարունակեց,— ի՞նչպես մի երիտասարդ, ապա նա ընտանիք չունի՞, ինչո՞ւ է մենակ եկել:

— Զգիտեմ,— պատասխանեց մայրը,— նրան շատ էլ շենք տեսնում: Նա առավոտները վաղ է զարթնում, իսկ գիշերները ուշ, երբ ես պատրաստվում եմ քնել, հենց նոր նրա լույսն է վառվում:

— Իսկ ի՞նչ է անում, հետաքրքիր է:

— Զգիտեմ:


Աղջիկը դժգոհ նայեցավ մորը: Ինչպե՞ս կարող էր պատահել, որ այդքան երկար նա ապրեր իրենց մոտ ու մայրը չգիտենար, թե ինչ էր անում այդ մենակ երիտասարդը: Մի-թե նա սրեկ կարիք չունե՞ր: Ո՞վ էր եփում նրա ճաշը, ո՞վ լվանում նրա շորերը:

Անահիտ այս բոլորը չհարցուց իր մորը, բայց մայրը զգաց աղջկան իր մասին աննպաստ մտածումները ու փորձեց փարատել զանոնք:

— Մի վախենա, ես անում եմ, ինչ որ կարելի է անել: Ես քանիցս գնացել եմ իր մոտ, հարցրել եմ թե ինչի՞ կարիք ունի, նա քաղաքավար պատասխանում է միշտ թե ոչինչի կարիք չունի: Հուզվում է ու հրաժարվում: Վերջերս միայն, երբ շատ պնդեցի, նա իր շորերը տվեց, որ լվանամ: Նա մեկ-մեկ գալիս է ինձ մոտ, հարցնում իմ որպիսությունը:

Աղջիկը կպատրաստվեր նոր հարցում մը ընել, երբ մայրը նշույթը փոխեց.

— Դե լավ, հիմա պատմիր քո մասին: Ասա, ինչ նոր բաներ ես աքել Մոսկվայում:



Անահիտի հետաքրքրութիւնն օրերով շահեցված մնաց։
Հարմար առիթ չեղավ որ ծանոթանար իր սենյակը բնակող
երիտասարդին հետ։ Դեպքերը անանկ դասավորվեցան, որ
միշտ զբաղված եղավ։ Այցելեց իր նախկին դասախոսնե-
րուն, որոնք հպարտացած իրմով, զինք ներկայացուցին զա-
նազան շրջանակներու մեջ, միշտ գովելով, միշտ մեծ ապա-
գա գուշակելով իրեն համար։

Անգամ մը սանդուղին վրա հանդիպած էին իրեն, երբ
շուկային կվերադառնային մօրը հետ, ու երբ բարեկէ հետ
ան կպատրաստվեր հեռանալ, մայրը ներկայացուցած էր
զինք.

— Աղջիկս, Անահիտը, ծանոթացիք։

Ձեռքի պարզ, անկեղծ, զորավոր սեղմում մը, մեծ աշ-
քերուն մեջ գեղեցիկ ժպիտ մը, անկեղծ, մաքուր ու արտա-
սանված կարճ խոսք մը.

— Շատ ուրախ եմ։

Ահա ասոնք մնացեր էին Անահիտի մտքին մեջ։

Անկէ ետք ամեն անգամ, պատահմամբ երբ կը հանդի-
պէին միջանցքին մեջ, սանդուղին վրա, կամ փողոցին մեջ,
տղան գլխարկը կհաներ պատշաճ քաղաքավարութեամբ, ու
կը ժպտեր մեղմ, գլուխի թեթև խոնարհեցումով մը։



Իրարու մոտենն ծանոթացան անակնկալ հանդիպումով,
օպերայի դռան առջև։ Երկուքն ալ ուշացած էին, ու ամա-
պարանքով խոյացան դրամարկդին վրա։ Անոնց ուսերը
դարնվեցան իրարու, հակառակ իրենց փափաքին, ու տղան
հազիվ կրցավ մեկ կողմ քաշվիլ ու առաջնութիւնը տա-
մյուսին։ Աղջիկը անտարբեր, նուշնիսկ քիչ մը կշտամբան-
քով դարձավ տղուն, բայց ճանաչելով զայն, ու տեսնելով
անոր ներողութիւն խնդրող վիճակը, ժպտալով հարցուց.

— Դո՛ւք էլ, երևի ինձ պես ուշացել եք տոմս վերցնելու:

— Հա, այո... պատասխանեց տղան անակնկալի եկած: Տոմսավաճառը շարաճճի աչքերով նայեցավ անոնց ու տոմսերը երկարեց:

Օպերայի սրահին մեջ, կողք-կողքի նստած՝ անխոս դիտեցին առաջին արարը: Դադարին սրահ ելան տարբեր կողմերե, բայց վերադարձին երբ հանդիպեցան իրարու, աղան թեթև ժպիտով մը, ճամփա տվավ աղջիկին, որ անցնի:

Զույկովսկիի երաժշտության ազդեցության տակ, անոնք շկրցան խոսիլ, թեև ուղեցին, վախճալով որ կխառնվեն երաժշտությունն ու դաշն լսողները: Երբեմն միայն, կողքով իրարու նայեցան, ու իրարու նայվածքը բռնելով, դարմացան և ուրախացան:

Երկրորդ դադարին աղջիկը դուրս չեկավ: Տղան զսպեց ծխելու իր փափաքը ու նույնպես մնաց իր տեղը նստած, նայելով բեմին, որ գոց էր անշուշտ և այնքան երկար ու խորասուզված նայելու ոչ մեկ պատճառ կներկայացներ:

Կարված այս վիճակը երկար շտեկեց: Աղջիկը ավելի համարձակ եղավ ու հարցուց ամենասովորական հարցումը այս պարագային.

— Հավանո՞ւմ եք մեր օպերան:

Իհարկե հավանում էր, բայց պատասխանելի առաջ, ան դարձավ և նայեցավ անոր աչքերուն, որոնք սև էին ու ժրպտուն: Աղջիկը ըսավ, թե ինքը այնքան էլ շատ չէր հավանում դերասանուհիներին, բայց գալիս էր երաժշտությունը լսելու, որ այնքան գեղեցիկ էր ու վեհ, ու տանում քեզ՝ այն կյանքին, ինչ որ նա է պատկերացնում:

Տղան նկատեց, որ աղջիկը եղանակներու մասին կխոսեր այնպես ազատ, ինչպես իրեն՝ շատ ծանոթ նյութերուն:

— Կերևի մասնավոր հետաքրքրություն ունիք երաժշտության հանդեպ, արդյոք դաշնակահարուհի՞ եք, — հարցուց:

— Ոչ, — ժպտեցավ աղջիկը, — ջութակ եմ նվագում:

Պատասխանին «ոչ» ըլլալը, հազիվ թե պիտի հիասթափ

ընէր տղան, երբ անոր ջութակահար ըլլալը անակնկալի բերով ու չկրցավ «ի՛սկապես» մը փախցնել բերնէն:

Աղջիկը լրջացավ:

— Ինչո՞ւ եք զարմանում, — հարցուց ան, — արդյոք ձեզ մոտ ջութակահարներ չկայի՞ն:

— Աղջի՛կ ջութակահարներ, հազիվ թէ, — պատասխանեց տղան, նույնպէս լուրջ, — մեզ մոտ օպերա ալ չկար...:

Հաճելի այս խոսակցությունը կարող էին դեռ երկար շարունակել անոնք, եթէ դադարը չվերջանար ու սրահին լոռեթյունը իրենց լռել չպարտադրէր:

Բեմին վրա «Կարապին լիճը» ավելի ու ավելի գեղեցկացավ: Երաժշտությունն իր հետ իր աշխարհը տարավ բոլորը, իսկ «կարապը» իր պարով իրեն գրավեց բոլորին ու շաղրությունը:

— Շատ լավ է պարում, — փափսաց աղջիկը տղուն ականջն ի վար, ու տղան պատասխանեց նույն ձևով.

— Եվ շատ գեղեցիկ է...:

Դարձան, իրարու նայեցան և ժպտացին:

Վերջին դադարին միասին սրահ ելան: Տղան ծխեց, իսկ աղջիկը քալեց իր հետ սրահի երկայնքին: Հետո, հարցուց մեկէն, կարծես շարունակելով նոր ընդհատված խոսակցությունը.

— Իսկ դուք երաժշտությամբ չէ՞ք հետաքրքրվում:

Տղան անմիջապէս չպատասխանեց. ան ծովալը դուրս տալով իր շրթներէն, ուշադիր նայեցավ աղջիկին ու հետո միայն.

— Ինչպե՞ս չէ, — ըսավ, — բայց զիս կհետաքրքրեն մանուկանդ երաժշտությամբ զբաղվողները:

Աղջիկը դժգոհիւ ձևացուց.

— Աչ, կատակ չեմ անում, — ըսավ ան:

Տղան նույն եղանակով շարունակեց:

— Զիս կհետաքրքրեն նույնպէս տուներուն երաժշտությունը, թէ ինչպէս շինված են անոնք, ինչպէս իրարու հարմարած, թէ ոչինչ չի խանգարում անոնց ներդաշնակությունը, և թէ...

— Ճարտարապետ եք, — հարցուց աղջիկը մեկեն, ընդհատելով զայն ու թույլ շտալով որ ան ավարտե իր հետաքրքիր տեսութիւնները:

— Ինչո՞ւ կզարմանաս, — ըսավ տղան պարզ, — կը կարծես թե չկա՞ այդ տեսակ բան, սպասե ես բացատրեմ...

— Իսկ հիմա ի՞նչ եք անում, — դարձյալ ընդհատեց աղջիկը:

— Հիմա՞, — հարցուց տղան, շարացնելով իր շեշտը, — ջութակահար, գեղեցիկ աղջկա մը հետ կը խոսիմ: Ու ժպտեցավ անոր աչքերուն մեջ:

Աղջիկը չկրցավ իր բարկութիւնը արտահայտող բառ գտնել ու անդոր ժպտեցավ: Տղան շեշտը փոխելով շարունակեց.

— Շուտով պիտի կարենամ մարդերուն հետ հպարտութեն խոսիլ, ու անոնց ցույց տալ շենքեր, ըսելով, Երևանի սա տունը ես եմ հեղինակած, ես, որ օտար հողերու վրա բացի աչքս, ու ճանչցա հայրենիքը գիրքերու մեջեն ու ծերունիներու պատմածեն... Դուն չես կրնար պատկերացնել, թե ինչ պիտի զգամ ես այն օրը... այդ զգացումը կարելի չէ հասկանալ, կարելի չէ բացատրել, այլ միայն զգալ: Ուսանողութեանս շրջանին ամեն անգամ կըսեի ձայնասփյուռը որ կը խոսեր հայրենիքի վերաշինութեան գերմարդկային ճիգին մասին: Խորունկ ցավ մը, անկարողութեան զգացում մը կը պատեր զիս: Կը վախճայի թե կրնար մեր սերունդին ալ ըլլալ այն, ինչ որ եղավ տաանյակ սերունդներուն: Հակառակ հաստատ հավատքիս, հակառակ գիտնալուս թե փոխված էր դարը, բնագոյական վախը չէր լքեր զիս...: Այնքան խաբված էինք, այնքան մոռացութեան դատապարտված, ու այնքան խաբողներ կային տակավին...:

Սկսելու երկրորդ զանգը հնչեց, ու նոր միայն անդրադարձան, թե մենակ էին մնացեր:



Ժպերայեն վերջ միասին տուն գացին, ու այդ բնական եղավ երկուքին համար ալ: Ճամփան՝ ան աղջկան թեք մտավ

ու շուտով զգաց թե սովորականն ավելի ուժով կը սեղմեր զայն:

Աղջիկն ալ զգաց այդ, ու հաճույք զգաց այդ պատակ-
ցութենէն: Ուրիշ ձևով անբնական պիտի ըլլար, թվեցավ
իրեն:

Տղան նույնիսկ ուզեց մտիկ ընել աղջկան մեկ նվագը,
իսկ աղջիկն ալ ուզեց լսել անոր կառուցելիք տուներուն
մասին, և կամ թե ինչպէս էր ապրեր հեռու հեռավոր ուրիշ
երկիրներու մեջ, բայց ժամանակը շատ ուշ էր, ու բաժան-
վելը ամենէն հարմարը նկատվեցավ:

Այսուհանդերձ կարելի չէր բաժանվել այդպէս, իբրև
պարզ ծանոթներ, անակնկալորեն իրարու հանդիպած, բա-
րեկամութեան անորոշ մեկ աստիճանին վրա, երբ այդքան
մոտեցեր էին իրարու, ու այնքան որոշ դարձեր ամեն ինչ:



Անոնք ուզեցին իրար հաճախ տեսնել: Ու տեսան:

Սակայն, աղջիկը արձակուրդով եկած էր Մոսկվայէն,
ու իր վերադարձը՝ անհրաժեշտ: Այդ մասին առաջին անգամ
փոսեցան, երբ մաղվող ձյունի տակ, հանդարտ քայլերով կը
վերադառնային գիշերային պտույտե մը:

Աղջիկը բացատրեց ամեն ինչ որ զինք կստիպեր վերա-
դառնալ: Ան տվավ բոլոր տրամաբանական պատճառները,
որոնք իր կարծիքով անհրաժեշտ էին, ու եղբակացուց.

— Պետք է գնամ, չէ՞, Սահակ, — ըսավ ան, — ու դուն պետք
է շտապէս այս բաժանման համար: Դու լավ գիտես, թե ի՞նչ
է նշանակում ինձ համար իմ Մոսկվա գնալս: Գիտես թե
տարիներ ամբողջ ես իմ երազներս, իմ կյանքս կապել եմ
այն օրվան, երբ պիտի վերադառնամ ու Երևանում իմ առա-
ջին համերգը պիտի տամ: Դու այնքան...

Սահակ շթողուց որ ան շարունակե: Ան արդեն զգացած
էր իր տալիք բոլոր պատճառաբանութիւններու փոքրու-
թիւնը: Ան իրեն սեղմեց աղջկան թևը.

— Այնք է երթաւ, այդ մասին ոչ մի խոսք, պետք է շարունակեն ուսումդ ու ավարտես Մոսկւայի երաժշտանոցը, ու ինծի վերադառնաս իբր լման ջութակահար մը, բայց թե ես պետք չէ ցավիմ, այդ ուրիշ բան է, զոր դժվար է խոստանալ:

Աղջիկը ինքզինք սեղմեց տղուն դեմ, ու այդ շարժումով արտահայտել ուզեց և շնորհակալութիւն, և վիշտ, և մխիթարելու փափաք իր ընկերը:

— Դուն աշխատես շուտ ավարտել,— շարունակեց Սահակ, ջանալով ձայնը հանդարտ պահել,— աշխատես շտկարանալ և օգտւիլ բոլոր ներկայացող առիթներէն:

— Բայց մինչև ամառ ի՞նչպես պիտի դիմանամ,— տկարացաւ աղջիկը մեկեն,— ինչպե՞ս պետք է բաժանվիմ քեզանից, ինձ այնպես է թվում, որ ողջ կյանքս քեզ հետ եմ ապրել...

— Մինչդեռ նոր ծանոթացանք իրարու,— անոր միտքը շարունակեց տղան, հետո, ցած, ավելցուց,— ի՞նչպես դիմացար քսան տարի, այն ատեն որքան հեռու էի քեզմէ, օտար երկրի մէջ, իսկ հիմա...

— Այդ ժամանակ ես քեզ չէի էլ ճանաչում...

— Ես քո գոյութիւնդ իսկ չէի գիտեր...

Իրարու նայեցան, ժպտալով մութին մէջ, կարծես իրարմէ շնորհակալ կըլլային, որ մեկը մյուսին գոյութիւնը գիտեր ու իրար արդեն իսկ շատ լավ կճանչնային: Ու այնքան ուրախ էին այս պարզ գոյութին համար, կարծես ասիկա մեծ փառք ըլլար, մեծ պատճառ ըլլար, որ ալ իրար շնորհակալին անոնք, իրար հիշեին միշտ ու իրարով ապրեին, երբ հեռու ըլլային իրարմէ:

Այդպէս, թեանցուկ, բարձրացան Աբովյանով, դարձան կողմնակի փողոց մը, աղջկան սենյակը ելան:

Մայրիկը տրթուն էր տակաւին ու կսպասեր՝ վառարանին քով: Անիկա հարցական նայեցաւ իր աղջկան ու թեյնիկը վերցնելով՝

— Թե՛յ տա՛մ, Սահակ, — հարցուց, ու լեցուց բաժակները:

Սահակ օգնեց Անահիտին, որ վերարկուն հանե, իրն ալ կախեց ու նստավ անխոս:

— Վաղն առավոտյան պիտի մեկնիմ, մայրիկ, — ըսավ Անահիտ մորը դառնալով, — պետք է դիշերվանից պատրաստվել:

Մայրը ժպտեցավ, հասկացավ թե ինչու կըսեր իրեն իր աղջիկը և ուրախացավ: Ուրեմն համաձայնե՞ր են: Քանի Սահակը հանդարտ վերադարձել է, ու Անահիտը ազատ կխոսի մեկնումի մասին, կը նշանակե ամեն ինչ լավ կընթանա: Մայրիկը եզրակացուց իր մտքերը աչքովիսով, ու գուրգուրանքով նայեցավ Սահակին, կարծես իր հարազատ տղան էր ան:



Շոգակառքը եկավ ու Անահիտ նստավ անոր մեջ: Սահակ չհեռացավ: Իրարու նայեցան երկար ու անխոս ժպտեցան:

Ճամփորդներու աղմուկը երթալով բարձրացավ իրենց շուրջ: Մարդիկ բաներ ըսին իրար, իրարու խոստումներ տվին ու երգումներ ըրին զանոնք պահելու համար: Սակայն Սահակ ու Անահիտ մնացին անխոս: Անոնք չհասկացան նույնիսկ իրենց շուրջ ըսված բառերուն իմաստը: Լսեցին զանոնք իբր անորոշ հեռավոր աղմուկ:

Բայց երբ երթալու ազդանշանը տվավ, երբ իրարանցումը շատցավ, անոնք նոր հասկացան կարծես, թե ինչ կը պատահեր: Սահակ աճապարանքով ձեռքը իր ծոցի զրդանը տարավ իր մեկ նկարը հանելով, երկարեց Անահիտին:

Անահիտ նկարը դարձուց: Մակադրված էր: Ու ժպտեցավ մեղմ ու ներող: Ուրեմն Սահակին համար ամեն ինչ պարզ, հստակ չէր: Ուրեմն պետք էր իրարու նվեր տալ, կանխամտածված, որպեսզի հիշեին իրար. մինչդեռ իրեն

համար ամեն ինչ պարզ էր արդեն։ Ոչ մեկ մութ կետ էր մնացած իրենց հարաբերությունների մեջ։ Անոր աչքերուն մեջ նայեցավ խորը ու հասկցավ թե ուրիշ կուգար անսպասման արտաքին կապերով կապվելու անոր պահանջը։

Տղան սպասեց։ Նվեր չուզելու պետք չկար։ Անահիտ զգաց որ ան կապասեր ու չգիտցավ ինչ ընել։ Հասկցավ թե տղուն համար անհրաժեշտ կթվեր հիշատակին նշան մը ստանալը։ Այո, մտածեց, լավ էր իրարու նվեր տալը, բայց ինչո՞ւ անհրաժեշտ ըլլար ան։

Անորոշ վիճակով ձեռքին մեջ դարձուց փոքրիկ պայուսակը։ Հետո, կարծես տեղի տալով, բացավ զայն։ Հանեց նկար մը։ Իր մեկ փոքր նկարը ու արագ մակագրելով երկարեց Սահակին։ Նրբ իրարու նայեցան, կարծես իրար միտքը լրիվ հասկցան։ Ու երջանիկ էին իրենց լուռ իրար հասկացողութեան համար։

Գնացքը շարժեցավ մեկեն։ Անակնկալի եկած Սահակ ոչինչ գտավ ըսելու, ոչինչ, որ կարենար արտահայտել ինչ որ կզգար։

— Վերադարձիդ շատ հաջող համերգ պիտի ունենաս, չէ՞, — հարցուց հանկարծ։

Արդեն դանդաղ, կը հառաջանար շոգեկարքը։ Սահակ կը քալեր քովն ի վեր ու պատասխանի կապասեր։ Կարծես կենսական հարցում մը եղած ըլլար, պատասխանելն անհրաժեշտ կթվեր Անահիտին։

Հիմա Սահակ հաղիվ կրնար հասնիլ։ Ամեն կողմն աղմուկ կը բարձրանար ու Անահիտ չէր կրնար պատասխան դառնել։ Հանկարծ պտույց ան, ու գնացքին հանած ձայնին մեջեն իր ձայնը հաղիվ հասավ Սահակին։

— Իսկ դու, մինչև այդ՝ քանի՞ տուն կառուցած պիտի լինես։

Այլևս ոչինչ հասկանալի եղավ ըսվածներեն։ Սահակ կեցավ։ Կարելի չէր հասնիլ։ Ձեռքը վերցուց ու շարժեց անոր, որ կը հեռանար, կկորսվեր։



Վերադարձին, Սահակ մի քանի քաջ առնել է ետք, նա-
յնցա՛մ նկարին որ ձեռքն էր մնացել: Կարդաց մակագրու-
թյունը: «Բժ Սահակին՝ մեր երջանկության անխախտ հա-
վատքով», ու դարձուց նույնցա՛մ Անահիտին, անոր աչքե-
րուն, ու անոնց խորության մեջ կարծես տեսավ Բեյրութը:
Արաք հիշեց իր ամբողջ կյանքը այդտեղ, իր պայքարները,
իր սպասումները, իր մտածումները հայրենիքին մասին, որ
այնքան սիրելի էր ու հեռավոր, կարծես անմատչելի բար-
ձունքի վրա: Հիշեց ճամփորդությունը, որ բրեր էր ինք, որ
բրեր էին իրենք, իր հայրն ու անոր հայրը և դեռ շատ շա-
տեր, տարիներ, դարեր շարունակ: Հիշեց սահմանը, փոք-
րիկ աննշան կայարան մը որ մեծցավ, գեղեցկացավ: Ու
մարդիկ, որ իրար կը համբուրեին, իրենց հողը համբուրած
քերաններով: Ու Երևանը, նոր մայրաքաղաքը նոր հայրենի-
քին:

Երևան... Սահակ իր շուրջը նայեցավ: Արևի ճառա-
գայթեհրու տակ Արարատը կը տեսնվեր ամբողջութեամբ,
հստակ, կարծես նոր էր վերադարձած, ու առաջին անգամ
կը տեսներ զայն: Ու զգաց թե վերջացած էր ճամփորդու-
թյունը: Վերջացած էր, քանի հասած էր իր նպատակակետին:

Սահակ ժպտեցավ ու զրպանը դրավ սիրած աղջկա
նկարը:

ՎԵՐՋԻՆ ՀԱՍՅԵՍ՝ ԵՐԵՎԱՆՆ Է

Ես իր անունը չհարցուցի, քանի որ անհրաժեշտ չեղավ այդ: Մեկը կարելի է ճանշնալ, խոսիլ հետը, բարեկամանալ նույնիսկ առանց իր անունը գիտնալու, առանց իր որուն գավակը կամ թոռը ըլլալը հասկնալու:

Մեր հանդիպումը կամ բարեկամությունը, եթե կարելի է երկրորդ քառը գործածել, պատահմունքի արդյունք էր:

Համալսարանի նրբանցքին վրա, արտասահմանյան ծանոթի մը հետ անգլերեն լեզվով աննշան նյութի մը շուրջ կխոսեինք: Մեր մոտերը ուսանողներու խումբեր կային, շարժումի մեջ, կամ խոսակցութեանով զբաղած: Քիչ ետք, երբ բարեկամս հեռացավ, ու ես կմտածեի հանրակառք նստիլ, քովի խումբեն աղջիկ մը զատվեցաւ ու ինծի մոտենալով ամենալն ազատութեամբ՝

— Ընկեր, անգլերեն լա՛վ իմանո՞ւմ եք, — հարցուց:

Ըսի թե բավականաչափ գիտեի, ու երբ խնդրեց որ օգնեմ իրեն իր դասին պատրաստութեան համար, բնական է, շմերժեցի:

Կարճ ու պարզ դաս մըն էր: Ընթերցում ու թարգմանութեան մանկական նյութի մը, որ օտար լեզու ըլլալեն դուրս ոչ մեկ շահեկանութեան կը ներկայացներ:

Դասի ընթացքին, մեջընդմեջ հարցուց թե ուրկե՞ս եւ երբ եկած էի, թե ի՞նչ կընեի, ի՞նչ ծրագիրներ ունեի ապագային համար: Սմենեն հետաքրքրական հարցումը սակայն այն եղավ, երբ հարցուց թե ինչպէս գտեր էի Հայաստանը:

Գլուխս գիրքին վրային վերցուցի ու իր աչքերուն մեջ նայելով՝

—Այո,—ըսի,—ես Հայաստանը գտա, հակառակ որ զայն կորսնցուցած չէի բնավ: Անոր հետ եղած էի միշտ, զայն պահած էի սիրտիս վրա, միտքիս մեջ: Գործերուս ընթացքին ինձի ուղղութիւնն տվողը ան եղած էր: Այո, ես գտա Հայաստանը: Հարյուրավոր տարիներ առաջ պապերս կորսնցուցին զայն ու ես գտա: Կորսնցուցին զայն նշուխապես, իբր հող իրեն ոտքին տակ, իբր ժողովուրդ իրենց շուրջ, իբր տուն պատսպարվելիք, բայց պահեցին զայն իբր պատնեշ անկումներու դիմաց, իբր անցյալի քաղցր հուշ, իբր ապագայի հաստատ հուշ:

Ես գտա Հայաստանը բոլոր այն բաներուն մեջ որ անոնք կորսնցուցեր էին, քանի գտա Արարատը իմ դիմացս ամեն որ, քանի գտա Երևանը գեղեցիկ, գեղեցկացող, հասունցող մայրաքաղաքը մեր հայրենիքին:

«Ես Հայաստանը գտնելի տվելի վերահաստատեցի: Միտքիս մեջ, երևակայութեանս մեջ իբր պատկեր տարիներ շարունակ հետս պտտցնելե ետք, հիմա իր տեղը վերականգնեցի: Արարատը ազգային պատմութեան կամ աշխարհագրութեան գիրքի էջին վրա գտնվող պատկեր մը չէ այլևս. զայն դրի իր տեղը, իմ դիմացս, Երևանի դիմացը, համիտեանական հսկողի իր համառ գերին մեջ:

«Ես դադրեցա Երևանը միայն մեջս ունենալի, զայն կրելե ալլ ես ինքս մտա Երևանի մեջ, անով սկսա ապրիլ. անոր մեջ սկսա ապրիլ»:

Կարծես պատրաստված այս ճառս, թերևս տարօրինակ թվեցավ ընկերուհիին, քանի որ իր հարցումը ոչ մեկ հետին միտք ունեւ իր մեջ, ոչ մեկ մասնավոր իմաստ: Ան ժպտեցավ իր սե աչքերուն քաղցր ժպիտովը ու պարզ աղջկի իր բոլոր հմայքով:

—Ոչինչ,—ըտավ,—քանի այլևս հոս ես, ալ պետք չունիս երազներու մեջ ապրելի: Իրական Հայաստանը, ապրող Հայաստանը, վերականգնած հայրենիքն է շուրջդ, քու դիմացդ: Կտեսնե՞ս, որքան սկսված ու ավարտելիք գործեր կան, որքան մեծ ծրագիրներ կան իրագործելիք: Քանի հոս ես, ալ

քու սխառտականութեանդ մեջ կմտնե հոգալ զայն, գուրգու-
րալ անոր վրա և պաշտպանել իհարկին:

Պաշտպանել...

Այդ մասին շատ էինք խոսեր երկրեն դուրս, արտասահ-
մանի մեջ. շատ խոսեր էինք, բայց չէինք հասկցեր թե ի՞նչ
կնշանակեր այդ իրապես: Հիմա կարելի է զգալ ամբողջ
պատասխանատվութիւնը բառին, հասկնալ ամբողջ իմաս-
տը անոր: Եւ այդ բառին վրա կեցաւ խոսակիցս: Դեմքին
վրայեն հոսանք մը անցաւ, ճակատը կնճռոտեցաւ ու փայ-
լուն աչքերը մթադնեցան կարծես:

Ես իրեն ըսելիք չգտա: Ի՞նչ կրնայի ըսել: Զեռքիս գիր-
քը դոցեցի ու ետ բացի, իսկ ինք ահռաներով շրթները
կսեղմեր ուժգնորեն:

—Երկու եղբայրներս լաւ պաշտպանեցին հայրենիքը,—
ըսաւ,—իբեկնց կյանքովը, իրենց երիտասարդ, ապագայի
ծրագիրներով լեցուն կյանքովը: Անոնք շվերադարձան: Պըզ-
տիկը Կովկասի մեջ ինկաւ, թշնամին մեր հողերուն շհասց-
նելու ճիգին մեջ, անոր հառաջխաղացքը կասեցուցած պա-
հուն: Իսկ մեծը, մեր հողերեն, մեր սովետական հայրենի-
քին հողերեն դուրս, հաղթանակի ճամփուն վրա, ուրիշ ժո-
ղովուրդներու ազատութիւն ու երջանկութիւն բերելու
ճամփուն վրա, Բրակայի մոտերը ինկաւ:

Կռութիւն մը իջաւ մեր երկուքին միջև: Ինք զիս չէր
տեսներ այլևս կարծես, մինչ ես կաշխատեի նույնանալ իր
մտածումին հետ, հասկնալ ապրումը, զգացումը որ իր
րսածներուն, ու մանավանդ շրտած բառերուն ետեւ կար:
Աչքերուն մեջ արցունքի կաթիլ մը պտտեցաւ բայց վար չի-
ջաւ: Ճիգով մը ան կեցուց զայն: Փորձեց ժպտիլ, շրթունքի
անհաջող ծամածռումով մը որ արդէնք չտաւ սկիզբը:
Ավելի ուշ միայն ան գտաւ ինքզինք:

—Այնքան հուզումի պետք չկար թեև,—ըսաւ,—բայց ինչ
ընենք որ մարդ զորավոր չըլլար միշտ. տկարութեան վայր-
կյաններ կան որոնց անմիջապես հաղթել կարելի չէ:

Զքմեղանքի պետք չկար, քանի որ մեղավոր չէր ինք:

Եթե կար մեղավոր մը, նույնիսկ առանց իր գիտնալու, անիկա մենք էինք, ես, ու ինձի պես ուշացողները: Մարդեր, որոնք փոթորիկեն հտք միայն հասեր էին:

Մտածելու այս ձևը նոր չէր: Տակավին դուրսը եղած միջոցին ալ շատ խոսեր էինք արժանի կերպով հայրենիք մտնելու մասին, պատասխանել կարենալու մասին այն խոշոր հարցումին որ պիտի դրվեր մեղմե յուրաքանչյուրին առջև: Ու հիմա, կղրվեր արդեն ամեն մեկ մոր ու քրոջ կողմե, եղբոր ու հոր կողմե, որոնց հարազատները մեկնած էին ու հաղթանակը դրկած, բայց իրենք չէին վերադարձած: Այս հարցումը հրաշեկ երկաթի պես կուղղվեր մեր ճակատին.

— Դուն ի՞նչ ըրիր այն ատեն, երբ մենք ամեն բան կրնեինք:

Ընկերուհին արդեն գտած էր իր բնական վիճակը: Անիկա ժպտեցավ նույնիսկ իր գեղեցիկ ժպիտով որ դինք ավելի կգեղեցկացներ:

— Ոչինչ, — ըսավ, — երբ եղբայրներ կորսնցուցի, նոր եղբայրներ գտա, որոնք պիտի շարունակեն մեր երկրին վերելքի գործը: Պայքարի մեջ իրարմե բաժնված պիտի շրջանք չէ՞:

Իրեն նայեցա, իր աչքերուն մեջ, ուր հավատք ու վրաստահոլթյուն կար, ու թեև իր հարցումը պատասխանի չէր սպասեր, պետք չէր սպասեր, ըսի իրեն.

— Մենք որ եկանք զանազան երկիրներե և ուրիշ շատ ուրիշներ, բոլորը որ պիտի դառն, միայն այդ նպատակը ունենալով պիտի իրենց ոտքը հայրենի հողին վրա դնեն: Բոլորն ալ մեկ տենչ ունին, մեկ երազ. այլևս վերջ դնել օտարականի իրենց կյանքին որ ոչ մեկ փայլ կներկայացնե, քանի որ միշտ առժամյա եղած է մեր կյանքը մեր ապրած երկիրներուն մեջ, քանի որ չենք կրցած ըսել բնավ, հակառակ մեր սեփական տունին մեջ ըլլալուն: Ես հոս եմ, իմ հողիս վրա, ու ոչ ոք կրնա զիս դուրս հանել ասկե: Մեր հասցեն միշտ առժամյա եղած է, միշտ փոխած ենք երկիրն

ու քաղաքը, թաղն ու տունը: Կիլիկիա ենք եղած, Հունաստան ու Սուրիա գացեր ենք, անկե Ֆրանսա, Ամերիկա, Հարավային Ամերիկա, Ավստրալիա:

«Միշտ անկայուն եղած ենք. միշտ փնտրած ենք ավելի լավը ու շենք գտած, քանի որ լավը թողած ենք մեր ետև, մեր հողին վրա: Այս փնտրտուքին հոգնութենեն իմաստացած, խորհած, մտածած, եզրակացուցած, ի վերջո համոզված ենք որ լավը գտնելու, մեր երազած կյանքը գտնելու այս ճիգը իզուր է, քանի որ սխալ ուղղությամբ կհառաջանա ան, քանի որ ուղղություն չունի:

«Ու ամեն անգամ որ շեշտակիորեն զգացած ենք մեր սխալը, մեր նաշվածքը դարձուցեր ենք դեպի մայր հողը, դեպի մեր երկիրը, ուրկե հեռացեր ենք ակամա, հարյուրավոր տարիներ առաջ:

«Հիմա մեր հողին վրա ենք: Որոշած ենք ուրիշ հասցե չունենալ այլևս: Հասած ենք մեր վերջին բնակավայրին, վերջին հանգրվանին, մեր վերջին հասցեին: Մենք մեր...

Եվ դեռ երկար պիտի խոսեի այդպես, առանց իրապես դիտնալու թե ո՞ր կառաջնորդեին միտքերըս զիս, ձեռվ մը ես զիս մոռցեր էի կարծես, ելած էի ես ինձմե դուրս, ու նույնացած մարդերու ամբողջ խումբի մը գաղափարներուն, մտածումներուն, կյանքին հետ:

Կարելի էր խոսիլ, պատմել ժամերով, այնքան լեցված էի ես ըսելիքներով, ու մանավանդ այնքան սպասած էի զանոնք ըսելու: Բայց ընկերը արդեն հարմար նկատեց կեցնել զիս միտքերու այդ զառիթափին վրա, ու մեղմությամբ, անդերենի գիրքը ձեռքիս սեղմելով.

— Անգամ մըն ալ կկարդա՞ք, ընկեր, — ըսավ, — հնչումներուն պեսք է լավ ուշադրություն ընեմ:

Անակնկալի եկած, իրեն ու գիրքին նայեցա զարմացած: Հետո, դանդաղորեն, գիրքը ձեռքս առնելով, մանկական առոգանությամբ, յուրաքանչյուր բառ հստակորեն շեշտելով, կարդացի իրեն:

Յ Բ Ե Բ

Գործարանի մեծ դռուն խմբով դուրս ելած մարդերը լայն առֆալտ ճանապարհին վրա կիսվեցան:

Մարտիկ բարձրացավ վերև, քաղաքին կեդրոնական մասերը առաջնորդող կողմը. հակառակ աճապարհուն, հանրակառքի կանգառին դիմաց շեցավ, կռչեր ժամ առաջ տուն հասնիլ ու պատմել բոլոր եղածը, բոլոր եղածները, իսկ հանրակառքը սպասելու համար համբերություն էր պետք: Ան շարունակեց քալել, շարժելով գլուխը մտածումին ու ձեռքի պայուսակին հետ. խոսելով ներքին մարդուն հետ, ու գինք կանչող ընկերներուն ձայները իրեն թվեցան հեռավոր, ուրիշին վերաբերող, իրեն համար օտար, անհասկանալի աղաղակներ:

Հալաքվել էին բոլորը: Կռեկաթիվի ընդհանուր ժողով էր: Հոն էր գործարանին դիրեկտորը, ընկեր Բարսեղյանը, հոն էր պահակ Գևորգը: Ամեն ինչ բնական էր: Կխոսեին երկրին կարիքներուն մասին, կառավարութեան ու կուսակցութեան պահանջներուն ու գործարանին կարելիութիւններուն մասին:

Ըստ երևույթին սովորական ժողով մըն էր Մարտիկին համար, նման ուրիշ ժողովներու որոնց ներկա եղած էր, այդ գործարանին մեջ իր աշխատանքի սկսելու կարճ ժամանակէն ի վեր: Ու Մարտիկ կլսեր բոլոր ըսվածները, աշխատանքին հոգնած ուղեղով: Ժամանակ եկավ նույնիսկ երբ

իր մտածումները դինք հտ տարին: Հիշողությամբ անցավ անջրպետը ու գնաց այն երկիրը ուր անցուցեր էր մեծ մասը իր երիտասարդ լավագույն տարիներուն: Չէ, այսպիսի ժողովներ իհարկե չկային հոն: Ժողովներ անշուշտ կային, բայց դիրեկտորը ի՞նչ գործ ուներ հոն, պահակ Գևորգի կողքին մանավանդ: Հետո, իրենց ի՞նչ գործն էր որ մտածելն գործարանին արտադրությունը ավելացնելու մասին, պետութեանը օժանդակելու մասին: Ընդհակառակը, որքան արտադրությունը ավելանար, այնքան վտանգ կսպառնար իրենցմե շատերուն գործե հանվելու: Այո, ժողովներ կային հոն, բայց ոչ այսպես հանդարտ, ընկերական, խանդավառ, այլ բուռն, հայհոյանքներով, ուրիշ մարդերու հանդեպ թշնամական զգացմունքով, ատելությամբ լեցուն:

Տարօրինակ աղմուկ մը Մարտիկը ժողովասրահ վերադարձուց: Զանազան տեղերե իր անունը կը պոռային, ու իրեն նայելով կը ծափահարեին շարունակ: Բեմին վրա դիրեկտորի տեղակալը կար որ նույնպես կը ծափահարեր, աչքերը իր վրան: Արյունը խփեց իր երեսին, ու զարմացած, անզգալաբար ոտքի ելած, ան նայեցավ բոլորին ու բեմին:

Ըստ երևույթին, դիրեկտորի տեղակալը զգաց Մարտիկին շվարումը ու անոր օգնութեան դալու համար, դիմեց իրեն.

— Ընկեր Գարանյան, խնդրեմ բեմ հրամմեցեք:

Ու երբ Մարտիկ շարքերու մեջն անցնելով հասավ բեմ, ան շարունակեց.

— Ընկեր Գարանյան, գործերի արդյունքների քննման ժամանակ երևան եկավ որ դուք ձեր պարկեշտ ու համառ աշխատանքով, ի հայտ եկաք որպես ստախանովական գերակատարելով ձեր պլանը երկու հարյուր ութսուն տոկոսով: Մենք շնորհավորում ենք ձեր հաջողութիւնը:


Մարտիկ իր շվարած դեմքը դարձուց դիրեկտորի տեղակալին ու նայեցավ սրահին, իրեն նայող բոլոր աչքե-

որուն: Մափերու տարափը որ սկսած էր նորեն, դադրեցով
ու լռությունը սպասեց իր ձայնին:

— Շնորհակալություն, ընկերներ, — սկսավ ան, — ես շատ
երջանիկ եմ ինծի հանդեպ ցույց տրված պատիւին համար.
Ես եմ... ես կը հիշեմ... ես կը խոստանամ...

Չկրցավ շարունակել: Ներկայի դեպքն ու անցյալի հի-
շողությունները, ապագայի իր հավատքին հետ իրար մեջ
անցան ու խանդարեցին իր մտածումները:

Մափերը օգնության եկան իրեն սակայն ու իրեն եր-
կարած բազմաթիւ ձեռքերը ուժով ու անկեղծությամբ
շնորհավորեցին զինք:



Երբ ոչ մեկ ականարի մնաց իրան ուղղված ու փողոցին
մեջ մնաց մինակ, ընկերներեն բաժնվելեն ետք, միտքերը
հստակացան շուտով: Իր քայլերն իսկ թեթեւ էին կարծես, —
օրվան աշխատանքին հոգնությունը չքացեր էր իր վրայեն:
արագ տուն կերթար ան, պատմելու անհամբեր մարդու
փութկոտությամբ, իր երջանկության իր սիրելիներն ալ
մասնակից ընելու աճապարանքով: Ու հանկարծ հիշեց դե-
պի տուն ուրիշ վերադարձ մը: Որքան ուզեց հեռացնել այդ
հուշը, բայց ան համառեցավ, պարտադրեց ինքզինք:

Սակայն կարծես այդ ինք չէր, այլ ուրիշ մը: Ուրիշ մը
որուն դեմքը կը նմաներ իրեն, որուն մարմնին ձևերը ու
ձայնը նման էր իրեն, բայց որ ինքը չէր:

Երեք օրվա բացակայութենէ մը ետք տուն կը դառնար
ան: Երեք օր առաջ էր, երբ դորժարանին տերը կանչեց իր
դրասենյակը: Դիրեկտորն ալ հոն էր որ ժպտաց իրեն իմաս-
տալից ժպիտով ու դառնալով տիրոջ, ըսավ ֆրանսերէն.

— Սա է վարպետ Մարտիկը: Եթե սա չկարողանա սար-
քել, կը նշանակե՛ կարելի չէ:

«Կարելի չէ» խոսքին վրա դորժարանատիրոջ դեմքը
թթվեցավ: Ան աչքով շափեց վարպետը, որ շվարած կեցած էր

սենյակին մեջտեղը շիմանալով ինչ ընել, ու կարծես անոր գոյութիւնը մոռնալով շարունակեց.

— Բայց գիտե՞ք թե ինչ կնշանակե ինձ համար «կարելի չէ»-ն: Բացի գործարանիս անվանարկութեն, գիտե՞ք թե ինչ մեծ նյութական կորուստի պատճառ պիտի դառնա, եթե չկարողանա:

— Իսկ եթե կարենա՞...

— Եթե կարենա, եթե կարենա, հիանալի պիտի ըլլա, հիանալի, — կրկնեց եռանդով գործարանատերը: — Անգլիական բանակին ինժեներները, միացած տեղացիներուն հետ, չկարողացան աշխատցնել մեքենան: Գիտե՞ք, երեկ նավահանգիստի հրամանատարը զիս իր քով կանչեց ու ըսավ թե, դինին մասին չեմ ուզեր խոսիլ անգամ: Պատրաստ են վճարելու ինչ գումար որ պահանջենք, միայն թե կարենանք շուտ սարքել:

Մարտիկ ֆրանսերեն կը հասկնար: Թեև դպրոցական մեծ ուսում չունէր, բայց ինքնաշխատությամբ, իր արհեստին որակը բարձրացնելու հետամուտ, սորված էր այդ լեզուն, որով կօգտւէր մասնագիտական գրականութենէ: Ան հետաքրքրությամբ կը հետեւեր երկու մեծավորներուն խոսակցութեան, առանց բացորոշ նշանի թե համարյա ամեն ինչ կը հասկնար:

Դիրեկտորը դարձավ իրեն, ու արաբերենով բացատրեց գործին էութիւնը: Որ նավահանգիստին մեջ ավրված ընդծովյա մը կար զոր պետք էր նորոգել: Շատ դժվար գործ չէր: Շատ վարպետներ կրնային սարքել զայն, բայց որ զինչ նախընտրած էին, որովհետեւ կը սիրէին զինք, որովհետեւ բազմաթիւ զավակներու տեր էր:

Շրթներուն անկյունը հետաքրքիր ժպիտով մը, Մարտիկ լսեց այս բոլորը: Երբ կը պատրաստվէր դուրս գալ, գործարանատերը պոռաց ետեւն անհամբեր.

— Աշխատիր անպայման շուտ վերջացնել: Եթե հաջողիս

քեզ ու ընտանիքդ կուրախացնեմ: Ես իմ խոսքիս տերն եմ
միշտ. դուն անհոգ եղիր այդ մասին:

Մարտիկը հիշեց թե աշխատանքային ինչ օրեր էին
անոնք: Ընդժովյայի ներքևի մասին մեջ, խոնավությամբ ու
զանազան տեսակի հոտերով շրջապատված, ան փարեցավ
դործին: Սկիզբը դժվարությամբ կաշխատեր. մեծավորին
աչքին գեշ շերենալու ու ստանալիք նվերին դադափարը
զինք կստիպեին շթուլնալ: Հետո սակայն գործը գրավեց
զինք: Ու արգելքը որ դրված էր իր վրան, շալարտած դուրս
չգալու արգելքը, ոչ մեկ նշանակութուն ստացավ իր աչքին:
Գործին դժվարությունը, համարյա անկարելիությունը, գրա-
վեց զինք: Ու որոշեց հաղթել անոր: Մոռցավ հանգիստի
ժամ ու քուն, մոռցավ դուրսի աշխարհ, մոռցավ ամեն ինչ,
նույնիսկ խոստումը գործարանատիրոջ: Պետք էր ինք հա-
ջողեր հոն, ուր ուրիշներ, անոնք, որոնք միջոցների ունեցել
էին ավելի մասնագիտական բարձր կրթություն ստանալու,
ձախողել էին:

— Պետք է հաջողիմ, պետք է հաջողիմ, — կը կրկնել
ձայն մը իր մեջ, — ուրիշ կերպ կարելի չէ:

Բոլորը հոն էին երբ Մարտիկ աշխատեցուց մեքենան:
Հսկա անիվները անոր ձեռքին հրամաններուն հնազանդ,
դարձան կանոնավոր, զորեղ, հաճելի աղմուկով:

Բոլորը հոն էին: Բարձրաստիճան բազմաթիվ սպաներ,
մասնագետներ, գործարանատերը ու դիրեկտորը: Անկյունը
կեցած, Մարտիկ կը նայեր մեքենային բարդ աշխատանքին,
ու շրթներուն անկյունը կը ժպտեր հետաքրքիր ծամածռու-
մով:

Մասնագետ ինժեներները քննեցին ամեն ինչ, ու երբ
այլևս վստահ եղան թե կատարյալ էր ամեն ինչ, բոլորը մեկ
սկսան շնորհավորել գործարանատերը, դիրեկտորը...

Հետո բարձրացան վերև: Գային նավահանգիստի հրա-
մանատարին գրասենյակը: Մասնավոր սեղան կար պատ-
րաստված հոն: Դուրս ելնելու միջոցին գործարանատերը
ձեռքը իր ծոցի գրպանը տարավ ու պայմանագիրի թուղթը
զատեց ուրիշ բազմաթիվ թուղթերեն: Վերջին րոպեին ան
նայեցավ Մարտիկին, որ տակավին կը ժպտեր անկյունը, ու
քովեն անցնելու պահուն, թուղթի կտոր մը սեղմեց անոր
տակին մեջ:

Մարտիկ քալեց նավահանգիստէն բարձրացող զառիվե-
րը, ու սեղմած ափը գրպանին մեջ, առանց նայելու մարդե-
րուն, առանց նստելու հանրակառքերէն որեւէ մեկուն, դան-
դաղ, հոգնած դեպի տուն գնաց:

Շատ ետքն էր միայն, երբ իրենց թաղամասին փողոց-
ներուն հասավ, էլեկտրական լապտերի մը սյունին կռթնե-
լով, սեղմած ափը դուրս հանեց գրպանէն:

Ու աչքերը մնացին զարմացած, բաց, երբ ան բացավ
իւր ափը:

Կարծես պարպված, կարծես ոչինչի մասին մտածելով,
շքմած, ան շարունակեց ճամփան: Չլսեց իրեն բարևող թա-
ղեցիները: Չտեսավ մարդերը որ տուն կը փութային դա-
տարկ կամ լեցուն ձեռներով: Չայն մը միայն եկավ ական-
ջին, սուր, տհաճ, ջղայնացնող ձայն մը, ու գործարանատի-
րոջ գրասենյակը պատկերացավ աչքերուն առջև:

— Ես իմ խոսքին տերն եմ միշտ, դուն անհոգ եղիր
այդ մասին...



— Բարի երեկո, վարպետ Մարտիկ, — ըսավ ծանոթ ձայն
մը ու Մարտիկ զարմանքով նայեցավ անոր:

Ի՞նչ տանտերն էր, ան որ սենյակ էր տրամադրեր իրեն,
որ բարի աչքով կը ժպտեր:

— Հայրիկ, — պոռացին ձայներ, ու զանազան հասակի երեխաներ փաթթվեցան իրեն, — հայրիկ, պատկերդ թերթին մեջ դրեր են, քեզ գովեր են...

Մարտիկ անակնկալի եկավ, շրթներուն անկյունը հետաքրքիր ծամածռեց, ու բացված ափին նայելով, գոցեց զայն: Զարմացած աչքերով ան նայեցավ իր փոքրիկ աղջկան իրեն երկարած թերթի վրայի նկարին, ու շրթները դողացին:

Ժպիտը դեմքին, տակավին երիտասարդ կինը դառն առջև դիմավորեց իրար գրկած խուճբը, ու իր ամուսինին ուսը բռնելով.

— Երջանիկ ես, չէ՞, Մարտիկ, — ըսավ:

Մարտիկ ժպտաց: Ան սեղմեց իր ուսին վրայի ձեռքը մտերիմ ճնշումով՝ ու ներս անցավ:

Տոնական էր ճաշի ընթացքին: Ուրախության բացառիկ սեղան: Թեև անոնք չկրցան իրարու բացատրել այն, ինչ որ դգացած էին իրարմե հեռու: Մարտիկ՝ ժողովի ժամանակ ու անկե հետո երբ տուն կշտապեր պատմելու, ուրախութենեն քիչ մը պարպվելու, անոր իր ընտանիքն ալ մասնակից դարձնելու համար. իսկ տան անդամները՝ իրենց հոր պատկերով թերթը ձեռքերնին, անով հպարտ, կսպասեին հայրիկին վերադարձին որ անակնկալ ընեն անոր:

— Զավակներս, — սկսավ Մարտիկ մեկեն, ժպտող նայվածքը դարձնելով բոլորին, — այսօր ես շատ ուրախ եմ, այնպես ուրախ եմ, որ չեմ կրնար ըսել ձեզի... Այսօր գործարանին մեջ բոլորը ծափահարեցին զիս, որովհետև լավ եմ աշխատած... այսօր բոլորը ըսին ինձի թե ես արժանի եմ ստախանովական կոչվելու... Այսօր թերթին մեջ գրած են իմ անունը, ու ինձ գոված... բայց գիտե՞ք, գիտե՞ք, ես միշտ եմ լավ աշխատած, ես միշտ եմ աշխատած... դուք ալ երբ մեծնաք, երբ ինձի շափ...

Մարտիկ չկրցավ շարունակել: Ժպիտը, երջանկությունը

սեղմեցին իր կոկորդը ու արցունքի կաթիլներ իջան սյուե-
րեն վար: Ուրախության արցունքներ կհոսեին բոլորին աչքե-
րեն:

Ու թեև կերակուրը կը սառեր սեղանին վրա, բոլորը
հավաքվեցան հայրիկին շուրջ ու գրկեցին զինք ու ժգնորեն,
ու ժգնորեն:

Օգոստոս 1947. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լեցուն օրեր	3
Աղջիկի մը օրագիրը	8
Անակնկալ հանդիպում	12
Փողոցին կանցնինք	17
Սովորական պատմություն մը	22
Սիրահար բարեկամ	25
Ավարտած նկար	30
Երկու սեր	42
Բոլոր քառուղիներն	56
Հակառակ այդ բոլորին	66
Այդ տունը մերը չէր արդեն	72
Մեծ ճանապարհի վրա	80
Վերջին հասցեն՝ Երևանն է	91
Օրեր	96

Պատ. խմբագիր ՀՐ. ԲՈԶԱՐ

Տեխ. խմբագիր Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՎՖ 09088 Պատգուր 501, Տիրած 4000,

Տպագր. 6 1/2 մամուլ, հեղ. 3 1/3 մամուլ,

Հանձնված է տպագր. 11/XI 1947 թ.,

Ստորագրվ. է տպ. 30/I 1948 թ.,

ՀՅՍՌ Մ. Սովետին կից

Պոլիգր. և Հրատ. Վարչ.

№ 3 տպարան, Ալա-

վերդյան № 66,

Երևան, 1948 թ.



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0649400

(604)

67

р. Юмартыне.
1948. III. 18.
Самойлов.

4000

3067